

Ճ-Ը. աշբ. 122-535

Հ. ՄՈՒՐՈՂՅԱՆ

# ԽԱԶԱՏՈՒԹ ԱԲՈՎՅԱՆ

ՕՊՐԻԳ. Ա.՝ 1939

## ՀՐԱՅՐ ՄՈՒԲԱԴՅԱՆ

891.99.092 [Чтвртък]

U.S. 99

ԱՏՈՒԳՎԱԾ է 1981 թ.

# ԻԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

~~23474 A~~ ~~31515~~



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի 20-ականն թվականները հայ ժողովրդի կյանքում նշանավոր դարձան մի խոշոր փաստով: Հայաստանն անցավ սուսական միապետության տիրապետության տակ:

Մինչ այդ պարսիկ և տաճիկ վայրագ նվաճողներն ավազակային հրոսակախմբերով անընդհատ տվերում եյին և ավարի յենթարկում Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, բնաջնջում ազգաբնակությունը: Այդ յերկու բոհակալ ուժերի արանքում արորվող ժողովուրդը հաճախ ինքնապաշտպանության զենք եր վերցնում, ասկայն ընկճվում եր հակառակորդի գերազանց ուժից և հետզհետե կորցնում իր զորությունը: Ժողովրդի իշխող խավերը, ազայությունն ու բարձրաստիճան հոգևորականությունը, կամա թե տկամա հաշարում եյին ստեղծված դրության հետ, աշխատում իրենց շահերով հարմարվել ոտար նվաճողներին:

Քաղաքական և տնտեսական ստրկության այս պայմաններում խոսք անդամ չեր կարող լինել ժողովրդի կուլտուրական կարիքների և զբանց բավարարություն տալու մասին, քանի վորվանդակած եր նրա թե կյանքը, թե ոլատիվը և թե գույքը:

Այսպիսի անմիթար պատկեր եր ներկայացնում Հայաստանը մինչեվ 19-րդ դարի 20-ականն թվականները:

Հայերը վազուց ի վեր իրենց փրկությունն սպասում եյին Ռուսաստանից: Ժողովրդի վիճակով մտահոգված մարդիկ այդ նպատակով բանակցություններ են վարել գեսես Պետրոս I-ի և Յեկատերինա Ա-րդի հետ:

Ժողովրդի հույսերը նորից վերակենդանացան, յերբ 1801 թվին Վրաստանն ընդունեց սուսական տիրապետությունը, ուշը բանով մեկ ընդմիշտ ապահովելով յերկերը ուղարսիկ և տաճիկ խաների ասպատակություններից: Ռուսական տիրապետության առակ անցնելը հայերի համար ևս որվա խողիր դարձավ:

Սկզեց սուս-պարսկական պատերազմը, վորի ընթացքում հայերը մեծ աջակցություն ցույց տվին սուսական բանակին:

Ամենուրեք նրանք գրկաբաց եյին դիմավորում ոռուներին իրեկ իրենց ազատաբարների: Հայկական զրուժինաները, վոր պատերազմի ընթացքում կաղմակերպվում եյին այլ և այլ գավառներում, զգալիորեն զորացնում եյին սուսական բանակի ուժը: Ռուսական հզոր բանակի և հայ ժողովրդի միահամուռ ջանքերով 1827 թվին տապալից Յերեվանի խանությունը և Հայաստանում հաստատվեց ոռուսական տիրապետություն:

Այսպես սկսվեց հայ ժողովրդի քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացման նոր շրջանը:

Ռուսական տիրապետության ներքո ստեղծված համեմատաբար նպաստավոր հանդամանքների շնորհիվ հայերի կյանքում սկիզբ և առնում կուլտուրա-լուսավորական մի շարժում: Հոգեվորականության շրջանում հանդես են գալիս մարդիկը վորոնք աշխարհայացքով պառակավելով իրենց գասից, կրոնավորի սքեմի մեջ գործում են իրեկ ժողովրդի բարեկամ, լուսավորության և գիտության ջառագով: Այսպես հանգես յեկան հախարսովյանական շրջանի յերկու նշանավոր հեղինակ՝ հայ լուսավորական շարժման նախակարապետներ Ալամդարյանը և Թաղիազյանը: Սրանք, իրեկ անցման շրջանի բանաստեղծներ, տարբերվելով հսի և նորի միջներ՝ հիմնականում հանդիսացան ժողովրդական վոգու արտահայտիչներ և հող պատրաստեցին Սրովյանի համար, վորն իր հերթին հանդես գալով գործունելության ընդարձակ ծրագրով, նախապատրաստեց մի ամբողջ շարժում, վոր լայն ծավալ ու թափ ստացավ 50—60-ական թվականներին:

Սկսվեց մի համառ ու գելարին կոխվ ընդդեմ խավարի՝ հանուն լուսավորության: Եջմիածինը կատաղի գիմազդություն եր ցույց տալիս հայ լուսավորիչներին: Լուսամիտ և ժողովրդի վիճակով ու կյանքով մահանողված մարդիկ Եջմիածնում դիտվում եյին իրեկ կատածելիներ և հետապնդվում եյին: Մերոնց Թաղիազյանը, վոր իրեկ Յերեվանի ծնունդ քաջ ծանոթ եր ժողովրդի հոգսերին ու կարիքներին և մասհողված եր նրա վիճակով, Եջմիածնում չարաչար հալածվում և, Թաղիազյանի պայքարի գենքը խավարի այդ քուրմերի գեմ իր թունավոր յերգիծանքն եր: Վեհաբանում տեսնելով թքամանը թանաքամանի փոխված, նա խորապես վրդովվում և:

Դա մի ակնառու փաստ եր այնուեղ իշխող վայրենության:  
Այդ առթիվ և զրված նրա նշանավոր յերպիծական քառյակը՝  
«Թքաման-թանաքամանի» մասին.

«Յերբ թքաման թանաքաման  
Դարձյալ տեսեր հույս Վեհարան,  
Զի՞նչ այլ քեզ հույս հաջողության  
Կալնուս ասուս, Մեսրոպ Դավթյան»:

Յեվ իրոք, Թաղիադյանը խափանված տեսնելով իր լուսավորական ծրագրերը՝ նեռանում և Եջմիածնից:

Հարկավ Թաղիադյանը ընկճվեց Եջմիածնում կրած անհաջողությունից: Նու իր վողջ կյանքի և բազմամյա արդյունավոր գործունեցության ընթացքում թե՛ իրբեկ բանաստեղծ ու վիպասան և թե՛ իրբեկ հրապարակախոս ու մանկավարժ քայլ առքայլ հաւատեվեց իր գաղափարների կենսագործման, մնալով հավատարիմ իր գագանանքին:

Նույնքան հարուստ և ու բեղմնավոր հարությունն Ալամդարյանի գործունեցությունն իրբեկ բանաստեղծի ու մանկավարժի: Սակայն վոչ Ալամդարյանը և վոչ ել Թաղիադյանը չգտան այն բանալին, վորով հոգեվորականությունը յոթ կողմեքով փակել եր ժողովրդի առաջ լուսավորության և գիտության գոնիքը: Այդ բանալին լեզուն՝ եր, վոր հանգիստանում եր ամենակարեվոր գործուներից մեկը ժողովրդի լուսավորության հարցում: Այս ըմբռնեց Արտվյանը: Նա հասկացավ, վոր ժողովրդի միաքը ոլիսի բացվի ժողովրդի իսկ լեզվավ: Յեվ այդ հրաշագործ բանալին Արտվյանի ձեռքում պատմական անհամելնթաց դեր կատարեց: Աշխարհաբարի հաղթանակով առաջ զնաց և ապահովեց հայ ժողովրդի լուսավորության գործի հաղթանակը:

Գրականության զուգահեռ առաջ եր զնում նաև ուսումնական գործը: Վաղուց արդեն գործում եյին Մոսկվայի Լազարյան ճեմարանը և Թբիլիսիի Ներսիսյան դպրոցը: Ծայր եր առել աշակերտների և ուսանողների մի հոսանք դեպի Մոսկվա, Դոբռպատ և այլ վայրեր: Զարդվել եր մեր կյանքի անշարժության սառույցը, սկսվել վերածնության գարնանամուտը:

## ԿՅԱՆՔԸ

Թե զիտուն, խելոք մարդիկ ինձ պայաբակեն, դու ել ինձ պահիք՝ սիրելի ազգ, չունեմ իմ ուզածս են ա, վար ժեզ ծառայիմ, ժե՞զ իմ կյանքս տամ, բանի շունչս թերանուան ա:

Խ. ԱԲՈՎՅԱՆ

19-րդ դարի 40-ական թվականներին հայ գրականության և կյանքի խավար հորիզոնում մի վաս արեվ ծագեց. այդ արեւը—մեր ժողովրդի առաջին լուսավորիչն եր, անմահ Խաչատուր Արովյանը: Արովյանով և ակսվում հայ գրականության և կուլտուրայի պատմության նոր շրջանը: Եջմիածինը, միջնադարականության այդ հայկական Բաստիլը, իր խավարի քուրմերով, անփարատելի մշուշով եր պատել ժողովրդի միաքը, անխորտակելի պատճենի պես կանգնել նրա առաջադրիմության ճանապարհին: Կրոնն իր մահարես թույնն եր տարածել ամենուրեք: Լեզուն, գրականությունը, գիտությունը, գպրոցը յեկեղեցու շահերի սպասարկուներն եյին:

Ով եր լինելու այն խիզախը, առասպելական այն կտրիճը, վոր այրվելով պիտի բերեր անշեշ հուրը, մի խավար ժողովուրդ լուսավորելու համար: Այդ կտրիճը դարձավ Խաչատուր Արովյանը:

Հեքիաթային Դանկոյի պես պատուիլով կուրծքը, Արովյանը հանեց իր հրաբորքոք սիրոը և լուսավորեց ժողովրդի առաջադրիմության ուղին: Պրոմեթեոսյան լույսն ու գիտությունը նա տվեց մեզ և նրան բաժին ընկան մարդկության մեծ բարեկամի ահավոր տանջանքները: Արովյանը վոչ միայն հայ մանուկների, այլ և ամբողջ հայ ժողովրդի առաջին կրթիչն ե, ուսուցիչը, դաստիարակը, լուսավորիչը: Նա վոչ միայն առաջինը մանուկների ձեռքը տվեց գերմանական հանճարեղ բանաստեղծներ՝ Գյոթեյի և Շիլլերի յերկերի գերմանական բնագրերը, այլ և առաջինը հայ ժողովրդին պարզեվեց այդ և ուրիշ հանճարների ազատասիրական, հումանիստական, լուսավորական վոգով ներշնո-

Հըված իր անման ստեղծագործությունները, դրանց թվում առաջին  
հերթին հոչակավոր «Վերք Հայաստանի» վեպը: Հայ կյանքի  
այդ խալարի թագավորության մեջ, հայ գրականության անմը-  
շակ գաշտում արմատավորվեց և փարթամորեն աճեց Արովյանի  
ստեղծագործության պաղարեր ծասր, վորից մեր ժողովուրդը  
առաջին անգամ քաղեց լույսի, գիտության և իմաստության պը-  
տուղը: Արովյանի ստեղծագործությունը հայ վերակենդանացող  
ժողովրդի առաջին շունչն եր, սթափման առաջին շարժումը:

Առաջին անգամ Արովյանի բերանով խոսեց հայ ժողովուր-  
դը, խոսեց պարզ, անկեղծ, սրտառուչ: Դարեր շարունակ ոտար  
բռնակալների ճիրաններում հօշոտված, նրանց յերկաթե կրունկ-  
ների տակ արորված ժողովուրդը, Արովյանի միջոցով բացեց  
իր սիրու, իր խոր վերքը և դարման պահանջեց: Արովյանի  
վերքը պարսիկ խաների բարբարոսություններից և կամայա-  
կանություններից բաղմից տուժած, սորկացած հայ ժողովրդի  
վերքն եր:

Արովյանի բերանով առաջին անգամ պարզ ու մեկին խոս-  
վեց ժողովրդի կարիքների, իրավունքների և նրա նկատմամբ  
ունեցած պարտավորությունների մասին: Նա հանդիսացավ այն  
մեծ ժողովրդասերը, վոր իր կյանքի նպատակը, իր բախտն ու  
յերջանկությունը կապեց ժողովրդի հետ, նրա գոյության, բախտի  
ու յերջանկության հետ: Ժողովրդի սիրով վառվեց և սպառվեց նրա  
մեծ սիրու: Արովյանն այն առաջին մտավորականն եր, վոր  
գուրս գալով ժողովրդի ծոցից և ստանալով յեվրոպական կրթու-  
թյուն, կենցաղով ու կուլտուրայով բարձրացավ նրանից, բայց  
չխորթացավ նրա վոգուն, միշտ մնաց նրա հարազատ զավակը:  
Նրա ստեղծագործության շունչն ու վոգին ժողովրդի ու հայրե-  
նիքի սերն ե, ջերմ ու սրտաբուխ մի սեր, վորը գյութիչ ներ-  
գործություն և ունենում ընթերցողի վրա: Արովյանը սիրահար-  
ված եր ժողովրդին: Նա մի սիրահար աշուղ եր, այրված վոչ թե  
իր յարի, այլ իր ժողովրդի սիրով: Նա իր մեծ ու լայն սիրով  
սիրել և ամբողջ մարդկությանը՝ առանց ցեղի և հավատի խըտ-  
րության: Արովյանը մեծ հումանիստ է: Նրա մեծ սրտին խորթ և  
յեղել սուտարատեցությունը, նա կովկասի ժողովրդներին՝ հայերին  
վրացիներին և թուրքերին մի ընտանիք և համարել, միենույն  
հողի ու ջրի ծնունդ, զոդված միենույն սովորություններով, հաս-  
կացողություններով ու շահերով:

Ապագասուր Աբովյանը ծնվել և Յերեվանից հինգ կիլոմետր  
հեռավորության վրա գտնվող Քանտաքես գյուղում, 1809 թվին\*):  
«Վերք Հայաստանի» վեպի մի ծանոթության մեջ, հեղինակն  
այսպիս է Նկարագրում իր ծննդավայրը. «Յերեվանուցը հինգ  
վերաս հեռու մեկ գեղ, հյուսիսային կողմն ընկած, տեղը բարձր,  
ջուրը քաղցր, ողբ գեղեցիկ չորս կողմը բազերով լիքը, մեջը յեր-  
կու հրաշալի յեկեղեցի, հաղար քյալավա ու այժմ հիսուն տուն  
կա: Ամառվան տեղը Յերեվանու խաների»:

Աբովյանների տունը Քանաքենի նշանավոր ընտանիքներից  
ե յեղել: Աբով պատվի, այդ առաքինի, ազնիվ մարդու հոչակը յեր-  
կար և ապրել համագյուղացիների մեջ:

Նրա հյուրախիբության և առատաձեւնության մասին հիաց-  
մունքով ու հպարտությամբ ե խոսել ինքը՝ վիպասանը: «Հա-

\* ) Աբովյանի ծննդյան թիվը նրա կյանքի բազմաթիվ առեղծվածներից  
մեկն է: Խիստ հակասական են մեզ հասած տեղեկություններն այդ մասին:  
Սակայն մեր կարծիքով ամենահավանականն այն է, վոր Աբովյանը ծնվել ե  
1809 թվին:

Պրոֆեսոր Գաբրոսի ասելով 1829 թվին Աբովյանը քսան տարեկան եր: :  
Աբովյանին Գորգառ ուղարկելու առթիվ յեղած նույն թիվ ըսլոր պաշտոնա-  
կան թղթերում նա համարվում է 20-ամյա պատանի: Նիկոլայ առաջնին  
ուղած 1829 թիվ նամակում Աբովյանն իրեն 20 տարեկան և համարում:  
Յերեվանի գավառական զպրոցի ցուցակ ծառարությունների տվյալները ևս  
1809 թիվ վրա յեն պնդում: Մասացած ավայաները, բացի մեկեց, ուր Աբով-  
յանն իր ծննդյան թիվը 1804—5 և համարում, մտանում են 1809-ին:

Հայտնի յե, վոր Աբովյանը և նազարյանն դասընկերներ եյին Ներսիս-  
յան զպրոցում: Յեթի ընդունենք այն ընդհանուրացած կարծիքը, թե Աբովյանը  
ծնվել ե 1804 թվին, ապա կտացվի, վոր նա մեծ է յեղել նազարյանից 10  
տարով (վերջինը Կաղանում հայտնաբերված ինքնակենսագրականի և ծննդա-  
կանի համաձայն նազարյանը ծնվել ե 1814 թվին), իսկ այդպիսի հակայական  
տարբերության պայմաններում նրանք ինչպես կարող եյին միենույն դասա-  
րներ աշակերտաներ լինել, յերբ յերկուսի ուսման ընթացքը ևս նորմալ ե  
յեղել: Հայտնի յե, վոր Աբովյանը սովորել սկսել է 9-10 տարեկանից, հա-  
վանաբար նազարյանը 3-4 տարի առաջ և սկսել իր ուսումը, վորով և բացա-  
տրվում է նրանց տարբերի այդ հնարավոր և նորմալ տարբերությունը:

Վերջավես գիտենք, վոր Ներսիսյան զպրոցում Աբովյանը և նազարյանը  
մտերիմ ընկերներ եյին, ինչ մտերմության կարգ եր լինել 11 տարեկան  
մանկան և 21 տարեկան պատանու միջեղ:

Հետեվաբար Աբովյանը ծնվել է 1809 թվին:

բիր տարի կըլի լուսահոգի Ապովը մեռել ա, ելի նրա վողորմին  
հա կա, հա կա: Թուրք ու Հայ նրա գերեզմանովն են որթում ու-  
տում: Ճամփի վրի մենծ իգու անունը Հնդաստան ա հասել, են  
ջագդան բազը իր ձեռովը աշնկեց՝ վոր տնց կենովը գնա նրա բա-  
րությունը վայելի: Չորս կատեպան ամեն առավոտ՝ ինչ պտուղ  
ծառից վեր եր ընկնում, հավաքում, քթոցներով տանում եցին  
ճամփին դնում ու անցկենովի չերն ու խուրչենը լցնում: Են մե-  
շա իգուցը մեկ պտուղ, մեկ թաս զինի իրենց տանը չեցին  
բանացնի, ջոկ կատահեյին ու աղքատ գեղցոնցը կրաժանեյին»:

Նրա որով Արտիվենց տան նախկին հարսաւոթյան հետքն ան-  
գամ մնացած չի յեղել: Փոքրիկ Խաչատուրը ծնվել և մի անշուք  
խրճիթում, վորի հարկը բնակիչներին անկարող և յեղել պատըս-  
պարել քամոց, անձրեվից, ձյունից, վորի պատերը ճեղքեր են  
ունեցել, իսկ գուռն ու յերթիկը տեղի յեն տվել տարերքի առաջ:  
Հայրական տունն Արովյանը նկարագրել և իր «Խղճիկն այն խըր-  
ճիթ» հրաշալի բանաստեղծության մեջ.

Խղճիկն այն խրճիթ, անզարդն այն սրահ

Եերկերթեկ այն տուն ծխածեփ քարյա,

Լուսահատ անկյունք, խոսոչք բազմաահ

Հատակ ի հողո, առաստաղ վայայա...

Ի տանյաց ի հորմոց ի հեղքաց լուսամտից

Աստ ի ներքս տեղային, հոսեյին, թափեյին,

Յեկ կարկուտ և հեղեղ և անձրեվ և ոռոմբ ձյունից,

Յեկ մըրբիկ և հոսան, փոթորիկ սառսուազին...

Տիվ, գիշեր՝ անծածկույթ անփակ անխափան

Մղեյին ի հարկ մեր սոսկակեմք այն բնության.

Գոռալով, վանելով, մոնչալով կատաղաձայն

Խրոխտային, կովեյին, քանդեյին զմեր կայան...

Արովյանի մեջ վաղ մանկությունից և զարթնել սեր դեղի  
բնությունը, սքանչացում բնության յերեխույթներով ու տեսա-  
րաններով, զիշերն իր աստղերով ու լուսնով, ցերեկը արեվի պայ-  
ծառ լուսավորությամբ, ծիածանը, կայծակն ու վորոտը, յերկիրը  
սիրս պարուրող իր հազար ու մի հրաշալիքներով նրա մեջ տա-  
ջացրել են բնության պաշտամունք, վոր հետազում խոր զրոշմ  
և դրել նրա ստեղծագործության վրա:

Արովյանի ծնողներն ապրել են նահապետական սյարդ ու համեստ կենցաղով, շահլաբար ավել են իրենց սերն ու գուրզութանքը փոքրիկ Խաչատուրին և հոգ տարել նրա կրթության մասսին: Արովյանի մեջ շատ վաղ է նկատվել հակում գեղի ուսումը: Խաչատուրի հայրը՝ Հարությունը տասնամյա վորդուն հանձնում և Եջմիածնի վանքի գործոցը: Նա մանում և Անտոն յեղիսկոպոսի հովանավորության ներքո և, ըստ այն ժամանակի սովորության, դառնում է նրա փոքրավորն ու աշակերտը: Բայց ինչ կարող եր ստանալ ուսումնատեհն պատանին սպես հոգեվորականների հետամնաց միջավայրում: Ֆալախայի մարմին սառասեցնող տանջանքները Եջմիածնի խալիֆայական դպրոցում ավելի մեցնում, քան կատարելագործում ելին յերեխաների ընդունակությունները: Յեռանգուն, գյուրապղաց Խաչատուրի համար սպանիչ եր այդ հեղձուցիչ մթնոլորտը: Արովյանը չեր կարողանում հաշտվել ծոմ ու պահքի, բթացնող ազոթքի, լավն ու աղնիին սպանող այդ վայրենի, անբարոյացնող իրականության հետ: Նա փախչելու, հեռանալու շատ փոքրեր և անում, սակայն բռնվում և հետ և բերվում, վորից նրա վիճակն ավելի յէ վատթարանում: Իր պատանիկության տարիներին Եջմիածնից ստացած տպավորություններն այնքան սոսկալի յեն յեղել վոր նա հետագայում ևս մեծ տհաճությամբ և վոտքը վանքի պարիսպներից ներս գրել:

1822 թվին Անտոն յեղիսկոպոսը նրան տանում է Թրիլիսի և կրթության հանձնում ժամանակին հայտնի հայկաբան համարշած դարաբաղցի Պողոս վարդապետի մոտ, վոր աշակերտներ եր կարգացնում Տափի թաղի վանքի՝ իր խցի մեջ: Ստեփանոս նաղարյանը, վոր Արովյանի դասընկերն եր թե այդտեղ և թե ներսիսյան դպրոցում, առում և. «Այդ վարժապետը ավելի ծեծ, քան թե ուսում է տվել աշակերտներին»:

1824 թվին Արովյանն ընդունվում է Ներսիսյան նորաբաց դպրոցը: Այդ դպրոցի տարբերությունը նախորդների համեմատությամբ շատ ել մեծ չեր ինչպես ուսման վորակի, նույնպես և դասավանդման մեթոդների տեսակետից: Սակայն ինչ ել վոր լիներ, Արովյանի հոգեկան աշխարհի համար այդ միջավայրի աղողեցությունը բարեբար յեղավ: Այն ժամանակ Ներսիսյան դպրոցի տեսուչ եր ականավոր բանաստեղծ Զարություն Ալամդարյանը:

Հանձին նրա Արովյանը վաստակեց մի լավագույն բարեկամ, մի սիրելի ուսուցիչ, վոր հավանողեն և հանդիսացավ նրա ստեղծագործական թութովանքների առաջին քաջալերողը։ Ալամդարյանն և անշուշտ այն հեղինակը, վոր սեփական որինակավ, լիրիքական իր գողարիկ բանաստեղծություններով ստեղծագործական աղդակ հանդիսացավ Արովյանի համար։ Թերեւ պատահական չե այն փաստը, վոր մեզ հասած Արովյանի ամենավազ շրջանի բանաստեղծությունները վերաբերվում են այդ տարիներին (1824թ.)։

Արովյանը միշտ ել մեծ յերախտիքով և խոսել Ալամդարյանի մասին և բանաստեղծական սրտառուչ տողեր նվիրել բազմերախտ ուսուցչի հիշատակին։

Վոչ պակաս նշանակալից եր դասընկերների շրջանի ազգեցությունն Արովյանի վրա։ Նրանցից շատերն ուսման ծարավով տոչորվող ազնիվ պատահներ ենին, վորոնք Արովյանի պես ու նրա հետ մեկ աել ուխտ ենին արել զինվելու գիտությամբ ու նվիրվելու ժողովրդի լուսավորության գործին։ «Ի 15 ամյաց հասակի իմո ընթերցյալ զվարս Դուկասա Վանանդեցվո, Սիմեոն կաթողիկոսի, Մխիթարա Արքայի և այլոց նմանորինակ հայրքնասիրաց, փափագելի և յես իմովսանն կարողությամբ պիտանի լինել ազգին իմում սիրելվո»։

Նրանցից գուրս յեկան գրական-հասարակական գործիչներ, մանկավարժներ և այլն։ Հատկապես մեծ ծառայություններ մատուցեց մեր ժողովրդին հետազայում հայոնի հրապարակախոս, «Հյուսիսափայլ» ամսագրի խմբագիր Ստեփանոս Նազարյանը, վորի հետ Արովյանը մնաց բարեկամական սերտ կապերի մեջ մինչև իր կյանքի վախճանը։

Ահա թե ինչ ե զրել Նազարյանն այդ տարիների մասին։ «Արովյանը լինելով չափահաս աշակերտներից մինը, գուցե և ավելի մտախոհը յուր ընկերների մեջ, նշանավոր եր մանավանդ յուր շատ զորավոր հիշողությամբ։ Արովյանը մի մեծ ուսումն գուրս չտարավ Ներսիսյան ուսումնարանից (ինչպես վոչ վոք մեղանից) և անկարելի յեր այդ բանը այն փայրիվերո, չքավոր ուսումնատվության մեջ։ բայց պիտո յե ասել արդարությամբ, վոր մի քանի կենդանի սերմեր, մի ազնիվ ձգտողություն դեպի ուսումն հառաջացան այդ ուսումնարանից մի քանի մասնավոր-

ների մեջ: Յեվ Արտվյանը հրաժարվելով թիֆլիզից դեպի Եջմիաց-  
ծին, առարակ յուր սրաբ մեջ մի վառ ուսումնասիլության  
կըակը:

1826 թվին Արտվյանն ավարտում է Ներսիսյան գպրոցը:  
Եջմիածնում Արտվյանի համար անասելի ծանր շրջան է  
սկսվում: Ուսման ծարավով տոչորվող նրա միաքը տգետ հոգե-  
վորականների շրջանում, ինչպես անապատում, սնունդ չի գրա-  
նում: Նրան ձգում է լուսավոր Յելլրսպան: Այնտեղ կրթվելու,  
ապա հայրենիք վերադառնալով ժողովրդի լուսավորության գոր-  
ծին նվիրվելու միաքը գիշերացերեկ գագար չի ատլիս նրան:  
«Ապրել և մենիկ հայրենիքիս համար,—զրում է Արտվյանը,—  
ահա այն խնդիրը, վոր յես ընտրել եմ ուստանելական տա-  
րիներից ի վեր»: Բայց նվ եր լսողը, նվ պիտի հասկանար աղ-  
նիվ պատանու ձգտումները, նվ եր մտահոգված ժողովրդի լու-  
սավորության խնդրով, նվ վերջապես կընդասաջեր նրա ցանկու-  
թյուններին, կոզներ իրազործելու այդ գեղիցիկ ծրագրերը: Հայ-  
րենասեր պատանին ապրում է խոր վողբերգություն: Անհեռա-  
նկար վիճակից նա շատ անգամ փորձում է յելք գտնել անձնաս-  
պանության մեջ: Պետք եր ոժտված լինել բարոյական մեծ ու-  
ժով ու զորեղ կամքով, այլպիսի միջավայրում հոգու ազնվու-  
թյունը, մաքի վեհ ձգտումները չկրցնելու և շրջապատի կլա-  
նող տիզմի մեջ չխրվելու համար: Արտվյանն ունեցավ այդքան  
ուժ, այլպիսի զրուավոր հոգի: Այդ իրականությանը նա միշտ  
հայեց ներքին անկերպ վրազմունքով և հալարտ արհամարհան-  
քով: Այս ծանր, վհատեցուցիչ վիճակից Արտվյանին հանեց մի  
յերջանիկ պատահականություն, վորը բախտորոշ նշանակու-  
թյուն ունեցավ նրա համար:

1829 թվին Դորբատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ  
Պարբուը Արարատն ուսումնասիրելու մտադրությամբ Եջմիա-  
ծին և դալիս: Արտվյանին և վիճակիվում, իրեկ այն ժամանակ-  
վա միակ ուռաւագետի Եջմիածնում, դառնալու Պարբուի թարգ-  
մանն ու ուղեկիցը նրա վիճական արշավի ժամանակի:

Այն պահին, յերբ գարսավոր նախապաշարմունքների գերի  
դառած Եջմիածնի կղերը ահ ու զողով ե լցվում, լսելով Պարբու-  
տի խիզախ ձեռնարկության մասին, յերբ բոլորը «անկարեկի»,  
«անհսարբին» ու «անմիտ» են համարում Ամսիս բարձրանալու

նրա մտադրությունը,—Աբովյանը, պատաճեկական խանդավառ  
մտքի մի խիզախ թսիչքով վուոնատակ տալով հազարամյա  
վանդությունը, վոգեվորվում և պատկառելի գիտնականի ձեռ-  
նարկությամբ և սիրահոժար միանում նրա գիտական արշավա-  
խմբին։ Կրոնական ավանդությունը պատմում է, վոր Արարա-  
տի գագաթը բարձրանալու առաջին անհաջող փորձը կատարել  
և առասպելական ո. Հակոբը, Նոյի տապանը աճքով տեսնելու  
դիտավորությամբ։ Բայց այն, ինչ չեր հաջողվել «սուրբ մար-  
գուն», իրազործեցին գիտության մարդիկ վորոնց սակայն նե-  
տաքրքրում եր վոչ թե Նոյի տապանը, վոր ի զետ այստեղ չերե-  
վաց, այլ հսկա լեռան՝ գիտության համար չափազանց շահա-  
վետ հատկությունների ուսումնասիրությունը։ Հաղթահարե-  
լով տարեքը ամենի ուժը և կրօնական նախապաշարմունքնե-  
րի կատաղի գիմազրությունը, նրանք անկարելին կարելի գար-  
ձըրին, անհնարինը՝ հնարավոր։ Առաջին անգամ խիզախ մահ-  
կանացուների վոտքը տրորեց գագաթը սրբազնն ու անմատչե-  
լի համարված Արարատի, վորի անունը քրիստոնեական յեր-  
կյուղածությամբ եր ցնում հավատացյալների սրաերը։ Դա մի մե-  
ծակործություն եր, մի անորինակ խիզախություն։ Մեր այն ժա-  
մանակված իրականության մեջ դա գիտության առաջին մեծ  
հաղթանակն եր կրօնական սնուսիապաշտության զեր։ Գիտու-  
թյան վիճ բաճունքներին հասած Պարուսը գառնում և Աբով-  
յանի իդեալը։ Ասիայի խավարում ծնված և մեծացած պատաճին  
լուսավոր Յեղոսպայից յեկած գիտնականի առաջ իրեն զգում և  
խեղճ ու նվաստ։ Ոյժմ ավելի քան յերես Աբովյանը ձգուում  
և գուրս գալ լույս աշխարհ, գուրս պրճնել Եջմիածնի շինական  
պարիսպներից, թոթափել յեկեղեցու և կրոնի լուծը։ Այս ցան-  
կությունն Աբովյանը հայտնում է Պարուսին, վորն իր հեր-  
թին հմայված եր Աբովյանի պարզ ու շիտակ ընտվորությամբ,  
քնքույշ հողով, աղնիվ հակուֆիերով, ուսման բուռն տենչով և  
ժողովրդին ովտակար լինելու անկեղծ ցանկությամբ։ Այս բո-  
րութին ավելանում եր Արարատը բարձրանալու ընթացքում Ա-  
բովյանի ցուցաբերած անորինակ տոկունությունն ու խիզախու-  
թյունը։ Պարուսի համար Եջմիածնի խավարամիտ կղերի շրջա-  
նում Աբովյանը մի կատարյալ գյուտ եր, տղիտության ծովում  
կորած մի ագամանդ։

Պարբռտն աճիխոնջ և տոկուն դիտնականի, գիտության ենտուս զիաստի մի ցայտուն որինակ է: Գիտության լույսը աշխարհի խուլու մութ անկյունները տարածելու գործը նրա կյանքի նշանաբանն է յեղեւ: Հավատարիմ իր սկզբունքին, հավատարիմ գիտության գործին, Պարբռտը չեր կարող անուշապրության մասնել ուսումնատենչ պատանուն, անկատար թողնել նրա տարիների իղձը: Նա կուանեց, վոր Արովյանը կոչված է մեր ժողովրդի լուսավորության առաքյալը՝ լինելու և չսխալվեց:

Պատկառելի գիտնականը խոսահանում է ոգնել Արովյանին իրագործելու իր տարիների տեսչը:

Պարբռտի վերադարձից հետո անհամբեր սովասումի ծանր որեր և ապրում Արովյանը: Բարի լուր ավետող նրա նամակը ուշանում է: Արովյանն սկսում է հուսահատվել: Այդ արամատրության արդյունք է նրա դիմումը՝ ուղղած Նիկոլայ Լին: Հայանելով սովորելու իր բուռն տեսչը, ժողովրդին ծառայելու անկեղծ ցանկությունը, Արովյանն ավելացնում է հուսահատությամբ: «Կամ հասնել բաղանաց իմոց, կամ առև զանձն իմ ի վատնգ կորսայան»:

Արովյանի վիճակը ծանրանում է մանավանդ նրանով, վոր եջմիածնում սկսում են կասկածանքով վերաբերվել նրան, Արարատի գագաթ բարձրանալը սրբազնության նման մի բան համարելով: Վերջապես ստացվում է Պարբռտի նամակը: Արովյանի դժբախտությունը հանկարծ փոխվում է յերջանկության: Ահա այդ նամակը:

«Հարգելի սարկավագ, սիրելի բարեկամ,

Վորոշված և Զեր վիճակը, կատարվել է, ինչ ցանկանում էիք, նորին պայծառափայլություն կոմս Պասկեվիչ Յերեվանս ըսկին, նույնպես և նորին լուսափայլություն ժողովրդական լուսավորության նախարար իշխան Լիվենը հարգեցին իմ՝ Զեր մասին արտծ խնդիրը, այնպես վոր նորին Կայսերական մեծությունը ամենավողորմածաբար Զեր թույլտվություն շնորհեց Դորագատում 3 տարի մնալու, վորպեսզի սովորեք հոգուտ հայ ժողովրդի կրթության, ընդ նմին նշանակելով Զեր տարեկան 200 սուրբի արձաթ, 200 սուրբի ճանապարհածախուի և նույն քան ել վերադարձի վարձ: Աստված Զեր հետ լինի, սիրելի բարեկամ: Անհամբեր սպասում եմ Զեր ուրախաբեր դալը»

տին և հավիտյան կլինեմ, հարգելի սալկավագ, սրտով ջեղ անձնըվեր՝ ֆ. Պարուս:

Դորպատ, 4 ապրիլի, 30 թիվ:

Սնկասկած ե, վոր Նիկոլայ 1 և նրա չինովնիկները հոգ տաշնելով Արովյանի կրթության մասին, հույս ունեցին նրանից պատրաստելու միապետության շահերին նվիրված մի հլու հպատակ, սակայն նրանք սխալվեցին . . .

Յեվ այսպես, Պարուսը Արովյանին առաջնորդում եր գեպի գիտության տեհնչալի բարձունքները, վորաեղից նա աշխարհին պիտի նայեր նույնապիսի լայն հայացքով, ինչպես մի անգամ նայեց Արարատի յերկնամերձ գագաթից: Սակայն նրա յերազների պայծառ արել ելի մի պահ սքողվում ե իրականության թանձր մշուշով: Արովյանի Դորպատ գնալու ցանկությանը զեմ ե կանգնում Յեփրեմ կաթողիկոսը: Մյուս կողմից ել խոչընդուռ են հանդիսանում ծնողները, վորոնք չեն կարողանում հաշավել սիրելի վորդուց այնքան յերկար ժամանակ բաժանվելու մաքի հետ, վորոնց համար հեռավոր և անծանոթ աշխարհը մի կորստյան անդարձ ճանապարհ եր:

Կոտրելով Յեփրեմ կաթողիկոսի համառ գիմագրությունը և անտես առնելով ծնողների արտասունքները, Արովյանը 1830 թվի հուլիսին մեկնում է Պետերբուրգ, այնտեղից ել՝ Դորպատ:

Դորպատում անցկացրած վեց տարիների ընթացքում Արովյանի համար Պարուսի տունը յեղել է հայրական հարազատ հարկ, իսկ Պարուսը և իր ամուսինը ծնողական սեր և խնամք են ցույց տվել մոռացնել տալով հարազատ ծնողներին: Ծնորհիվ Պարուսի, Արովյանը շրջապատված է յեղել սիրով և առանձին հոգատարությամբ նաև մյուս գառախոսների և նրանց ընտանիքների շրջաններում:

Արովյանի արխիվում պահպանվող գերմանացի բարեկամներից ստացած բազմաթիվ նամակներն ու այլ և այլ գրությունները գաղափար են՝ տալիս այն արտակարգ ջերմ մթնոլորտի մասին, վորտեղ անցան նրա կյանքի այդ տարիները: Բարեկամական այդ շրջապատում Արովյանը մոռացության չի տվելիր հայրենիքն ու հարազատ ժողովրդին: Նրա վաս հայրենասիրությունը վոչ միայն չի նվազել, այլ առավել բորբոքվել է ու ընդուռկել նրա վողջ եյությունը: Հայրենիքի կարուսը մաշել է Արովյա-

նին այն աստիճան, վոր հաճախ միայնության ժամերին նա հառաջել է և դառնորեն արտավել: Աբովյանին առաջարկված է յեղել մնալ համալսարանում՝ իրեւ արեվելյան լեզուների դասախոս, սակայն նա կտրականապես մերժել է: Հայրենիքում գործելու հետանկարը ուրախությամբ էլցրել նրա սիրառ և կրկնապատկել նրա ընդունակություններն ու ուսման սերը:

Դորպատը յեկրտպական կուլտուրայի ոջախներից մեկն եր ուսուական միապետության մեջ: Ֆրանսական մեծ լուսավորիչների և գերմանական «Գրոհի ու Փոթորկի» շրջանի հանձարեղ հեղինակների քաղաքական-հասարակական գաղափարները վազուց ելին դասել վողջ Յեկրտպայի սեփականությունը: Նրանց հայացքներն իշխում ելին ամենուրեք, և Դորպատը այդ ազգեցության շրջանակներից գուրս չեր մնում: Գյոթեյի և Շիլերի յերկերը դառնում են Աբովյանի գերմաններենի դասագրքերը, Լեսսինգը խորապես հուզում է և հիացնում, Գյոթեյի մահը ցնցող ներգործություն և ունենում նրա վրա: Գերմանական մի լրագրից նա թարգմանում է մեծ բանաստեղծի մահվան ասթիվ մի հոգված, վորը ցույց է տալիս զեպի հանձարեղ բանաստեղծն ունեցած նրա խոր հարգանքը:

Աբովյանը թարգմանել է Գյոթեյի «Անտառի արքա» հայունի բանաստեղծությունը, ինչպես նաև Շիլերի մի շարք բանաստեղծությունները: Իր գերմանացի բարեկամներից մեկի ալբոմում տեսնելով Շիլերի բանաստեղծության ինքնազերը, Աբովյանը խորը հրձվանք և ապրում ու անմիջապես արտադրում է, կցելով բանաստեղծությանը մի ընդարձակ ծանոթություն:

Գրական-կուլտուրական այս մոա կապերը գերմանական մեծ կլասիկների հետ, ինչ խոսք, անհետեանք չանցան Աբովյանի համար: Մեր կյանքի շատում ունի դրանքերը հարազատության շատ թելերով և կապված գերմանական հետամնացության դիմ գրոհող գութորկու մաքերի հետ: Շիլերի «Ավագակները» և «Վիլհելմ Տելլը», ինչպես և Գյոթեյի «Վերթերը» խորը դրոշմ են դրել Աբովյանի «Վերքի» վրա:

Աբովյանի մանկավարժական հայացքների և զբական ստեղծագործության վրա պարզորոշ նշանաբար մնում է նաև ժան-Ժակ Ռուստոյի ազգեցությունը: Նրա արխօնիում գտնվում է «Նոր Ելոիզա» ի թարգմանական փորձը, վոր անավարտ և մնացել հավանույի թարգմանական փորձը, վոր անավարտ և մնացել հավանու:

ըեն կյանքի դժբախտ հաճգամմանքների և վողբերգական վախուանի շնորհիվ։ Այս փաստն ինքնին շատ բան և նշանակում։

Անտիկ աշխարհի գրականություն և փիլիսոփայություն, վաղ վերածնության խոշորագույն ներկայացուցիչներ, ֆրանսական մեծ լուսավորիչներ և վերջապես գերմանական կլասիկ գրականություն ու փիլիսոփայություն,—ահա համաշխարհային կուլտուրայի այն հիմնական մոմենտները, վորոնք Դորպատում հանդիսացան Արովյանի ուսումնասիրության առարկաները։

Յեվրոպական քաղաքակրթության հետ մեկտեղ, Արովյանի վրա անշուշտ մեծ ներգործություն և ունեցել նաև ուսուական կուլտուրան։ Առաջին անգամ նա ներկայացում է դիտում Պետրոբուրգում, վոր անջնջելի տպագործություն և թողնում նրա վրա։ Դորբատում նա ծանոթանում է ուսու հոչակավոր բանաստեղծ Ժուկովսկու հետ և այդ առթիվ իր հիշատակարանում գրում հիացմունք արտահայտող հետեւյալ տողերը։ «անվանի մարդուն, ուսուաց գրականության նախագլխին տեսնելու ուրախությունից, յերակներս շարժվեցին»։ Արովյանը թարգմանում է նշանավոր շահնաստեղծներ՝ Կարամզինին, Կրիլովին, Դմիտրիյևին, Խեմ-նիցերին և ուրիշներին։ Նրա այլ և այլ աշխատությունների մեջ հանդիպում ենք Լոմոնոսովի, Դերժավինի, Գրիբոյեդովի և այլ ուսու նշանավոր հեղինակների անուններին։

Իբրև ազատ ունկնդիր Արովյանը հաճախում է համալսարանի դասախոսություններին և միաժամանակ դասեր առնում Պարբուից ու նրա պաշտոնակիցներից։ Պարբուի դիտավորությունն եր Արովյանից պատրաստել մի բազմակողմանիորեն դարձացած մարդ, վոր պիտի նվիրվեր հայ ժողովրդի, հատկապես նրա մանուկ սերնդի, կրթության գործին։

Ըմբռնելով լուսավորչի իր պատրասխանատու միսիան, Արովյանը չի խորշել վոչ մի բանից, սովորել է ամեն ինչ, ձգտել է ամեն բան գիտենալ և ամեն կերպ ոգտակար լինել ժողովրդին։ Գիտությունների հետ մեկտեղ նա հետաքրքրվել է նաև արհեստներով, անգամ սովորել է հաց թխելու և ճաշ պատրաստելու յեվրոպական յեղանակը։

Ենք այսպիս, բեռնավորված առաջավոր մարդկության ըստեղծած մտքի անսպառ գանձերսկ, Արովյանը վերադառնում է

հայրենիք, այդ հարստությունից իր յերկրին և ժողովրդին բառ Ժին հանելու վառ հույսերով:

Թե ինչպիսի մեծ պաշարով, խորը գիտությամբ և լայն աշխարհահայացքով եր Դորպատից նա հեռացել, յերեվում և ֆրանսացի մի ճանապարհորդի ստորեվ բերվող խոսքերից. «Արովյանի հետ տեսություն ըրի և ստուգիվ զարմացա իր հմտության վրա: Գերմանական փիլիսոփիայության և գրագիտության տեսիլները իրեն այնքան ընտանի յեն, վոր նույնիսկ յեվրոպական մը ոռգուտ կրնա քաղել իր կարծիքներեն: Շիլերը ջուրի պես գետե, Լեսսինգի, Լեյպնիսի կարծիքները մաղե անցուցեր եւ և իր ասիական յերեվակայությունով անոնց նոր գույն մը կուտա: Գերմանացիի մը չափ կիսուի գերմանիկ լեզուն և տարակույս չկա, վոր այս անձը հայ գրագիտության պատիվ պիտի ընե որ մը: Տարորինակ յերեվույթ մարդկային լուսավորության, հայու մը բերան արձագանք և այնպիսի տեսիլներու, վոր մեր մեջ գեռ նոր կտարածվին: Շիլերի, Լեսսինգի դրությունները Կավկասի լեռներու մեջ կհաստատվին և լսելի կլլան և դեռ Յեվրոպայի մեջ ժողովուրդ կա, վոր այս հեղինակներու անունն անգամ լած չե: Զարմանալի բան պիտի ըլլա, յեթե Ասիայի լուսավորությունը Կավկասեն սկսի և Բրոմեթեյին ժայռը տեսնե իր չարչարանքին արդյունքը . . .»:

Բայց ավմդ, Արովյանի իդեալները, ժողովրդին ոգտակար լինելու քաղցր յերազները շռւտով ջարդ ու փշուր յեղան՝ դիպչելով այն ժամանակվա մռայլ իրականության ահութի ժայռին:

Արովյանը փորձ արեց Եջմիածնում հիմնել դպրոց՝ գյուղական ուսուցիչներ պատրաստելու համար, սակայն տգետ Հովհաննես կաթողիկոսը մերժեց նրա դիմումը, կոպտաբար պատասխանելով՝ «դու լավ իսմորել կարես զմիտս անմեղաց, այլ կրթել զնոսա չե քո գործ»: Իսկ տգիտության մեջ վայրենացած վանականները ճիվաղային ծամածուություններով և քրքիջներով ընդունեցին յեվրոպական տարադով հագնված, բեխ ու մորուքը սափրած նախկին դպրին: Խորտակված հույսերով ու անհուն վշտով Արովյանը թողեց Եջմիածինը և վերագարձավ Թրիլիսի: Այսուեղ մի կիսավեր խցիկում նա մեկ և կես տարի ապրեց նյութական ծայրահեղ կարիքի մեջ, որվա հացի կարոտ և ապա ստիպված յեղավ, հակառակ իր վորոշման, արքունական ծառա-

յության մտնել տեղի գավառական դպրոցում՝ իրքև ուսուցիչ և տեսուչ: «Ստիպյալ ի չքավորությունն մտի ի պաշտոն արքունական, վոր յերբեք կամեյի»:

Այդ տխուր, հուսահատական որերին Աբովյանը Նազարյանին և հայտնում իր վիշտը. իր սրտակից բարեկամից նա ստանում է հետեւյալ պատասխանը, վոր հանալի բնութագրում և այն զարհուրելի միջավայրը, ուր վիճակված եր գործելու Աբովյանին:

«Եսպիսի հանգամանքներում շատ զգուշ պիտի լինել այն մարդկանց հետ հարաբերություն ունենալիս, վորոնց հոգին հավիտենապես կաղապարների մեջ ստոել և ընդունակ չե բարձրանալու գեղի ճշմարտությունը: Ինարկի, զու այժմ ապրում ես մի վողորմելի շինական աշխարհում, ուր մարդիկ իրենց ամեն բանը մոլիուանդաբար մեծ բան են կարծում և արհամարհում են ստարը: Ինչ թշվառությունն ապրել այնպիսի մարդկանց մեջ, վորոնք մտածելու ազատություն չունին, վորոնք իրենց կյանքը անսուսնի նման նախապաշարութիւնը և սնուտիազաշտության շղթաներով բռնված առանց ինքնազիտակցության են անցկացնում»:

Իր մի այլ նամակում Նազարյանը հետեւյալ սրտապնդիչ խոսքերն եւ ուզգում Աբովյանին. «Թող սիրտգ չկոտրվի, այլ համբերությամբ և վճռականությամբ պնդանա մինչև քո տուած ավելի լավ տպագա բացվի: Ավելի փսեմ բան չկա, վոչ մի տեղ մարդս այնքան մեծ չե յերեվում, ինչպես գերակշռող ուժի դեմ պատերազմելիս, ընդդեմ ըստ յերեւյթին անխուսափելի ճակատագրի կովելի՞ մի արդար գործի՝ իր արժանավորությունը հաստատելու համար»:

Սակայն աշխատանքը Թբիլիսիի գավառական դպրոցում իր մխիթարական կողմը ևս ուներ: Աբովյանը 200 աշխակերտների շրջապատում իրեն զգում եր յերջանիկ: Իր աղքակիցներին և յերկրացիներին կրթելն ու գառափարակելն Աբովյանը մեծ բախտավորություն կ համարում: Ակադեմիկոս Թբենին ուզգած նրա մի նամակում առված ե. «Մանուկների աշխարհը վաղուց ի վեր բոլոր յերկրային սրտահաճ բախտավորություններից ինձ համար ամենաբարձրն ե յեզել Մանուկներին կրթելը աշխարհիս յերեսին ամեն բան և ինձ համար և դեռ ավելին, քա-

նի վոր սրանց մեծագույն մասը իմ ազգակիցներն են, իսկ մյուսները՝ վրացի ու թաթար իմ յերկրակիցները»:

Նա բառիս խսկական իմաստով մանկավարժ եր, կոչված այդ ասպարեղի համար: Արովյանի համար մանկավարժությունը մի սիրելի գործ եր, մանուկների աշխարհը մի հոգեհարազատ միջավայր, մի զովաշունչ ուղիս այն ժամանակվա իրականության հեղձուկ անապատում: Ցարական անսիրտ չինովնիկների և խավարամոլ հայ կղերի տիրապետության գաժան պայմաններում նա իր զառն որերի կարճատեկվ ուրախությունը, խավարով շրջապատված իր կյանքի լուսափոր բովեները անց ե կացրել մանուկների կինասախինդ շրջապատում, նրանց աշխարհումն ե մոռացել իր դեմ նյութվող անթիվ գավերն ու հալածանքները: Արովյանը ամենաքռուց հայրական սեր ու փայփայանք ե ավել իր աշակերտներին և ջերմացել նրանց անկեղծ ու անկաշառ սիրով:

Կարծեք իր զավակներին ջերմորեն սիրող ծնողի բերնից գուրս յեկած լինեն Արովյանի ստորեկ բերվող խոռքերն, ուղղված իր աշակերտներին. «բալքի թե գերեզմանումը եղ Զեր սերը մըտքիցս գնա, այ իմ սիրելիք, իմ ազիզ բարեկամք, թե չե, վորքան ես կապույտ յերկինքը գլխիս ա, շունչս բերնումս, Զեզ, Զեզ սուրբ պետք ե համարեմ ինձ համար, Զեր արելին մեռնեմ»: «Ուսուցիչ սիրե զաշակերտն վորպես հայր զվորդի», — ասում ե Արովյանը, այս սկզբունքը լավագույն կիրառում ե գտել հենց իրեն մոտ:

Մանուկների կրթության ե դաստիարակության գործն Արովյանի համար յեղել ե այրող հարց, մեր ժողովրդի լավ որվա ու յերշանիկ գալիքի հույսը նա նոր սերնդի հետ ե կատել և նրանից ե սպասել ամեն մի բարիք: Նոր սերունդն ատեղծագործական ներշընչում ու թոխք ե ավել Արովյանին: Մակայն խսկական մանկավարժի այս լավագույն հատկությունները վոչ միայն բավարարություն չեն տվել ժամանակի պաշտոնական վոգուն, այլ և Արովյանի դեմ են գրգռել նրա աշխատակիցներին: Նրան շրջապատող նախանձու չինովնիկների նյութած մշտական գավերն Արովյանին հանգիստ չեն տվել: Արովյանը սոսկումով ե լցվել իմանալով, վոր Անդրկովկասի գոլրոցների տեսուչ ե նշանակած հայատյաց Դեմինտիյելը, վորի հետ նա թշնամական հարաբերությունների մեջ եր: Թրենին ուղղած նույն նամակում

այդ առթիվ Արովյանը գրում է. «Սա (Դեմինտիկը) պատճառել ե ինձ բավականաչափ վիրավորանքներ, վոր բնականաբար մեր հարաբերության մեջ կարող եյին տեղի ունենալ: Մեր բոլոր աշակերտները նրա ձեռքի տակ պիտի տանջվեն, բայց գլխավորապես հայերը և յես առանձնապես: Յես բնավ չեմ կարող սրա խծրծանքը տանել»:

Արովյանի մանկավարժական գործունեյությունն ընթացել է տեղական ժողովուրդների՝ հայերի, վրացիների և աղբքեջանցիների սեփական կուլտուրան զարգացնելու նշանաբանի տակ: Անշուշտ այս խնդրում նրան գաղափարական աջակցություն են ցույց տվել աղբքեջանական նշանավոր գրողներ՝ Միքայել Արքունովը և Միքայելաֆին, վորոնք Արովյանի պաշտոնակիցներ եյին նույն գոլրոցում:

Այս տեսակետից ուշագրավ փաստաթուղթ և Արովյանի դիմումը Անդրկովկասյան գլուխների վարչությանը, Թրիխիսիի գավառական գլուխոցում՝ առաջին իսկ դասարանից հայերեն և վրացերեն անցնելու մասին:

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ ԲԱՐԵԾՆՆԴՈՒԹՅԱՆ,

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԻՐԵԿՏՈՐ, ԱՐՔՈՒՆԻ  
ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՅԵՎԳԵՆԻՅ ՌՍԻՊՈՎԼԻԶ ՀԱՍՍԵՆ ՄԻԼԵՐԻՆ

Թիֆլիսի գավառական դպրոցի հաստիքավոր տեսչից

### Ր Ա Պ Ո Ր Տ

Ինձ հանձնված գլուխոցի աշակերտների ծնողներից շատերը, և մինչև իսկ, կարելի յե ասել, ամենքը խնդրում են ինձ, վոր առաջին գասարանում դասատրվի իրենց զավակներին հայու վրաց լեզուները: Նրանց այդպիսի ցանկության բավարարություն տալու համար, ցանկություն, վոր բարի նպատակ ունի այն մտքով, վոր բարձր դասարան փոխադրված աշակերտները հետագայում դժվարություն են քաշում այդ լեզուների գիտության մեջ, վորոնք չեն դասատրվել առաջին դասարանում:

Յես, համակերպվելով հասարակության ցանկությանը, նաև մանավանդ վոր տեղիս գավառական գլուխոցի աշակերտները մեծ մասով հայեր են, հարկավոր եմ համարում այդ մասին

հարդանոք զեկուցել Զերդ բարեհծննդության և խոնարհարար ինպղեկ թույլ տալ գասավանդել աշակերտներին հայ և վրաց լեզուները, ինչպես վոր այդ կատարվում է մյուս դպրոցներում:

Թիֆլիսի գավառական դպրոցի հաստիքավոր  
տեսչի պաշտոնակատար Խ. ԱԲՈՎՅԱՆ

Պայքարելով հանուն տեղական ժողովուրդների և նրանց կուլտուրական շահերի, Աբովյանն իր համար կովան է ընտրել հասարակությունը:

Խոսկելով ծնողների անունից, անշուշտ Աբովյանն ավելի համարձակ է դառել և նբա խոսքը հնչել ե առավել ծանրակշիռ ու ազդեցիկ: Անզրկովկասյան դպրոցների վարչությունը վերջ ի վերջո հարգել է Աբովյանի խնդիրքը:

Իրենիվ ազնիվ մարդ և հանդուդն քաղաքացի Աբովյանն անհաշտ վերաբերմունք և ցուցաբերել իշխանավորների կամաց յականությունների նկատմամբ, վորի պատճառով մեծապես տուժել ե:

Պիտի ասել վոր իրենիվ տեսուչ, նշանակում և իրենիվ ցաւը կան պաշտոնյա, նա անբավարար հատկությունների տեր և ճանաչվել, վորի պատճառով և 1843 թվին արձակվել և պաշտօնից:

Թրիլիսիի գավառական դպրոցում աշխատանքի անցնելուն պես, Աբովյանն իր տանը հիմնում է մասնավոր պանսիոն, վորտեղ սովորում են գերազանցապես հայ յերեխաններ: Սկզբում նրանց թիվը փոքր էր, սակայն 1839-ին, յերբ Աբովյանն ամուսնություն է գերմանուհի հմիլիսա Լոոդինի հետ, նրա հնարավորությունները լայնանում են և դրա հետ մեկտեղ մեծանում ե աշակերտների թիվը, համելով 25-ի:

Պանսիոնն այն ասպարեզն էր, վորտեղ Աբովյանը մի վորոշ ժամանակ, հոկող աշքից հեռու, կարողացավ ազատորեն կիրառել իր մանկավարժական հայտցքները, ըստ ամենայնի հասնելով իրոշոր եփեկտի: Ահա թե ինչ է զբել Աբովյանի պանսիոնի մասին գիտնական-ճանապարհորդ Մորից Վազները. «Եյտ դպրոցը շատ անդամ դացի ու հայ տղոց հառաջապիմուշ թյանը վրա շատ զարմացած: Տապը, տասնուշորս տարվան տղաք թյանը վրա շատ զարմացած: Տապը, տասնուշորս տարվան տղաք թաթարեաղեկ կը կարդան ու կը գրեն հայերեն, վրացերեն, թաթարեաղեկ

բեն, սուսներեն, գերմաներեն ու գաղիերեն։ Ստուգիվ շատ զարմացա, գերմաներեն աղեկ շեշտելով կը խռուի ին ու գարպետին իմ առջեկս զրել տված բաներեն տեսա, վոր գերմաներեն լեզվին կազմության աղեկ տեղյակ եյին, իմ առջեկս Կեթեյին ու Շիլերին գործքերը կկարգային։ Ամեն անգամ աս դպրոցը գալուս ու աս կայտառ տղաքը տեսնելուս մեծ ուրախություն կը դայի, մանավանդ իրենց լարեկամական ու ընտանեկան վարմունքը, քաղաքավարությունն ու վարժությունը զիս շատ կուրախացներ։ Իրենց վարպետին վրա շատ սեր ունեյին, վորովհետեւ թե կրթության ու գիտության մեջ հառաջացնելու և թե իրենց հանգստությունը հոգալու շատ փույթ կտանի։ Վերոհիշյալ տողերից միանգամայն պարզ ե գանձում, վոր այսպիսի փայլուն հետեւլանքի հասնելու համար Արովյանը գործազրել ե լավագույն մանկավարժի իր բոլոր հատկությունները, իր վողյեռանդն ու սերը, իր հսկայական կուլտուրան, հարուստ և բազմակողմանի գիտելիքները։

Շատ չանցած, սակայն, համապատասխան պաշտոնական մարմիններն սկսեցին տագնապի ազդանշաններ տալ արգելքներ հարուցել գործը հասցնելով այնտեղ, վոր Արովյանը ստիպված յեղավ մի առ ժամանակ փակել պանսիոնը։ Մակայն համառ ջանքերով նրան հաջողվեց ձեռք բերել պաշտոնական թույլտվություն և կրկին բացել այն։ Այս անգամ պանսիոնն իր գոյությունը պահպանեց մինչեվ 1843 թվականը, մինչեվ Արովյանի հռոանալը Թիվլիսից։

Միենույն ժամանակ մեր հեղինակին մաշել են կյանքի այլ ձախորդ հանգամանքներ։ Նրա գործազրած բուռն ջանքերը կազանի համարաբանի հայագիտության աւրիոնը ստանանալու համար՝ ի գերեւ յելան։

Մերժված ու հալածված սեփական յերկրում, իր իսկ հայրենակիցներից, իր իդեալների իրազործման հույսը Արովյանը մի պահ կապում ե կազանի համալսարանի հետ։ Այնտեղ, հայպիտական ամբիոնի միջոցով նա մտածում եր կազմեր պատրաստել հայրենիքում գործելու համար։ Այդ նորատակով Արովյանն Ակադեմիային ներկայացրեց իր յերեք աշխատությունները, («Նախաշավիդ կրթության», «Քերականություն ըստ Տապուի» և այլն), վորոնք աշխարհաբար գրված լինելու պատճառով գի-

տական չհամարվեցին: Այն, ինչ վոր Աբովյանի մոտ նոր եր, այն, ինչ հեղինակի կարծիքով ամենակարևորն եր ու անհրաժեշտը պաշտոնական գիտության և գիտնականի համար, արժեք չեր ներկայացնում: «Բայց յես ամեն բանից ավելի պիտի ցավելի, — զբում ե Աբովյանը ակ. Թրենին, — յեթե Ակադեմիան նըրանց նպատակի մեջ չթափանցեր և թողներ, վոր խեղճ ժողովուրդը ցերեկը խավարի մեջ շրջեր: Յես կարող եմ պրաբար գրել բայց պետք ե նախ իրականացնել այն, վոր անհրաժեշտություն ե»: Աբովյանը ուշ գլխի ընկավ, վոր այն, ինչ իր յերկրի, իր ժողովրդի համար հրատապ անհրաժեշտություն եր հանդիսանում, բոլորովին ել հարկավոր չեր նըրանց, ում վոր նա դիմում եր այնպիսի անկեղծ պարզամտությամբ: Հայկական դպրոցների համար կազմած «Նախաշավիդ կրթության» աշխարհաբար դասագիրքը Թբիլիսիի գիմնազիայի ուսուցչական խորհրդի կողմից ևս հավանություն չդատավ այն պատճառով, վոր այդ զբված եր «ռամկական» լեզվով և մեղանչում եր գրաբարի վորու գեմ:

Այս մաշող ցավերի մեջ, ճնշող այս ծանր բեռի տակ Աբովյանն ունեցավ մի անորինակ բեղմանավոր գրական գործունեյություն: Սակայն ստեղծագործական աշխատանքը վոչ միայն չի միմիթարում, այլ առավել ևս խորացնում է նրա ալլրած վողը բերգությունը, ավելի ցայտուն դարձնում ժամանակի սահմանափակ վողու և իր իդեալների միջեղ բացված անդունդը: Նա ստեղծագործում է առանց համոզված լինելու իր գործի հաղթանակին, առանց հավատալու գրողի փառքին:

1843 թվին Աբովյանը տեղափոխվում է Յերևան, նշանակվելով տեղի գավառական դպրոցի տեսուչ: Այստեղ ևս շարունակվում են նույն դավերն ու մեքենայությունները, ինչ վոր Թբիլիսիում էր: Աբովյանին շրջապատում եյին մանկավարժական գործին չինոնիկական անտարբերությամբ վերաբերվող, այդ ասպարեզի համար պատահական և միանգամայն անպետք մարդիկ:

Ակադեմիկոս Թրենին ուղղած իր 1847 թվակիր նամակում Աբովյանը գրում է. «Այս, յեթե միայն պարո՞ն մինիստը կամենար գիտենալ, թե ինչ գրության մեջ են այստեղի դպրոցները, Միայն ավելորդ փող ե, վոր կորցնում ե արքունիքը,

իսկ պատահնիները խորտակում են սիրուն ժամանակը... Թէ խոսում ես այդ մասին, քեզ հալածում են, վորպես աղանդավորի, չես խոսում՝ ստացվում է խայտառակ մի գրություն. քո աչքի առաջ, տարեց-տարի վոտքի տակ են տրվում արքունիքի և քո իսկ հայրենիքի շահերը: Վոչ թե ուսուցիչների ոռնիկը բարձրացնելով ե, վոր պետք ե վերջ զրվի անտանելի այդ զրությանը, այլ բարվոք կազմակերպություն մտցնելով, բանիմաց մարդիկ նշանակելով, իրենց գործը սիրով ու յեռանգով առաջ տանողներին խրախուսելով: Նվիրական խոսք եմ տվել հանգուցյալ Պարբոտին, անմոռանալի իմ դաստիարակչին ու բարեկամին, չթողնել յերբեք ուսուցչական ասպարեզը, անգամ յեթե ամենահրապուրիչ կարիերն իսկ բացվելու լինի իմ առաջ: Այսուհենայնիվ հիմա զրեթե ստիպված եմ անելու այդ քայլը, քանի վոր տասն ու մեկ տարի յէ տեսնում եմ այս ոռութինան և անկարող եմ վորյեկի բան անել զրա գեմ: Լավ ե մինակ 500 աշակերտ ունենաս, քան կըթություն տաս 50 աշակերտի, 5 ուսուցչով, վորոնք վոչ մի բանի պետք չեն»:

Աբովյանը փաստը չեր չափազանցնում: Խիստ արժեքավոր ե մանավանդ կարլ Կոխի վկայությունը: «Մինչեվ հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, վորը նման սիրով ու այնպիսի հոգատարությամբ նվիրված լիներ մանուկների դաստիարակության գործին, ինչպես վոր Աբովյանն ե: Սակայն, գերախոտաբար, Աբովյանին չեն ցույց տալիս արժանի վերաբերմունք: Զինովինիկների նեղարառությունը հաճախ ու շատ ե խանգարում նրան առաջ տանելու իր աղնիվ ու բուռն ձըդտուները: Յեթե Աբովյանը, իրենիվ Յերեվանի գավառային դպրոցի տեսուչ, մնալ կարողանար իր գործունեյության ներկա շրջանի մեջ, յեթե նրան գործոն աջակցություն ցույց տան իւրեն յենթակա պաշտոնյաները, այլ և պահանջված չափով գնահատեն նրան, սպասելի յէ, վոր Յերեվանից մի նոր լույս ծագի գժբախտ ու մոռացված, գարերով վոտնահարված հայ ժողովրդի համար»:

Պաշտոնակիցների շրջանում չգտնելով աջակիցներ, Աբովյանը գործին սրտացավ մարդիկ և վորոնում հասարակության մեջ: Նա ջանք է թափում ծնողներին մոտեցնել դպրոցին և հասարակության ու դպրոցի միջև ստեղծված կապի վրա հիմնել

իր աշխատանքները: Սակայն իզուր: Զարչիական վոգու բաշցը ձակակ ամբապետության այդ պայմաններում, դրամական շահը գերագաղափում եր ամեն ինչից: Շահի հետեւից վազող գործարար վաճառականն իր յերեխաների կրթությամբ զբաղվելը պարագ գործ եր համարում: Գնալով ավելի և ավելի հաճախակի եյին գասանում Աբովյանի ընդհարումները քաղաքում «հարգված» չարչիական լշխող խավի, հոգեվոր իշխանությունների, պաշտոնական մարմինների և բարձրաստիճան անձանց հետ:

Աբովյանն ապրում եր խոռվաճույզ և լարված հոգեվիճակ: Կոնֆլիկտը այն աստիճան է սրվում, վոր նրան համակում ե իշխանության կողմից ձերբակարվելու և աքսորվելու յերկյուղը: Իր աշակերտ Գեորգ Գեղամյանին զրած մի նամակում նա վորոշակի կերպով խոսում է այդ յերկյուղի մասին: Սարսափը ցարական ժանդարմերիայից վաղուց եր բուն զրել Աբովյանի մեջ: «Թուրքի աղջիկը» պատմվածքում նա զբում է. «Կոր լսում եյի, թե մեկ մարդի պատիժ ավին, յա բանալ քցեցին, վոր ասում եյին՝ թե Ծուսաստանիցը մեծ մարդ ա եկեւ վոր յերկրի հավան քննի իմանա, վոր կուսակալիցը, յա նախաբարիցը (մինխստրիցը) մեկ թուղթ եր զալիս, վոր կառավարությունիցը (զիրեկցիցը) ստորոժը գիրքը կոնսասակին աչքիս չեր յերեվում, ենակես եյի սարսափում, կարծում, թե ես ա, իմ վերջի որը հասել, մոտեցել ա, իմ արած չարությունը լիս ընկեր Պետերբուրգ, Մոսկով, Թիֆլիզ ինձանից գանգատով լըցվել են, իմ բարեկամք ինձանից ձեռք վեցրել, իմ թշնամիքը ինձ մատնել ինձ պետք և տանեն սաղսաղ թաղեն, յա կախտան»:

Ժամանակից առաջ ճնշված մարդու արագեղիան Աբովյանը Ցերեվանում ապրեց ավելի խորն ու ցավագին կերպով:

Մանավանդ խիստ զգալի յեղավ նրա համար ներսես Աշտարակեցու հասցրած վիրափրանքը: Կաթողիկոսը չհարգեց Աբովյանի ինդիքը, չկամեցավ նրա աշակերտներից մի քանի սին արտասահման ուղարկել բարձրագույն կրթություն ստանալու: Կաթողիկոսից մերժված Աբովյանը վրդովմունքի փայլն աչքերին, արտասունքները կուլ տալով վիրագարձավ հուսախար անելու ուրախ համբավի սպասող իր աշակերտներին: Անչափածը խիստ եր, հիասթափությունը՝ կատարյալ:

Նկարագրելի ծանր եր Արովյանի վիճակը մանավանդ կյանքի վերջին ամիսներին: Նա թողնում է Յերեվանի գավառական գալրոցը, ստանձնելու համար Ներսիսյան գալրոցի տեսչի պաշտոնը, վոր նրան խոստացել եր կաթողիկոսը... Սակայն այս մի խաղ ել, մի նոր զավ Արովյանին վերջնականապես խորտակելու համար: Ներսիս Աշտարակեցին դրժում ե իր խոսքը...

Յեղ այսպես, Արովյանի բոլոր փորձերն ու ձեռնարկումները ի գերեւ յելան, բոլոր ծրագրերը խորտակվեցին: Նա տեսավ իր շուրջը վհատեցուցիչ անտարբերություն, բայց հույսի վոչ մի նշույշը լույսի վոչ մի շող:

Արովյանին վիճակված եր սկսել և առաջ տանել ժողովրդի լուսավորության պատվարեր գործն ամենածանը ժամանակներում, նա ստիպված եր մենակ մաքառել խավարամիտների հըսկայական բանակի դեմ: Խիստ անհավասար եր ուժերի հարաբերությունը...

Արովյանն ապրեց մի խորը, գեռ ևս լիովին չպարզաբանված վողերգություն: Նա ապրեց մոայլ գիշերի անփարատ խավարում և այդ խավարին կուլ գնաց նրա լուսավոր ու պայծառ կյանքը:

Դեպի մահ տանող հուսահատության ծնունդ և Արովյանի «Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը» բանաստեղծությունը:

Մնաք բարով, մնաք՝ անց կացած որե՞ր:

Մոռացի՞ր՝ աշխար՝ քեզ տված ցավեր:

Վորդի՞ք, ընտանիք, մւր եք դուք լալիս,

Մարմինս թե փթի, սիրե ձեզ հոգիս:

Ես ճամփեն մեկ որ պետք ե մենք գնանք,

Մահով են կյանքին հասնենք, դինջանանք:

Բայց մեռնիլ յես վոր շուտ ուզում չեյի,

Պետքը գամ ազգիս, մի՝ ասում եյի:

Վաչ յերկար ապրելն եր իմ ուզածը,

Վաչ լավ որ քաշիլն՝ ախ՝ իմ խնդրածը,

Իմ են քաշած շունչն ել մահ եր աչքիս,

Յերբ չեյի կարում պետք գալ ազգիս:

Իշխանություն թե, կամ փառք ուզեցի,

Թագի, պսակի թե փափագեցի,

Ենտուր համար միայն, վոր հաղար մարդի  
Աչքի արտասունքն սըբեմ, վոր չցավի:

Փակ եր աշխարհն, սել իմ քաշած որն,  
Վոր ձեռս չհասավ, ինչ ուզեց սիրտս վոր:  
Արարիչ իմ տեր՝ թէ մարդ չիմանա,  
Իմ աղոթքն ես եր, քեզ լավ հայտնի ա:

Մարդիք, ախ մարդիք՝ դուք յիշը կղարժնիք,  
Վոր սիրտ սրախ տաք, միմյանց քռմակ ըլիք:  
Իմանաք, մեր գրախտն ու կյանքն հենց են ա,  
Ով վոր խեղճ ազգի ցավը կիմանա:

1848 թվի ապրիլի 2-ին վաղ առավոտյան դուրս դալով  
անից Աբովյանն այլևս չկերագարձավ: Ուր գնաց, անդարձ  
կրստյան ինչպիսի ճանապարհով—անհայտ եւ Անլուծելի առեղծը-  
ված ե Աբովյանի կյանքի վախճանը:

Անհայտանալուց 3 որ առաջ նա տխուր խոհերի մեջ ե ըն-  
կել վոչինչ չի կերել քիչ ե խոսել, չի հանվել և տանջվել ե  
անքնությունից: Ի՞նչպիսի մռայլ խոհերով եր լցված նրա գլու-  
խը և ինչ փոթորկով հուզված նրա զգայուն սիրտը: Իր վար-  
դագույն յերազների անդարձ կորստից եր հուսահատված, թե  
իր զեմ նյութվող նոր դավերից խոցված... Յեվ մեկը, և մյու-  
սի պիմ այսութեալ այն եր, վոր չգտնվեց մեկը, վոր բաժա-  
սը... Ամենասոսկալին այն եր, վոր չգտնվեց մեկը, վոր բաժա-  
սը նրա անլուր վիշտը, վոչ մի հոգեհարազատ բարեկամ, վհչ  
վոք հոգի ջերմացնող, հուսադրող մի խոսք չասաց նրան: Ի՞նչ-  
պիսի անկատար իդեեր տարավ նա իր հետ...:

Աբովյանի կործանումը եգոխտական մի ակտ չեր, այլ  
հուսահատ բողոքի արտահայտություն: Չկամենալով համակերպ-  
վել ժամանակի պաշտոնական վոգուն, զլուխ ծուել կղերի և  
ուհակցիայի առաջ, հավանաբար անձնապահությամբ ել վերջ  
տվեց նա իր կյանքին:

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

### Ա.

Մեծ է, հալուստ ու բազմազան Արովյանի թողած գրական ավանդը: Բացառիկ է նրա ժառանգության նշանակությունը հայ գրականության մեջ: Արովյանը բազմաժանր հեղինակ է: Նա գրել է վեպ, պատմվածք, պիես, առակ, բանաստեղծություն,

Արովյանն է հայերեն աշխարհաբար գասագրքերի առաջին հեղինակը և մանկական առաջին գրողը: Նա գրել է և հասակավորների, և՝ մանուկների համար: Ամեն դեպքում ել նկատի յեւ ունեցել ժողովուրդը, նրա կուլտուրական մակարդակը, ճաշակը, հետաքրքրության առարկան: «Կարելի ա թե շատ բառ, շատ խոսք քիչ մի ծանր թվի, բայց այլ ձեռվ հնար չի կար, չունքի բանն ենպես պատի շինած, գրած, վոր կարդացողի սրտովն ըլի: Շատ մութը լեզվով գրիլ ենպես եմ կարծում, թե մեր իսալսին դիր չի գալ»: Արովյանը ժողովրդի մարդ եր, իր ստեղծագործության ակունքներով ու վոգով սերտորեն կապված նրա հետ: Նա առաջինն ըմբռնեց, վոր ժողովրդի հետ կապված արվեստը միայն կարող է լինել կենսունակ, իսկական արվեստ: Ժողովրդի վշտով, նրա ազատ, լուսավոր ու յերջանիկ կյանքի կարուսով և տոգորված Արովյանի ստեղծագործությունը: Արովյանը առաջինը վիտակցեց, թե ինչ նշանակություն ունի ժողովրդական բանահյուսության անսպառ ու ջինջ ազըյուրը, և ինքն ագահաբար խմեց այդ կենսաբար, անմահական ազբյուրից:

Արովյանը հիանալի գիտել հայ և հարևան ժողովուրդների ֆուլկորը: Նա վաղուց ի վեր սովորություն և ունեցել արջելու ժողովրդի մեջ, լսելու և գրի առնելու նրանց յերգերը, զրոյցները, հեքիաթները:

Սիրել և մանավանդ խոսեցնել ծերերին և իր գրվածքներ բում ոգտագործել նրանցից լսածները: «Վերք Հայաստանի» վեպում կարելի յեւ ցույց տալ այդպիսի շատ կարներ:

Հանդես գալով այնպիսի ժամանակ, յերբ մեր գրականու-

թյունը ներշնչված եր կրոնական վոգով և սպասարկում եր յետ  
կեղեցուն, յերբ կղերը և կղերամիտ մարդիկ ձիգ եյին թափում  
արհեստական յեղանակով կյանք ու կենդանությունն հաղորդել  
վաղուց մեռած գրաբարին, աչքի առաջ ունենալով ժողովրդին,  
նրա արդեն հրամայական գարձած պահանջներն ու շահերը, Ա-  
բովյանն անհաշտ պայքար սկսեց գրականության հին, վաղուց  
արդեն անպետքացած տրավիցիաների վեմ: Նա իր հոգու ամ-  
բողջ զորությամբ բազոքեց, վոր հին գրականության կողմից  
աչքաթող և արվել ժողովուրդն ու նրա կյանքը: «Ինչ կա յեկեղե-  
ցու վրա յա, աստծու ու սրբերի», — գրում և Աբովյանը «Վերք  
Հայաստանի» վեպի առաջաբանում, քննադատելով մեր հին  
գրականության կեղծ գասական ուղղությունը, կրօնական սխո-  
լաստիկ վոդին: Այդ նույն առաջաբանում նա շեշտակի կերպով  
դնում է գրականությունը ժողովրդի շահերին ի սպաս բերելու,  
ժողովրդի համար գրելու պահանջը: Աբովյանը ցանկանում  
է մոտ, մատչելի ու հարազատ լինել՝ միայն ժողովրդին, ծառա-  
յել «ազգին», իսկ ազգը նրա համար «հարիր հազարն» եր: «Գրա-  
բառ տասը կի վոր հասկանային, բայց հարիր հազարի համար  
թեկուղ իմ գրածը, թեկուղ մեկ քամու ջապաց: Ախըը վոր ազ-  
գը են լեզվով չի խոսում, են լեզուն չի հասկանում, սաքի հենց  
բերնիցգ ել վասկի վեր ածիր . . .»: Տարիներ շարունակ Աբով-  
յանն ունեցել է ժողովրդին վորեե ձևով սպակար լինելու ան-  
հուն ցանկություն, նրան իր միտքն ու իղձը, իր սերն ու սիր-  
տը հայտնելու բուռն փափագ, այս մաքով և նա ապրել ու թե-  
վալորդվել: Բայց այդ վոգեվորության լուսավոր բավեներին հա-  
ջորդել է հուսահատության մռայլ խափարը, քանի վոր նա իր  
առջև տեսել է անանցելի խոչընդոտներ, անհաղթահարելի, ար-  
գելքներ: «Վահ քսան-յերեսուն տարուց ավելի ա՝ իմ ազիզ հեր,  
իմ սիրելի ազգ, վոր սիրտա կրակ ա ընկեր երկում, փոթոթվում  
ա, գիշեր, ցերեկ լացն ու սուքը իմ աչքից, ախն ու սիր իմ  
բերնիցս չի պակսում, այս իմ արյունակից բարեկամք, վոր  
մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեյի ու հետո հոգը մանեցի»:  
«Բայց ախ լեզու փակ եր, աչքս բաց, բերանս բոնած, սիրտս  
խոր, ձեսս պակաս, լեզուս կարճ, զանձ չունեյի, վոր զործով  
ցույց տայի ուղածս, անունս մեծ չիք՝ վոր տասծս տեղ հասնի,  
մեր գրքերն ել գրաբառ, մեր լեզուն ել անպատիվ, վոր սրտիս  
հասրաթը խոսքով հայտնեյի»:

Աբովյանը իշխանավոր չեր և վոչ ել հարուստ մեծատուն, սակայն նրան տրված եր խոսքով իր սրտի հասրաթն հայտնեւ լու մի հզոր կարողություն, արվեստագետի շողջողուն տաղանդ: Բայց հենց այստեղից ել սկսվում ե նրա վողբերգությունը: «Յես ել եյի ուզում՝ վոր ինձ վրա չծիծաղեն, չասեն կոպիտ ա, հիմար ա, վոր քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն չփառի, յես ել եյի ուզում, վոր ասեն. «Շն, ենպես խորը, խրթին շարադրել գիտի, վոր սատանան ել միջիցը մեկ բառ չի կարող իմանալ, հասկանալ. . .»:

Աբովյանը կանգնում ե ծանր յերկընտրանքի առաջ. գրել աշխարհաբար, ժողովրդին հասկանալի լեզվով, «վոր մեր խալիսի սրտովը ըլնի», զոհել անուն, փառք, ծաղրվել ու արհամարվել թի հրաժարվել ժողովրդից, յերես դարձնել նրա շահերից, գրել գրաբար, մեծարվել և փառքի տիրանալ: «Եսպես բաները մտածելով, որս ու ումբրս մաշվել եր: Շատ անգամ ուզում եյի իմ գլուխս մահու տամ, չեյի իմանում՝ թե սրա չարեն ինչ կինի: Թողի լսողը չհավատա, ամա ես ցավն ենպես եր սիրոս առել վոր շատ անգամ գժվածի պես ընկնում եյի սար ու ձոր, ման գալիս, մտածում, ել յետ սիրոս լիքը տուն գալիս»:

Այն ժամանակվա պայմաններում հեշտ չեր յելք գտնել բայց և անհնարին չեր այդ Աբովյանի համար: Յերկարատեղ ներքին պայքարից հետո հարցը լուծվեց հոգուտ աշխարհաբարի: Ժողովրդի սերը հաղթեց. «Թողի ինձ այսուհետև տգետ կանչեն, լեզուս բաց ա ելել իմ ընտիր, աղիզ, իմ սրտի սիրեկան ազգ: Թողի արամաբանություն գիտեցողը իրեն համքյարի համար գրի, յես, քո կորած, շվարած վորդին՝ քեզ համար»:

Յեվ այսպես, ընկնում ե վիպասանի լեզվի կապը, միտք կաշկանդող ողակը փշրվում ե, իսկ ժողովրդի և հայրենիքի սերը թեփավորում նրա ծով միտքն ու վաս յերեվակայությունը: Աբովյանը բռնվում ե ստեղծագործական վոգեվորության մի անորինակ տենդով, ապրածն ու լածը վերակենդանանում ե նրա հիշողության մեջ, կրակ կտրած հեղինակի գրիչը այրող խոսքեր և արտազրում: Այդ չսասցող ջերմությունն ե, վոր անցնում ե մեզ, յերբ յուրաքանչյուր անգամ կարգում ենք «Վերք Հայաստանի»-ն:

Այսպիսի անորինակ ծանր ու ցավատանջ յերկունքով

ծնունդ առավ հայ նոր աշխարհիկ գրականության անդրանիկ, ուստի և ամենասիրելի դավակը՝ «Վերք Հայաստանի» անմահ գիրքը:

Հայ գրականության այդ նշանավոր տարեթիվը հանդիսացավ 1840 թվականը:

Աբովյանն իր վեպում առաջին անգամ հոգի վեր հանող, ի խորոց սրտի խոսք ասեց մեր ժողովրդին: Նա ապացուցեց, վոր «կոպիտ ու խակ» աշխարհաբարով կարելի յե դատարկել մարդկային զգացմունքների՝ անհուն ծովը, արտահայտել մարդկային մտքի ամենանըրբին շարժումները: Նա փայլուն կերպով իշրագործեց այն, ինչ վոր այնպես հրամայաբար պահանջվում էր գրողից: Սեր, բարեկամություն, հայրենասիրություն, ճնող, զավակ, մահ, մի խոսքով այն ամենը, ինչ վոր կազմում են մարդկային կյանքի բովանդակությունը, դառան Աբովյանի ներշնչման, ստեղծագործության առարկաները:

Աբովյանը վոչնչացրեց գրականության հին տրագիցիաները, ստեղծելով նոր սկզբունքներ: Նա հեղեղի ուժով և սրբնաթացությամբ առաջ տարավ մեր նոր գրականությունը, խորտակելով նրա ձանապարհին ընկած խոչընդուները, սրբելով, տանելով ինչ վոր հին եր ու փոտած:

Աբովյանը բացեց հայ նոր գրականության բարեգուշակ գարունը...

Հայկական վեպի պատմության մեջ չենք կարող ցույց տալ այնպիսի մի գործ, վորն այս կամ այն չափով առնչվեր «Վերք Հայաստանի» վեպին և հանդիսանար դրա նախորդը՝ Այս իմաստով Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն ավելի մի խիզախ թոփչք ե, քան մեր գրականության որինաչափ զարգացման հետևանք: Դա մի եպիխակազմող յերեվույթ եր, վոր շկոլա ստեղծեց և ունեցավ իր հետեւողները հանձին Պոռշյանի, Աղայանի, Թումանյանի և Իսահակյանի, գրողներ, վորոնք Աբովյանի ժողովրդական սկզբունքների շարունակովը և զարգացնողը հանդիսացան: Այս անունները սերտ կերպով զոդված այն ողակներն են, վորոնք կազմում են մեր նախախորհրդային գրականության առողջ և ամուր վողնաշարը: Ժողովրդայնության սկզբունքը, վոր գալիս և մեր գրականության հետավոր անցյալից, «Վերքի» միջոցով նոր ուժով ավանդվեց մեր նոր գրականությանը:

«Վերք Հայաստանի» վեպում պատկերված է 19-րդ դարի 20-ական թվականների հայ իրականությունը։ Դա Հայաստանի համար պատմական մի այնպիսի ծանր ժամանակաշրջան էր, յերբ այնտեղ ապրող ժողովուրդները, հատկապես հայերը, ծվառվում ելին պարսիկ սարդարների արյունոտ ճիշտաններում։ Ժողովուրդն ապրում էր սարկական կյանքով, յերկիքը վեր եր ածվել տառապանքի մի զնդանի, ամեն ինչ յենթարկված եր Սարդարի քմահաճույքին, բոլոր սրբությունները վոտնահարվում ելին նրա ապօրեն ցանկություններին բավարարություն տալու համար։ «Վոչ տունն եր իրանը, վոչ առպանքը, վոչ ջանը, վոչ ողբւշաղը»։ Իբրև բռնակալության սիմվոլ Արովյանը նկարագրում է Յերեվանի բերքը, այդ «հազար գլխանի գեվը», վոր կուլ և տվել տասնյակ հազար անմեղների։ Զնայած ժողովրդի այն ժամանակավա իշխող խավերը՝ աղայությունն ու նոգերականությունն ակամա համակերպված այդ բարբարոս կարգերին քարոզում ելին հնազանդություն, բայց և այնպիս ժողովուրդը չեր հաշտվում իր վիճակի հետ, չեր ընկճվում բռնակալ ուժի առաջ ժողովրդի մեջ կային ըմբռոտ վոգիներ, վորոնց անկարելի յեր ընկճել սրով և բանտով, նրանց վոգի և համարձակություն եր տալիս հայրենիքի և ժողովրդի աղատության գաղափարը։ Աղասին հայ ժողովրդի հերոսության մարմացումն եր Արովյանի համար։

Ահավասիկ «Վերք Հայաստանի» վեպի համառոտ բովանդակությունը:

Բարեկենդանի տոնին վիպասանի հայրենի զյուղը, Կանաքեռը, արտակարգ ուրախության մեջ և Յերիտասարդները Աղասու գլխավորությամբ ջիւիդի յեն դուրս յեկել զյուղի կալերը, իսկ ծերերը ողաճներում նստած կենացներ են մազթում և զվարթացնող բաժակներ զատարկում: Բայց շուտով այս ընդհանուր ուրախությունն ընդհանուր սուրբի յե փոխվում: Յերեվանի Սարդարի ֆառաջները չար զեվերի պես տարսափ են տարածում վողջ զյուղում: Նրանք յեկել են Սարդարի հարեմը առանելու գեղեցիկ Թագուհուն, իր անմիտիթար ծնողի մինումարին: Մոր սիրտ մղկացնող հարայից զարնուրած զյուղացիք մոռանում են և

տոն, և ուրախություն։ Բայց ժկ եր իր գլխից ձերք վերցրես վոր պաշտպաներ նրանց, և կ հանդիներ դեմ կանդնելու Սարդարի հրամանին. «Սարդարի հրամանին սարը չի դիմանա»։

Այս պահին, յերբ ամբողջ գյուղն ահից քարացած դիտում է Սարդարի ֆարաշների բարբարոսությունը, հանկարծ արծվի սրընթացությամբ հայտնվում ե հոկա Աղասին, որի կատաղի հարվածներով թոցնում ֆարաշներից մի քանիսի զլուխը, իսկ մյուսներին փախուստի մատնում։ Աղասին մի խումբ ընկերների հետ հեռանում է Քանաքեռից։ Հայտնվելով մերթ այսակող մերթ այնտեղ, նա քաջաբար կավում է ժողովրդի ստրկացնողների և բռնակալների դեմ։ Աղասու քաջերի թիվը գնալով մեծանում է, նրանք նվաճում են ընդհանուրի սերն ու համակարանքը։ Վրա յե հասնում ոռուս-պարսկական պատերազմը, Միանալով ոռուսական բանակին, Աղասին անսպասելի խորտակիչ հարվածներ և հասցնում հակառակորդներին ու թուլացնում նըրանց ուժը։ Ոռուսական բանակի հետ Յերեվան մտնելով, նա շտապում է ազատել հորը, վոր տառապում եր բերդում։ Հոր և վորդու ջերմ զրկախառնության պահին զնդանում թագնված քարաշները սրախողիսող գետին են տապալում քաջ Աղասուն։ Հերոսի հոր ապրած անսահման ուրախությունը տեղի յե տալիս խորը կսկիծի. նա չի դիմանում վայրկյանաբար իրար հաջորդող այդ ծայրահեղ զգացմունքներին և նույն ըովելին անշնչացած ընկնում է վորդու դիակի վրա։

«Վերք Հայաստանի» վեպում Աբովյանին հուզում են հարյուրավոր հարցեր, բազմաթիվ ու բազմազան այնպիսի խնդիրներ, վորոնք հասունացած լինելով՝ իրենց շտապ լուծումն են պահանջում։ Վիպասանը չի կարողանում նրանց կողքով անտարբեր անցնել և այդ և պատճառը, վոր նա հաճախ ընթերցողի ներողամտությունը խնդրելով, ընդհանում ե բուն պատմությունը, շեղվում մերթ այս, մերթ այն հուզող հարցի կապակցությամբ և զիգզադ ու վոլորուն ճանապարհներով կրկին վերադառնում հիմնական ուղղուն։ «Լավ չի սկսած բանը թողնել ու եսպես քարող ասել յես ել զիտեմ, ամա սիրոս չի դիմանում, ինչ անեմ»։ Ժողովրդի վիշտը, անլուր տառապանքը հեղինակին շատախոս և գարձնում. երփում, կսկիծում ե նրա սիրտը, շատ անգամ նա անկարող ե լինում զսպել իրեն ու հույզերի տարերքին

անձնատուր յեղած՝ գնում ե ու մեկ ել հանկարծ ուշքի գալիս. . . «Բայց վայ ինձ, ուր հասա, ուր տարավ ինձ իմ կսկիծը, իմ երած սիրալը Լեզուս չի, վոր խոսում ա, հոգիս ա, վոր զգում ա, ազգիս արինը առաջիս թափում, իմ հայրենիքը առաջիս քանդը դըմ, իմ սիրելի աղբոր աղի արտասուքը ու դառը սուքը՝ սիրտըս երում խորովում։ Ինչպիս բերնիս հուզ տամ. արինս քթովս ա դուրս գալիս, աչքս կայծակին տալիս»։

Աբովյանը հաճախ դիմում ե ընթերցողին, խոսում նրա հետ, ազաշում-պաղատում նրան համոզվելու, ճիգ ե անում իր հուզմունքը նրան հաղորդելու, իրեն վշտակից ընկեր զարձնելու և այդ կերպ միսիթարվելու։ Հեղինակը միշտ ընթերցողի հետ ե. վոչ թե գրքի մեռած տառելն են խոսում, այլ ինքը, կենդանի հեղինակն ե մեղ հետ զրոցում, մեղ պատմում մի հուզող վիշտ, մեր ժողովրդի գլխով անցած գնացած մի ծանր պատմություն։ Հեղինակն ամենից շատ ե խոսում, բոլորի հետ հուզվում, անցող-դարձող դեպքերին նա չի կարողանում սառնասիրտ նայել։ Նա վոչ միայն մարդկանց հետ և խոսում, վոչ միայն մարդիք են նրան միսիթարում, այլ և ընության հետ, բնությունն ել և արձագանքում վիպսասանի բուռն ապրումներին։ Բնությունն Աբովյանի գրչի տակ կենդանանում լեզու յե առնում, սիրտ ու զգացմունքներ, միտք ու խոհեր ստանում ու խոսում նրա հետ։ Բնությունն ել հեղինակի հետ մեկ տեղ ուրախանում և ու տըխը բում, նրա պես անզուսպ կրքով բռնկվում չար մարդկանց ու չար գործերի գեմ։ «Ամպերը ոխուը գլխանի վիշտապի նման՝ յերկըն-թիցը ճոլոլակլյեղած՝ վոր բերանը չեյին բաց անում, խփում, ուզում եյին վոր սաղ յերկինքը կում անեն, ծամեն, փշուր-փշուր անեն ու ել յետ հազար թիքա արած ածեն անիրավ մարդի գլխին՝ վոր վիչ յերկնքիցն ա պատկառում, վիչ աստվածանից վախենում, վիչ ջուրը իրեն որինակ առնում, վիչ հողից մեկ խրատ վերցնում, վիչ իր խեղճ հոգու ներքին ձենը լառմ. . .»։

Չարը պատժող բնությունն անմեղին, խեղճին, թուլիին, անպաշտպանին հովանավորում, մոր պես իր զրկում պատսպարում, թագցնում ե, նրա վիշտն ե լալիս, նրա սուզն անում. «Յերկինք, յերկիր, սար, ձոր՝ ականջ աչք խփել, լալիս, ոսուդ եյին անում, դոշներին ծեծում, գլխներին տալիս, յերեսները պոկում, պոճկում, ամպք ուզում եյին Խլղարաքիլիսեն վերեվ քա-

շեն, անդունակք իրանց ծոցը քաշեն պահեն, քար ու հող իրար կտրատում, սպանում ելին...»:

Խճճված իրեն հուզող հարցերի լարիբինթոսում, նա հաճախ կորցնում է պատմության թելը, յերբեմն հակասում իրեն... Բայց կը կին տարերքի ուժգին մղումով նա գտնում է կորցրած հունը:

«Վերք Հայաստանի»-ն Արովյանը գրել է անսասելի կրքով, մեծ լարվածությամբ, ասես շունչը պահած: Ստեղծագործական այդ բուռն կրքի ու լարվածության ուժն արտահայտվել է նրա հախուռն վոճի, յերկար ու վլորուն նախաղասությունների և անսովոր ու անորինակ պատկերների մեջ: Յերեանի բերդն է նկարվագրում, թե Զանգուն, ձմեռը թե ամառը, յերկիրն իր հրաշալիք ներով, թե յերկինքը փոթորկի ու կայծակնահարության պահին, ուրախություն և արտահայտում, թե վիշտ, հերոսների արտաքինն և պատկերում, թե ներքինը, իր ապրումներն և պատմում, թե ուրիշինը—բոլորը, բոլորն այնքան յուրորինակ ձևով և կատարվում, այնքան տարբեր ընդհանրացած, բազմաթիվ հեղինակների մոտ կը կնող միատեսակություննից, վոր յերբեք չի կարելի Արովյանինը չճանաչել, ուրիշինի հետ շփոթել:

«Վերք Հայաստանի»-ն ստեղծվել է մի ժայթքումով, հըսկայական տաղանդի և ծով զգացմունքի ահուելի ուժով: Այստեղ մարդկային տարերքի ուժը մրցում է բնության ուժերի հետ—հեղեղի, փոթորկի կամ փորոտի հետ: Հուզականությունը վեպում հաճախ այնպիսի չափերի յի հասնում, վոր անհնարին և դառնում այն արտահայտել արձակի միջոցով, ուստի արձակը բնականորեն վեր և ածվում չափածոյի: Այդ անցումը չի կատարվում հանկարծակի, այլ նախապատրաստվում է, հոգականությունն աստիճան առ աստիճան աճելով, բարձրահալով հասնում և այն կետին, վորից դենը պրոզան փոխվում և պոեզիայի: Ամբողջությամբ վերցրած «Վերք Հայաստանի»-ն առավել մի պոեմ է, քան վեպ:

Արովյանը «Վերք Հայաստանի»-ն գրելիս նախ և առաջ նկատի յե ունեցել այն, թե ի՞նչ ձեռվ, ի՞նչ կերպ ելին ժողովը դից սիրված աշուղները մեջլիմներում պատմում, շարադրում իրենց զբուցները, հերոսական պատմությունները, վեպերը: Արովյանն ուրիշ փափագ չուներ, քան ժողովրդին հասկանալի և հաճելի մի գործ չորինել: Իզուր չե, վոր նա իր վեպի առաջա-

բանում ասում ե, «Ասեցի ինձ ու ինձ, արի մեկ աշըդ ել գու զառ, ինչ կըլի կըլի»: Յեկ իրոք, հետեւլով աշուղների որինակին, նա իր վեպը պատմում է պարզ, ըոլորին հասկանալի լեզվով: Հեղինակին իրեն զգում է աշուղի գերում, աշուղ, վորը մեջիւսում նստած պատմում է իր վեպը և, ունկնդրող հասարակությանը թարմացնելու համար, մեջ լնդ մեջ յերգում: Դրանով ե բացատրվում Աբովյանի վեպի յերգախառն լինելը:

Ժողովրդական ձեերից բացի, Աբովյանն ոգտվել է ֆրանսական և գերմանական կլասիկ գրականության, մասնավորապես Ռուսացի, Գյոթեյի և Շիլլերի փոքչից: Արեվելյան և արեմլույան կուլտուրաների մի հետաքրքիր ու յորորինակ խաչաձեման արդյունք և Վեերք Հայաստանին: Աղասին, իրեն ծընունդ մեր իրականության կոնկրետ պատմաշընակի, հիմնականում կերտված և արեվելյան ավանդավեպերի կիսալիքինդար հերոսների որինակով: Մյուս կողմից նա հիշեցնում է մերթհայրենիքի ազատության համար մարտնչող Վիլհելմ Տելլին, մերթ՝ բռնության և անարդարության դեմ ծառացող Կարլ Մոռին և մերթ՝ խորհրդածող ու թախծոտ Վերթերին, վոր ձգտում եր հասկանալու բնության իմաստը, պարզելու բնության և մարդու փոխարարերությունը՝ ներգաշնակություն գտնելու համար նրանց մեջ:

«Վեերք Հայաստանին» մի գործ է, վոր խարսխված է իրականության վրա: Դա պատմական վեպ և իր մեջ անդրագարձնում է մի ամբողջ ժամանակաշընակ և ամբողջ ժամանակաշընակը իր կարեվորագույն հարցերով, ժամանակի կողմից առաջադրած խնդիրներով, խնդիրներ, վորոնց հեղինակն իր ժամանակի համար հիմնականում ճիշտ—ռեալիստական լուծում է տվել:

19-րդ դարի 20-ական թվականների մեր ժողովրդի քաղաքական և տնտեսական վիճակն ու նրա պայքարն իր անկախության համար, նրա հեռավոր ու մոտիկ ձգտումներն իրենց իրական արտահայտությունն են գտել այդ վեպում: Խորը ռեալականությամբ Աբովյանը տվել է հայ գյուղի տնտեսական և քաղաքական պատկերը և իր վեպի այդ կողմով հանդիսացել Պոռշյանի և մեր մյուս գյուղագիրների ուսուցիչը: «Վեերք Հայաստանին» կենդանի գծերով տրված ենակ Սարդարի Յերևանն իր քաղաքական և տնտեսական կյանքով ու բարքերով: Աբովյանն

առաջին հեղինակն եւ, վոր տվել եւ առևտրաւվաշխատուական կապիտալի ու նրա ներկայացուցիչների բնորոշ գծերը, պարզել եքաղաքի և գյուղի փոխարարերությունը, նախատեսել այդ հարաբերության զարգացման տեսդենցը—գյուղի ապագա քայլայումը, Վերջապես պայքարը հանուն նոր լեզվի, նոր գրականության իրեւ ժամանակի ռեալ պահանջ, իր ցայտուն արտահայտությունն եւ գտել «Վերք»ում: Ժողովրդի լեզուն իր հարստության ամբողջ պաշարով, իր պատկերավորությամբ, իմաստությամբ ու գեղեցկությամբ Արովյանի միջոցով մուտք գործելով գրականության մեջ, իրագործեց ժամանակի ամենառեալ պահանջներից մեկը:

Այս և Արովյանի վեպի այն առաջ կորիզը, վորից հետագայում աճեց հայ ռեալիստական վիպաղորությունը:

Իր հյությամբ հանդիսանալով ռեալիստական գործ, «Վերք Հայաստանի»-ն ունի ոռմանտիզմի և սենտիմենտալիզմի ուժեղ շաղախ: Աղասին ոռմանտիկական մեթոդով ստեղծված գաղափարական հերոսի ցայտուն որինակներից մեկն եւ մեր գրականության մեջ: Հեղինակը նրան ներկայացնում է իրեւ կատարելատիպ, բոլոր բարեմասնություններով ոժտված անթերի և անարատ մարդ: Իր չափազանցված քաջագործություններով Աղասին յերբեմն հիշեցնում է ժողովրդի անզուսպ յերեակայությամբ ըստեղծված դյուցազներպությունների հերոսներին, Թագուհին իր արտակարգ գեղեցկությամբ և մյուս գծերով վեր և մարդկային յերեակայությունից: Զափի զգացումը Արովյանը կորցնում է մանավանդ իր հերոսների զգացմունքները նկարագրելիս: Նրանք հուզմունքից ուշքը կորցնում: Թագուհու մոր սուզը այդպիսի գերզգայնության գլուխ գործոց եւ:

Արովյանի վեպի այս հատկություններն իրենց ժամանակին նոր և դրական յերեսոյթներ են: Հակառակ կեղծ-դասական անկյանք ուղղության, ոռմանտիզմը և սենտիմենտալիզմը գրականությանը բերին կենդանի շունչ, հարուստ զգացմունքները և ներ և դիմամիկա:

Արովյանի վեպը պատկերում է կենդանի մարդուն իր հարուստ ներքնաշխարհով, նա ընթերցողի ուշադրությունը յերկ-

նային բնագավառներից հրավիրում և զեպի յերկիր, դեպի բնություն, զարգացնում և բնության զգացում, բնության սեր, ստեղծում բնության կուլտ:

Գ

«Մարդի զրախտն ու կյանքը հենց են ա, վոր խեղճ ժողովրդի ցավը հասկանա...», — ասում ե Աբովյանն իր մի բանաստեղծության մեջ: Նրա կյանքի նշանաբանն ել այդ և յեղել: Հայ անցյալ դարի գրողներից քչերն են Աբովյանի չափ խորը հասկացել ժողովրդի հետ: Աբովյանի ամենանշանավոր յերկի, «Վերք Հայատանի» վեպի մեջ, Նալբանդյանի արտահայտությամբ, «մարմին և առել աղջի հոգին, աղջի ներկա վիճակը, աղջի հասկացողությունը»: Հայատանի վերքը՝ հայ ժողովրդի կրած տառապանքն ե, վոր, ինչպես Թումանյանն ե ասել, «վերք գառավ, կպավ նրա սրտին»:

«Վերք Հայատանի» վեպում դարեր առաջ իր անկախությունը կորցրած հայ ժողովուրդը առաջին անգամ ինքնաճանաչման և ինքնազիտակցման փորձ և անում: Խոշոր պետությունների արանքում արորված, մոլորված ժողովուրդը կամենում է վորոշել իր տեղը, դերը մյուս ժողովուրդների և պետությունների շարքում, հանգես գալու վորպես ինքնուրուցն ժողովուրդ, իր հարուստ անցյալով և գալիքի հավատով ու հեռանկարով: Աբովյանը նկարագրել է պատմական այնպիսի մի ժամանակաշրջան, յերբ հայ ժողովուրդը պարսիկ Հյուսիսին խանի բռնակալ լծից ազատագրվելը գարձնելով իր համար կյանքի և մահու խընդիր, ոգնություն և ստանում ուստական միապետությունից, ընդունում նրա տիրապետությունը, վոր պարսիկ սարդարների բարբարոսությունների և կամայականությունների համեմատությամբ անկասկած նվազ ծանր եր: Ռուսական տիրապետությունը, ինչպես Վրաստանի, նույնպես և Հայատանի համար «չարիքի փետքագույնն եր»:

«Վերք Հայատանի» վեպով, ինչպես և իր բոլոր գործերով, Աբովյանը ժողովրդի շահերի ջերմ պաշտպանն ե, նրա դարավոր իղձերի ու տենչերի ամենախոր և անկեղծ արտահայտիչը: Ժողովրդի պայքարն ստար բռնակալների դեմ իր պատության համար՝ ահա թե ինչն ե վոգեվորել Աբովյանին:

«Վերք Հայաստանի»-ն մի խոշոր սոցիալական յերկ և, վուրի մեջ իրենց գեղարվեստական արտահայտությունն ու լուսաբանությունն են գտնել ժամանակի այրող հարցերը, քաղաքական, հասարակական, կուլտուրա-լուսավորական բոլոր խնդիրները, լուսաբանված եպօխայի ամենասառաջավոր մտքի տեսանկյունով։ Յելլուպայում և Ծոլսաստանում պրոլետայիլ միտքը վազուց ի վեր ծառայում եր ֆեռագալական ձնշող կապանքների վերջնական ու անվերադարձ վոչնչացման գործին, շահագործող դասակարգերի գեմ ժողովրդի մղած պայքարի գործին։ Մեզ մոտ, հայ կյանքի առանձնահատուկ պայմանների շնորհիվ, այլ յերանգ, այլ գույն և ստանում կուլտուրական-լուսավորական շարժումը. այն կապվում և ազգային աղատագրական շարժման հետ, ծառայելով ժողովրդի քաղաքական շահներին։ Լուսավորական հարցերը Աբովյանի մոտ իրեւ անկախ հարցեր գոյություն չունեն, նըանք կապակցվում են ժողովրդի քաղաքական աղատաւթյան և այլ նպատակի համար մղող պայքարի ինքիրների հետ։ Այս իմաստով «Վերք Հայաստանի»-ն մի քաղաքական վեպ և, գրված հայ ժողովրդի ազգային կերպարանավորման տարիներին, գործ, վոր մեծապես նպաստեց նրա քաղաքական զարթոնքին, ազգային ինքնազդակցությանը և ինքնաճանաչմանը։

«Վերք Հայաստանի» վեպում Աբովյանին զբաղեցնող հիմնական հարցը մեր ժողովրդի վիճակն և, նրա քաղաքական դրությունը. սակայն սրան զուգահեռ, իրենի սրանով պայմանավորված ածանցյալ խնդիրներ, նա հրապարակ և հանում «ազգի» լուսավորության, կուլտուրական մակարդակի բարձրացման, քաղաքական հորիզոնի լայնացման հարցերը, հարցեր, վորոնք իրենց հերթին առաջ են մղում նոր խնդիրներ՝ լեզու, գրականություն, դպրոց և այլն։ Աբովյանի խորը համոզունքով հարյուրամյակներ բռնության ներքո տառապած ժողովրդին կարելի յե և անհրաժեշտ ե տեղական, համառ աշխատանքի միջոցով, նոր սերնդին կրթելու ճանապարհով զգաստացնել, նրա մեջ աղատաւթյան սերվառել, պայքարի գիտակցություն արմատացնել «Մինչև գարունը չփա, ծառ չի ծաղկի, առանց ամառի պտուղ չի հասնի, ըուղում հս՝ վոր ձմեռվա են սաստիկ ցուրտ, սառած ժամագույն վարդի հոտ առնիս քո բաղումը, հասած պտուղ քաղեսքո բաղչումը, եղ ելմծ բան ա, կամ կլի՞ ըսկի։ Խեղճ ազգի հոգին

մինչև եսոր քաղել են, հազար տարվա յարա ունի սրտումը,  
վոր դեռ չի սաղացել հնքան գառըն արտասուբ ա կուլ տփել  
վոր աչքումը լիս չկա, վոչ բերնումը համ, վոչ սրտումը յեղ,  
գու հենց ուզում ես՝ վոր եստոնք մեկ սհաթումը անց կենան,  
ինչպես կիմի»:

Աբովյանը արդարացի զայրույթով զատապարտում և հոգե-  
վորականությանը, վոր վոչ միայն չեր նպաստում ժողովրդի ազ-  
գային ինքնագիտակցությանը, այլ և բռնակալ ուժի հանգեպ  
քարոզում ել քրիստոնեական հնազանգություն, սարկամտու-  
թյուն և համբերատարություն: Դեռ ավելին, կղերը հալածում եր  
բոլոր նրանց, ովքեր խաչի փոխարեն սուր եյին վերցնում, ա-  
զոթելու տեղ պայքարում, ում մեջ վառ եր աղատաօիքության  
և հայրենասիրության ըմբոստ վոգին: «Քրիստոնեն սրով չի  
պետք ե իր բանը յոլա տանի: Նրա թուրք եր համբերությունը  
ու հավատն ա՝ եղակա արեց մեր են եշ գեղցի հիմար Աղասին  
ել, վոր մեկ աղջկա խաթեր թուր քաշեց ու խեղճ քանաքեցիք  
հնքան ջառմա տվին ու նրա հալըվոր հերը ու գեղի քեղիսու-  
դեքը՝ եսա հինգ տարի ա բանտումը քոթկումը չորանում, մաշ-  
վում են ու ասաված զիտի թե վերջը ինչ կըլի, ինքն ել գժի  
պես ընկել ա սարեսար չափմիշ անում, ճամբա կտրում ու իր  
թշվառ որը եսպես անցկացնում: Ո՞վ ա զիտում, թե վմր քարի  
վրա զլուխը վեր կդնի ու ինչ տեղ շներոց, գելերոց կըլի: Լամբ-  
են չի, վոր մարդ զլուխն իրեն քաշի ու տաղ անի. չե, չե՝ սի-  
րելիք, քանի կարանք մեր զլուխը պահենք, հա կասեն, հա ա-  
սենք. չե կասեն, չե ասենք, կասեն՝ նստիր, նստենք, վեր կաց՝  
վեր կենանք. մինչև տեսնենք՝ թե բանն ինչ տեղ կըհանիր: Քիչ  
հետո ծանոթության կարգով Աբովյանն ավելացնում ե.  
«Ես խոսակցությունը իմացողը կիմանա, թե ինչ եր մեր խեղ-  
ճության պատճառը: Ել յիս չեմ ուզում բերանս բաց անելը:»

Վանականի դեմ առարկող աշխարհականը, վոր հոգինակի  
մտքերն ե արտահայտում, հետեւյալն ե ասում. «Թուր վոր չու-  
նիս՝ զլուխդ կտրում են, ողլուշաղդ քաշում, կերտծդ հարամ ա-  
նում, զատածդ խլում, քեզ ել յեսիր անում. աշխարհն եսպես ա,  
ինչ կարաս անիլ: Աստված զշին, հայքանին ել յա չանգ ա տը-  
վել, յա պոզ, յա ատամ; վոր չանկոի, հարու տա, կծի, եր զը-  
լուխը պահիր: Յեվ այսպես, սեփական անձի, ժողովրդի, յերկըի

պաշտպահությունը մի բնական անհրաժեշտություն է, նույնական բնական ու անհրաժեշտ, վորքան յերկրի վրա ապահով կլանք, յերկնքի տակ ազատ անկյուն ունենալը:

Ժողովրդի ազատությունը կփառ նրա լուսավորության հետ: «Յարաք վորք լավ կարդացող երեխել կարդացող ջոկ ժողովրդին ջոկ, գիշեր ցերեկ խրատ ավել կարդացը ել լուսավորել եր, հիմիկ մեր ազգը ես հալին կըլեր»:

Ժողովրդի, հատկապես նրա նոր սերնդի լուսավորության խնդրի իրազործումը Արովյանը կապում է մտավորականության հետ: Նա պիտի մաքրի քար ու տատասկը ժողովրդի լուսավորության ձանապարհից: Նա պիտի կործանի ժողովրդի կյանքը սահմանափակող չինական պարիսպները և անարդել ուզի բաց անի լույսի և զիտառթյան առաջ Սակայն, Արովյանը մի պահ հուսահատվում է, տեսնելով ժամանակի մտավորականության սառն անտարբերությունը գեղի հասարակական կյանքը: Նա անխնա հարվածում է կղերապահապահողական պորտաբույժ մտավորականության եղուստական հակումները, սեփական բարեկեցության, շվայտության ձգտումները, նրանց ապականված կյանքը: «Ա՛խ, մեր կարդացողներ, մեր կարդացողներ, Բնչ կըլի վոր ինչքան ժամանակ քնի, քեզի հետ են անցկացնում, աշվելի փողի թամահ անում, հնապես բանի թամահ անեն, մեզ լուսավորեն, իրանք ել թշնամուց-հարամուց աղատվեն, մեզ ել աղատեն»: «Ախ հազար եսպիսի ցավեր կան սրտումս, համա բերանս փակում են, չեմ կարում ասել», — դառը կսկիծով յեղափակակում է Արովյանը:

Մտավորականության հին սերնդից հուսախարված վիպասանը հաստատուն հույսեր է կապում նոր սերնդի հետ: Դիմելով նրան, Արովյանը թախանձագին խնդրում է սիրել մայրենի լեզուն, վոր աղջի գոյության նախապայմանն է, նրա կուլտուրայի հիմքը, ստեղծել աղջային զբականություն, իբրև մեր ժողովրդի ինքնության ապացույց, իբրև նրա գոյության իրավունք մյուս կուլտուրական ժողովուրդների շարքում: «Ձեզ հմատում՝ ձեղ՝ հայոց նորահաս յերիասարդդք՝ ձեր անունին մեռնեմ, ձեր արելին զուրբան: Բայ չե՞ք ուզիւ վոր գուք ել գըրքեր գրեք, աղջի միջումն անուն թողաք, ձեր գրքերն ել ոտար աղջեր թարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա-

անմահ։ Դժվար չե գուշակել թե վորքան խորը ազդած պիտի լինելին Արովյանի խոսքերը ժամանակի յերիտասարդ սերնդի վրա։ Նա ինքն այդ սերնդի պարագլուխը հանդիսացավ, իր քառողած գաղափարների առաջին առաքյալը դարձավ։

«Վերք Հայաստանի» վեպում արծարծվել են նայ վերածնության շարժման համարյա բոլոր հիմնական խնդիրները։

Ժամանակի առաջավոր մտավորականությունը նրա մեջ գտավ իրեն հուզող հարցերի պատասխանը։ Հայտնի յի, թե ինչ ցնցող տպավորություն գործեց ընթերցողների վրա «Վերք Հայաստանի»-ն սրանից մոտ 80 տարի առաջ։ 1858 թ. ականավոր վիպասան Պերճ Պոռշյանը «Վերք Հայաստանի»-ն կարդաց աննընկարգը վոգեվորությամբ և նրա խորը ազդեցության ներքո հղացավ ու գրեց «Սոս և Վարդիթեր» վեպը, Ղաղարոս Աղայանի անդրանիկ վիպի հերոսները՝ Արությունը և Մանվելը իրենց լուսավորական գաղափարները քաղում ելին «Վերք Հայաստանի»-ից։ Անկասկած ե, վոր շատ ավելի խոշոր կլիներ «Վերքի» գերն ու նշանակությունը, առավել խորն ու ուժգին նրա ներգործությունը, յեթե այն լույս տեսներ ժամանակին՝ 40-ական թվականների սկզբին, մինչդեռ նա լույս տեսավ 18 տարի հետո՝ 1858 թվականին։

### Դ

Առաջ քաշելով մեր ժողովրդի ապագա վերածնության խընդիրները, Արովյանը հասարակական վար խավի հետ և կապել իր հույսերը, ինչ շահեր և հետապնդել։ Գյուղացիության մեջ և տեսել նա մեր կյանքի վերածնության առողջ սաղմերը, գյուղն և համարել այն բջիջը, վորէց պիտի առաջանար նոր կյանք։ Արովյանը մերժում է կապիտալիզմը, վոր իր հետ բերում եր շահագործում և քայլացում։ Առևտրական կապիտալին նա հակադրում և «արդար յերկրագործությունը», վորով աշխատավորությունը պիտի հասներ ցանկալի յերջանկության։ Արովյանի մի անտիպա աշխատության մեջ կարդում ենք հետեւյալը. «Վոչ կույր բախտը կամ չարչիություն, այլ արդար յերկրագործություն կարե հասուցանել զմարդն անհնարին հարստության և բախտավորության, յեթե միայն մարդն կարիցե պարապել նովավ։ Հայ շինականին չի

պակասում աշխատասիրությունը և յեռանդը, սակայն նա զուրկ է կուլտուրայից, չգիտի իր տնտեսությունը կուլտուրական ձեռվ վարելու յեղանակը: «Եթուականք հայոց, — գրում է Արովյանը նույն տեղում, — աշխատասիր են, միայն վոչ գիտեն զիերան աշխատության»: Այս գրությունը լուրջ մտահոգություն և պատճառում Արովյանին, և նա իրբե ժողովրդի որտոկից բարեկամ, նրա տնտեսությունը բարձրացնելու համար ճանապարհներ և վորոնում: 1845 թվին Արովյանը փորձ և անում զյուղիրի համար բերել տալու բամբակի, ծխախոտի, քրքումի և կուլտուրական այլ բույսերի ընտարի սերմեր, ինչպես նաև բամբակաղտիչ մեքենա: Այս տեսակետից հետաքրքրական նյութ և տալիս Արովյանի «Պատմություն Տիգրանի» մանկավարժական անտիպ վեպը: Այստեղ հեղինակի կրթաշղաստիրակշական խնդիրներից մեկն ել յերեխաների, ինչպես յեվ նրանց ծնողների մեջ կուլտուրական գյուղանահետության պրոպագանդն եւ Ռւնեվոր տընտեսատեր Դիվանքեղը այդ վիճակին հասել և շնորհիվ այն խելացի ու նպատականարմար միջոցների, վորոնք նա հմտորեն կիրառում և իր տնտեսության մեջ: Դիվանքեղի տնտեսությունը բազմածյուղ եւ նա չի արհամարում մշակույթի վորոնե տեսակ և, վոր գլխավորն ե, նա գիտի անհրաժեշտ խնամք տանել հողի, բույսի, անասունի, թռչունի վրա և այլն:

Թեև 10 տարեկանից Արովյանը թուղել և գյուղը, սակայն յերբեք չի խորթացել նրան, մշտական սերտ կատի մեջ և յեղել յուրայինների և համագյուղացիների հետ, ոգնել և նրանց իր բարի խորհուրդներով ու խրախուսանքներով: Քանաքեցիների հիշողության մեջ յերկար ժամանակ վառ կերպով պահպանվել են նրա խոռքերն ու զրույցները: Անա Արովյանի չափազանց բնորոշ զրույցներից մեկը, վոր Ն. Տեր-Կարապետյանին հաղորդել և մի քանաքեցի: «Գյուղական կյանքը գովկելի կյանք ե, չպետք ե ձեռքից տալ: Մենք թեև ուսումնական ենք, բայց կզաժամանակ, վոր կը կը վարած պաշտօններից և չենք կարող ապրել քանի վոր անընդունակ դարձած լինելով, չենք կարող հողը մշակել, վոր միակ միջոցն և կյանքի համար: Աշխատեցէք, ձեր հալալ աշխատանքը ձեռքից միք տալ: Վար ու ցանը պատվական արհեստ ե, աստված որհներ և մշակի ձեռքի նեղությունը: Մենք մեր զանախների համար հարցուր ոռութիւն յենք

մմիում, վոչինչ լազաթ չենք տեսնում, իսկ դուք ձեր ունեցածով շատ պարզ ե ուրախ եք անցկացնում, քաղաքացիներին նախանձի ձգելով։ Մրանով չեմ ուզում ասել, վոր ձեր յերեխաներին հենց սկզբից տվեք միայն դաշտային աշխատանքի, վոչ, դրա հետ պետք ե միացնել ուսումը։ Բանի վոր գրանով նա կարող ե ավելի հեշտ և լավ ապրել։ Պետք ե յերկուսովս միանանք, այսինքն դուք դաշտայինը սովորացնեք, իսկ յես՝ գրքինը, այն ժամանակ յերջանիկ մարդիկ կունենանք»։

Մարդկային լավագույն բարեմասնությունները՝ պարզություն, շիտակություն, անշահասսիրություն, հյուրապիրություն, աշխատասիրություն—կազմում են զյուղացիության խարակտերի հիմնական գծերը։ Իդեալականացնելով զյուղը, Արովյանը Ռուսոսի պես ժխտողաբար ե վերաբերվում գեղի քաղաքը, տեսնելով այնտեղ միայն արտաներ, ապականություն և շահագործում։ Քաղաքում իշխում է չարչիական վոգին, ժլատությունը։ Հարստանալու, փող դիմելու տենչը սպանում և լավի ու մարդկայինը։ «Նալլաթ» կարգալով փողին ու նրա կարողին, Արովյանը փառաբանում է հողը, հողի վրա գործադրվող աղնիվ աշխատանքը, այդ աշխատանքի արդար պառակները և դրանց գոհ ու յերջանիկ վայելողներին։ Անա թե ինչ և ասում Արովյանի զյուղացին։ «Թեկուղ փողի համ առած՝ թեկուղ իր միսը կերած՝ հեսաբը միկ ա։ Տաշտումը հաց ունենամ, կարասումը գինի, ջվալումն ալիք՝ հերն անիծած վոր չիփլախ ել ըլիմ գարդ անեմ։ Ոջախս լիքը ըլնի, առնըս բարաքյաթ, վորդիքս սաղ սալամաթ, թնդորը հազար մարդ մանի, հազար մարդ զուրս զա, ինչ ևմ հոգում, հացն աստծունն այն ել հետք, ով հասնի թնդ ուտի։ Տերին փառք՝ տեղը հլա շատ կա, աղերքս սաղ ըլին, ջանս ալլըի։ Դըգակի ծուռը կլնիմ, քեփս արամիշ կանիմ, ով թամբալ ա, թողնա գարդ անի»։

Այստեղ արտահայտված ե մի ամբողջական աշխարհայտցք։ Գյուղացին չի մտածում կուտակելու մասին։ Նու աղատ և հարստություն դիմելու ախտավոր ու անբնական կրքից։ Նրան շատ բան հարկավոր չի իր ընտանիքի հետավոր ու մուտիկ բարեկամի և ծանոթի, նույնիսկ պատահական անծանոթի հետ ամեն որ ուրախ ու առատ սեղան վայելիլու համար։ Բնությունը վարձատրում է նրա աշխատանքը։ Աշխատավորը միշտ ել զտնում

ե իր որվա ապրուստը, իր մի կտոր հացը ու դրանով գոհ մնում : «Ի՞նչ պետք է տանենք ես փուչ աշխարհից. դարդակ յեկել ենք, դարդակ կերթանք : Սաքի վոր շատ ել մաւ դովլաթ ունեցա, աշխարքի տեր դառա հո ելի պըտի հողը մտնիմ, իմն ա մի բուռ հողը, մեկ գաղ կտավը : Լավ ըլիմ լավ կասեն, վատ ըլիմ վատ» :

Գյուղացին հպարտ ե իր հողով, իր ազնիվ աշխատանքով և հողից ու աշխատանքից ստացված արդար վաստակով : Գյուղացու սիրտը բաց ե, ինչպես իր տան դուռը, նրա ձեռքը շռայլ՝ ինչպես իր բարերեր հողը : Նա ատելությամբ ե լցված դեպի փողատեր քաղաքացին, վորը ժիատ ե, անհյուրընկալ, աչքը չուած ուրիշի ունեցվածքին : Ահա թե ինչու յե գյուղացին ասում . «Քաղաք վոր մտնում եմ՝ հենց իմանաս թե աշխարքը սով ա ընկել. ել վոչ խեր կա, վճչ բարաքյաթ : Հացն ու ջուրն ել վոր փողով ըլնի ծախում ու առնում, ել մւմ դուռը գնաս՝ մւմ ձեռդ դեմ անես : Են մարդն ել՝ վոր քո տանը կերել խմել ամսով տարով քո աղ ու հացի վրա յե ելել աչքը աչքիդ առնելիս՝ հենց գիտես՝ թե գյուլով խիեցին : Յետեվն ա քեզ դեմ անում, աչքը քամակը քցում» :

Կապիտալիզմի սպառնալիքը լուրջ վտանգ ե հանդիսանում նահապետական գյուղի համար : Գյուղացին նախազգում ե, վոր ժամանակները փոխվում են : Նոր հարաբերությունների սաղմերը քաղաքից գյուղ են ընկնում : Գյուղացին քաղաքից վերադառնում ե փետրահան յեղած և նոր ու անծանոթ խոհերի մեջ ե ընկնում, աշխատում ե հասկանալ իր համար նոր այդ յերեսոյթները : «Ճոպթ առնելիս՝ հո շատն ուղում ա մեկ յերկու շահի փող ենք դատել են ել ա խլի : Հեյ գիտի ժամանակ հա, մվ եր տեսել, կամ լսել ավալի ովթա եսպես բաներ. գառն ու գելը ի միասին արածում եյին, հիմիկ կոլը վեր են քաշում, վոր տեսնեն թե տակին յարաբ Գորթ կմ, թե չե՞ : «Դու ել թե ձեռիցդ գալիս ա,— պատասխանում ե սրան մի այլ գյուղացի, — զանակդ որիր, մեկ կողմից ել վրա թուիր, աշխարքս թալան թալան ա» :

Կապիտալիզմի ազդեցությունն անբարոյացնող ե ու այլամերող : Մարդը դուրս ե գալիո մարդկային բնուկան կյանքի ճանապարհից : Զարչիական կենցաղի ու հոգերանության գծերն սկսվում են պատվաստվել գյուղում :

Արովյանն ամբողջ ուժով ծառանում ե թալանի աշխարհի—կապիտալիզմի դեմ: Հակագրվելով քաղաքին և առևտրականին, Արովյանը ծայրահեղության մեջ ե ընկեր իդեալականացրել ե գյուղը. գյուղացու տնտեսությունը նա ներկայացնում ե իրեւ լիության և առատության ծով, վորանեղ միայն ոճի ձուն ե պահանականից լավ իրեն, Արովյանին եր հայտնի, վոր գրությունը գյուղում այդպիս չեր: Հաքստհառուղենին տված նրա տեսդեկությունները Սարգարի հարկանանների մասին և ուրիշ շատ փաստեր ցրում են ամեն մի կասկած այդ առթիվ: Արովյանն այդ անում ե գիտակցորեն: Նա չափազանցնում ե գյուղացու բարեկեցության փաստը, գյուղի առավելությունը քաղաքի հանդեպ ավելի ցցուն գարձնելու մտադրությամբ:

Եեթև առելվականն ու վաշխառուն գյուղի համար գեռ գալիք աղետներ եյին հանդիսանում, հապա հոգեորականությունն իբրև հարստահարող տարր ի սկզբանե անտի կար և իր վնասակար գոյությամբ խախտում եր գյուղական-աշխատավորական համայնքի ներգաշնակությունը: Հենց այս առթիվ ե, վոր բարեկենդանի տոնի ուրախ սեղանի շուրջը խմբված գյուղացիք շատ սուր վոճ են գործածում հոգեորականության դեմ: Արանց խոսքերի ու գատողությունների մեջ կայծկլտում են առողջ միտքն ու քննազատությունը Հասարակական կյանքի չարն ու բարին հասկացող այս մարդիկ խնդիրներին նայում ին հասարակական ոգտակարության տեսակետից: Այսպես նայելով հարցին, նրանք նկատում են, վոր հոգեորականությունն իրեն չի արգարացնում, Հասարակական կյանքի որգանիզմում նա կույր աղիքի դեր և կատարում: «Նահանի տեղը դատած մալը ուտելը ու դարդակ քննելը հարամ առ Մարդ պետք ե ինքն ել աշխատի, վոր կերածը հալալ ըլի»: Այս արդարացի դատավճիռն ուղղված ե պորտաբույծ և ամենակեր կղերի դեմ: Ժամ ու պատարագի մեջ գյուղացին չի տեսնում հոգեվորականության դերի արդարացումը: Այլ խնդիր ե, յեթե նա կարողանար առաջ տանել գյուղի լուսավորության գործը: Բայց այդ անհնարին ե, վորովհետեւ ոգրի սեն ու սպիտակը հո եսպիս տեղը տերտերներն ել բռանց եյին ջոկում»: Հոգեորականությունն ինքը յեվս խարխափում եր տգիտության խավարում:

Անհեթեթություն կլիներ Արովյանին հայտարարել նա-

հապետականության իդեոլոգ, ինչպես այդ արել են վոմանք լոկ այն պատճառով, վոր նա մերժում ե կապիտալիզմը: Նահաւ պետական գյուղն իր դրական յերեւութներով հանգերծ ամբողջական առումով չեր կարող բավարարել Արովյանի լուսավորական աշխարհահայացքի պահանջները: Չընդունելով կապիտալիզմը, մի շարք հիմնական հարցերում նա սահմանադժվել է նաև նահապետական աշխարհից՝ առաջարկելով նոր, լուսավորյալ գյուղի գաղափարը: Նահապետական գյուղի հանդեպ ունիցած իր դրական վերաբերմունքի մեջ Արովյանը մի շարք կարեոր վերապահումներ ե մացնում Աղասու բերանով: Աղասու առողջ քննադատությունը, ուղղված կրծնական ծիսերի և հոգեորականության դեմ, նրա սկեպակացիզմը հավատի խնդրում և բնության պաշտամունքը խորը ճեղքեր են բացում նահապետական աշխարհահայացքի մեջ, յերեքն ուղղակի հակադրվում են նրան իբրև նոր մատածողություն, լուսավորական աշխարհահայացք: Արովյանի պատկերած գյուղացիք ևս արտահայտում են հեղինակի լուսավորական գաղափարները և բարձր են կանդնած նահապետական կյանքի սահմանափակությունից:

Յեկրոպական լուսավորության հիման վրա վերափոխված գյուղ՝ առանց կապիտալիզմի և շահագործման վորեն այլ ձերի, կուլտուրական յերկրագործություն սեփական մի կտոր հողի վրա, սեփական աշխատանքով, պարզ ու բնական կյանք աղատ քաղաքի ապականիչ աղդեցությունից,—ահա Արովյանի սոցիալական ուսուական: Սա յե մարդկային կյանքի այն շիտակ ուղին, վորի մասին նա ասել ե. «Ճամփեն վոր ուղիղ ընի, ինչքան յերկար ել ըլի, գնա, դուզ ճամփից մի դուրս գալ»:

### 34

Արովյանի համար պարզ ե յեղել, վոր պարսիկ խաների բարբարոս լծի տակ հայ ժողովրդի վերածնության մասին խոսք անգամ չի կարող լինել: Ռւսակի նախ և առաջ պետք եր ապահովել ժողովրդի ֆիզիքական գոյությունը, աղատել նրան մի հզոր ուժի, բարեկամական ձեռքի ոկնությամբ: Այդ հզոր ուժը, յեղայրուկան անհոգուղղ բաղադրել հանդիսացավ ուսւամեծ ժողովրդը: 1827 թիվը Արովյանն իրավացի կերպով մի կարեսը

դպրագլուխ և համարում հայ ժողովրդի կյանքում։ Հայ ժողովրդի առաջ բացվեցին յեվրոպական լուսավորության գուները և Արովյանն առաջինը ճաշակեց յեվրոպական և ոռւսական քաղաքակրթության պատուղները։

Արովյանի ոռւսական որիենտացիան համարվել և նրա աշխարհահայացքի ամենախոցելի կողմը։ այսոր սակայն միանգամայն պարզ և, վոր հայ ժողովրդի փրկության հնարավոր յելքը սուսական միավետության տիրապետության տակ անցնելն եր։ Բայց սխալ է կարծել թե Արովյանը ցարական Ռուսաստանի տիրապետությունը մի իդեալական վիճակ է համարում հայերի համար։ Նա վորոշակիորեն ըմբռնում է, վոր վոչ մի ոտար տիրապետություն չի կարող ապահովել հայ ժողովրդի լիակատար ազատությունը, այդ թվում նաև «ժողովուրդների բանտ» ցարական Ռուսաստանը, վոր ամեն մի ոտար իշխանություն այս կամ այն չափով սահմանափակում ու ճնշում և տվյալ ժողովրդի ինքնուրույնությունը։ Արովյանը ցարիզմի տիրապետությունը զիառում և վորպիս վոքրագույն չարիք, ընդունում իբրև ժամանակավոր անհրաժեշտություն։ Այդ տիրապետության ներքո հայ ժողովուրդը պիտի հավաքեր ու համախմբեր իր ջատված ուժերը, կուլտուրապիս առաջադիմեր, քաղաքականալես հասունանար և մի նոր կովով ձեռք բերեր իր ինքնուրույնությունն ու անկախությունը։ «Վերք Հայաստանի» վեպի 17<sup>4</sup> եջում կարգում ենք «. . . վոր բալքի մեր հայրենիքը՝ նրանց արծըլքի թեվերի տակին զորանա, մեծանա, զարդերը մոռնանա ու ել յետ՝ իր առաջին փառքի հասնի»։ Իսկ 243 եջում պատահում ենք հետեւյալ տողերին «. . . վերք ժողովիս, լինիս կորիչ հայ, ոռւսաց հզոր քաջ ձեռքի տակին փոքր գիննանաս ու քո աշխարհին մուղայիթ կենաս, արյունդ թափես, քո աղջը պահես, քեզ անուն ճարիս»։

Այլ խոսքով, ցարական որիենտացիան վոչ թե նպատակ, այլ միջոց եր։ Նպատակը հայ ժողովրդի վերջնական ազատագրությունն եր։ Դա մի ժամանակավոր դադար եր մեր ժողովրդի աղատագրական պայքարի ճանապարհին։

Դորպատում յեղած ժամանակ, 1832 թվին, մեր հեղինակն իր հիշատակարանում արձանագրում է «մեծ մաթեմատիկա» Բուրգերի հետեւյալ խոսքերը, վորտեղից հայտնի յի դասնում, թե

Աբովյանը գիտակ եր ցարիզմի տիրապետության տակ դժուվող հայ ժողովրդի իրական վիճակին: «Գիտեմ վոր ոռւսաց աստիճանավորները, ասել և Բուրգերը, Զեր կողմերում ցուցաբերում են բազմաթիվ անկարգություններ. դրա դեմ չկա այլ հնար, բայց յեթե զարթնեցնելազգի հոգին»: «Վերք Հայաստանի» վեպը լիովին իրագործեց առաջադրած խնդիրը: Մեր ժողովրդի ընկճը ված սիրան Աբովյանը կենդանացնող ուժերով լցրեց, յերիտասարդացնող արյուն ներարկեց: Պատահական չպիտի համարել այն, վոր ցարական բանակի սազմական գործողությունների գեղարվեստական ցուցաբրումը իսպառ բացակայում և վեպում: Աբովյանը բավականացել ե ընդհանուր գովասահական խոսքեր շուայլելով նրա հասցեյին: Արա փոխարեն վիպասանի իր ամբողջ տաղանդն ենա գրել՝ ցույց տալու մեր ժողովրդի և նրա դավակների հերոսական կոփմն իր ազատության համար:

Վեպի հերոսը՝ Ազատին մի հաղթանակամ, գեղեցիկ, քաջ, աղնիվ, բարի տղամարդ ե: Իր այդ բարեմտունությունների շնորհիվ նա ամբողջ գյուղի սիրո և հիացմունքի ասարկան ե: Աղաւին չքավորի նեցուկ ե, թույլի պաշտպան, ընկերոջ ու բարեկամի համար կյանքը չի խնայում. թշնամու հանգեալ առյուծ ե, բարեկամի առջե՝ դառ: Կատաղի հակառակորդ ե բռնության և դոհվում ե հայրենիքի ու ժողովրդի ազատության համար:

Ազատուն շրջապատում են իր նման բազմաթիվ քաջեր: Աշհո ժողովրդական մի այլ հերոս, գսեղցի աժդահա Հովագիմը, վորի անունը քարեր և սասանեցնում: Իդեալականացնելով հասարակ ծագում ունեցող Ազատուն և այլ քաջերին, Աբովյանը նըսպատակ և ունեցել լնթերցողի մեջ ամբապնդելու այն հավատը, թե հայերն ընդունակ են ու կոչված ազատ ու անկախ գոյության: Քննելով մեր ժողովրդի պատմական անցյալը, նրա զըլխով անցած բազմաթիվ ծանր փորձությունները, Աբովյանն իր անկեղծ զարմանքն ու հիացմունքն ե հայտնում նրա անորինակ ուժի և տոկունության մասին: «Քան տարու միջում լուսավորյաց քրիստոնյա, խաչապաշտ յելքուպացոց վոաը՝ վողորմելի Ամերիկա հնապես քանզից, ջնջեց, հողի հետ հավասարեց, վոր հինգվեց միլիոն ազգիցը՝ եսոր հազար հոգի եւ չեն մնացել Բաս Բնչ աներ Հայոց խեղճ ազգը, վոր. . . վոչ թե քրիստոնեյի, կամ լուսավորյալ ազգի, այլ հեթանոսի, կուապաշտի, մահմեղականի,

անորենի ձեռին եր աչքը բաց անում, նրանց հետ քյալլա տառ  
լիս, ու շատին շատ անգամ՝ իր վոտի տակը քցում»: Հիացած ժողու  
վրդի այդ բարեմասնություններով, նա չի կարողանում զատել  
իր հորդացող զգացմունքները, անեզր սերը գեպի հայրենի յեր-  
կիրն ու ժողովուրդը և կրակված բացականչում և Հայոց աղդ,  
հայոց աղդ, ձեր ջանին մեռնեմ. հայոց աղդ՝ քո հողին մատաղ՝  
հայոց աշխարհ՝ են վեր կաթը դուք ծեցիք, են վեր մեջքը ձեղ  
բերեց, են վեր ձեռքը ձեզ գրկեց, են վեր բերանը ձեզ որհնեց, վոր  
դուք ես հողին ունենաք, ես սիրաք ձեր միջումը ըլի, ես հրաշքը  
դուք աշխարքին ցոյց տաք: Ել ի՞նչ աչք պետք ե ըլի, վոր քու-  
սանա, ձեզ չտեսնի, ձեր դաշըքը չմանա, են ի՞նչ բերան պետք  
ե ըլի, վոր կապվի, ձեր փառքը չկովի, ձեր անունը չպաշտի:  
են ի՞նչ քարացած միրտ պետք ե ըլի, վոր ձեզ չսիրի, ձեզ իր հո-  
ղին մատաղ չտա»: Պատմական անցյալի հիման վրա նա նշում  
ե մեր ժողովրդի ապագա հեռանկարները, ամրապնդում նրա մեջ  
վստահությունն իր ուժի, իր գալիքի նկատմամբ:

Աբովյանի համար հենց են զլիից զոյություն ե ունեցել  
յերկու Ռուսաստան, Լոմոնոսովի, Ժուկովսկու, Թրիբոյերովի,  
Պուշկինի Ռուսաստանը և բուլգարինների Ռուսաստանը: Զինով-  
ևնիկան-միապետական Ռուսաստանը նա չի նույնացրել ոուս  
ժողովրդի հետ. հուսախափելով ցարիզմից, նրա մեջ միշտ հաս-  
տատ ե մեացել այն հավատը, վոր ոուս մեծ ժողովրդի հետ ու-  
նեցած բարեկամական սերտ կապը միայն կապահովի հայերի  
լավագույն իգձերի իրականացումը: Այս տեսակետից նշանակա-  
լից ե «Վերք Հայստանի» վեպի հավելվածի՝ «Զանգի»-ի վերջը,  
վորտեղ Աբովյանը ոուս ե հայ ժողովուրդների մշտական սերտ  
բարեկամությունն ե քարոզում, բարեկամություն, վոր ժողո-  
վուրդների բարորության նախապայման ե հանդիսանալու: «Բա-  
ցեք զճակատ ձեր, ցնծացեք համայը իմ քաղցր Առլա քույր  
հոգա միշտ զձեր ճար: Յես զիմ մտերմություն ցուցից նմա հա-  
մակ, նա զյուր քաղցրություն տացե ձեզ՝ վերդյաք: Այս կապ  
անխողուն, այս սեր սրբազն մնացե ի մեջ մեր ի տյանս հա-  
վիտյան: Դուք դորացրաւք վնրդիք Աբովյան, յեղերուք ընդ  
միշյանս սիրով միաբան: Սեր, խալաղություն պահեն զամենայն  
ազգս և զազինս ի բարորություն»:

Ցարական, չինովնիկական Ռուսաստանի հանդեպ Աբովյա-

Նի ունեցած հերհակ վերաբերմումքն իր ցայտուն արտահայտությունն և գտել նրա «Հազարփեշեն» յերդի ծական պոեմի մեջ, վորտեղ հեղինակը ցարիզմի գեմ Անդրկովկասի ժողովուրդների դաշինք և քարոզում:

«Հազարփեշեն» թեև հրատարակված, բայց ընթերցող հասարակության լայն շրջաններին անհայտ մնացած մի գործ եւ Պոեմը լույս և տեսել Թրիլիսիում 1912 թվին: Դա մի վախտ գրքույկ եւ, վորից մնացել են միայն հազվագյուտ որինակներ: Պոեմի ունի հետեւյալ կարեռը յենթավերնագիրը: «Ճերդի ծականություն են բարի անձանց վրա, վոր մեր խալսին փունդ են դնում»: Ենթավերնագրից խեկ կարելի յեւ կռահել, վոր Աբովյանը հանդես և դալիս խալսին «փունդ» դնող, հեղնաբար առված՝ «բարի» անձանց գեմ:

Սուագել կարեվոր և սակայն պոեմի առաջաբանը, վոր ընթերցողի համար լիովին պարզում է հեղինակի գիտավորությունը: «Ո՞վ չի գիտի, վոր տեղից վեր կենողը հենց մեր խալսի վրա յա վոտը բարձրացնում... թե աստված կտա մեր Ասիացիք ել քիչ-քիչ աչքերը բաց կանին, են ժամանակը չեն թողած վոր ամեն հայվարա մարդ իրանց վրա բերան բաց անի»: Ասիացի խալսի—հայ, վրացի, թուրք ժողովուրդների վրա բերան բացող, վոտ բարձրացնող «հայվարա» մարդը, պոեմի յերդի ծականքի որյեկտը, ցարական մի աստիճանավոր եւ, վորին փող դիզելու տեհնչը կովկասյան լեռների այս կողմու և բերել:

«Ասիացի մարդըն զակոն ինչ զիտի,  
Գլխին տուրք, դրազին կանգնիր, քեֆ արա.

• • • • • • • • • •

Զերբուդ լթուու, քո յերկիրը դնա»:

Տեղական ժողովուրդների տղիտության և որենքը չհասկանալու վրա յեն հիմնված ցարական չինովնիկի ակնկալությունները:

Մայրաքաղաքի պարահանդիսների, կոնցերտների սիրահար չինովնիկն արհամարհանքով և վերաբերվում տեղական ժողովուրդների սովորություններին, սակայն յերբ ասպարեզ և գալիս «հայի մուշտին» և վրացու քացին», նա ստիպված եւ լինում խոս-

առվաճել տեղական վարք ու բարքի առավելությունը: Իուս աշ-  
բիստոկրատ-չինովնիկին վրկում և աւղացիների բարեսրու-  
թյունն ու մարդասիրությունը միայն:

Ազգային ճնշման հետ մեկտեղ՝ Արովյանը յերեվան և  
բերել նայել գասակարգային ներհակության մոմենտը: Յա-  
րական չինովնիկն առանձին շեշտով ներկայացված և նախ և  
առաջ իբրեւ արիստոկրատ: Ժողովրդի կյանքի բոլոր առավել  
կողմերը նրա աչքին շուռ տված են յերեսւմ: Հենց այդտեղից ել  
բղիում և կոնֆլիկտը: Բնական և, վոր սուս մուժիկի և տեղա-  
կան աշխատավորի մեջ նման կոնֆլիկտ չեր կարող ստեղծվել,  
քանի վոր նրանց շահերի, հասկացողությունների, ճաշակների  
միջի ընդհանուրը շատ գծեր կան:

Այս պոեմում Արովյանի քաղաքական գիտակցությունը  
հասնում է իր բարձրակետին: Սա այն սահմանն է, վորտեղից  
սկիզբ և առնում Միքայել Նալբանդյանի հեղափոխական դեմո-  
կրատիզմը:

## Զ

Ի՞նչպես և հասկացվել, մեկնաբանվել ու գնահատվել Արով-  
յանի ստեղծագործություններն ընդհանրապես և «Վերք Հայաս-  
տանի»-ն մասնավորապես:

Մեր ժողովրդի և նրա կուլտուրայի թշնամիները չարա-  
մըտուեն կեղծել են Արովյանի ստեղծագործական պայծառ դեմքը,  
հոչակելով նրան նացիոնալիզմի ջատագով, աղքային թշնամանք  
սերմանող:

Նրանք մոտեցել են այդ թանգարժեք ժառանգությանը կան-  
խակալ կարծիքներով, պատրաստի տեսակետներով, հասկանալի-  
պատճառով ժողովրդի համար թանգ և գնահատելի այդ կուլտու-  
րան ժխտելու դիտավորությամբ: Նրանք զրպարտության աղ-  
բակույտով են ծածկել Արովյանի փայլուն տաղանդի արտադ-  
րությունները: Արովյանի մեծարժեք գործերը համարվել են նա-  
ցիոնալիստական, խորթ ու անհարազատ մեր ժողովրդին, նրա  
հետապնդած շահերն ու նպատակներն անընդունելի ու անհամա-  
տեղելի ժողովրդի նպատակների ու շահերի հետ: Դրանով նրանք  
հասել են այն բանին, վոր ահաբեկել են բոլոր նրանց, ովքեր

ընդունակ ելին լուրջ գիտական ուսումնասիրություն կատարել  
Արովյանի գործերի վրա: Արովյանի անվան և ստեղծագործու-  
թյան շուրջը ժողովրդի թշնամիների ներդ ձեռքերով գծված ե  
յիղիլ մի տեսակ կախարդական շրջան, վորին մոտենալ վոչ վոք  
չի հանդինել:

Արովյանի քարոզած թշնամանքն ուղղված և պարսիկ նվա-  
ճողների գեմ ու մազաշափ անգամ չի վերաբերվում տեղական  
թուրքերին, վորոնց հետ հայերն ապրում ելին իբրև մի հողի և  
մի ջրի ծնունդ կապված համանման շահերով ու յեղբայրական  
սիրով: Հայ և աղբընջանցի ժողովուրդներին կապում և միաց-  
նում եր նայել ոլարսիկ բոնակաների գեմ ունեցած ընդհանուր  
թշնամանքն ու պայքարը: «Վերք Հայաստանի» վեպում կար-  
դում ենք, «Յերեվանու բնիկ թուրքերը, վոր հայերի հետ մեկ  
տեղ մհծացել՝ ախտոր պիս ելին վարվում, Սարդարին, Հասան  
խանին անմիջելով, թքելով, Դղլաշի վրա ատամները՝ զլացացնե-  
լով՝ քիչ քիչ քաշվեցին, ու դեմք դնում ելին, գեմը առում.  
Շեր աստված, յերք կըլի, վոր քո վողորմության գուռը բացվի  
ու մենք ես անմիծած Դղլաշի ձեսիցը մեկ որ ապատինք»:  
Զունքի սրանք յերլու ըլելով չելին ուղում մեկ որ ել ա նրանց  
ծառայեն ու շատ անգամ հայերի հետ միացել քշել ելին նրանց,  
ամա թըրի զորով եկել, ել յետ յերկիրը զավթել ելին»: Այս մեջ-  
քերումը վրովին հաստատում է վերը արտահայտած մեր միտքը:

Տեղական ժողովուրդների շահերի ընդհանուրության և յեղբայ-  
րության գաղափարն Արովյանի ստեղծագործություններում  
շատ խորն և արտահայտված: Քարոզելով անդական աղջություն-  
ների բարեկամություն, Արովյանը նրանց նախազդուշացնում և  
ուսաբներից, «Լուսավոր» յեկըռպացիներից՝ վորոնց «քաղաքա-  
կըթիչ» դերը նրան քաջ հայտնի յեր Ամերիկայի պատմությու-  
նից: Իր «Ամերկու լիս քցիլը» անտիպ աշխատության մեջ նկա-  
րադրելով տեղական ժողովուրդների բնաջնջումը «քաղաքակիրթ»  
յեկըռպացիների ձեռքով, Արովյանը զառն հեգնանքով բացական-  
չում ե. «Ես ել քեզ լուսավոր Յեկըռպա»... (հիշենք Նալբանդյանի  
«քաղաքակիրթություն և արտահայտությունը»):

Մեզ հետաքրքրող հարցի տեսակետից բացառիկ կարեվորու-  
թյուն ե ներկայացնում «Թուրքի աղջիկը» պատմվածքը: Այդ  
սքանչելի գործում, Արովյանը չտեսնված սեր ու գորով և արտա-

հայուում մորը կորցրած մի վշարհար թրքունը հկատմամբ: Թուրք ազգի վիճակը խորապես հուզում և հեղինակին: Հավատների և կրոնների տարրերությունն արգելք չի դառնում: Արովյանին հասկանալու նրա վիճակի դասնությունը, արտահայտելու ազնիվն ու մարդկայինը: Պատմվածքը տոգորված և մարդասիրական բարձր գուցամունքով: «Խաղաղություն հոգուդ, — դիմում և հեղինակը թուրք հանգուցյալին, — հանգուցյալ մարմին, այ իմ պատկերակից հողածին: Հավատներս մեկ չի, սրտներս հո մեկ ա, մեր ժամը չեյլիր գալիս, մեկ յերկնքի տակի, մեկ յերկրի յերեսի եյլիր հո ինձ հետ կենում, ման գալիս. լեզուդ իմը չեր, պատկերգ, չոգիդ հո իմիցն եր»: Մարդկանց մեջ յեղած լնդհանուրի համեմատությամբ ամեն մի ազգային, կրոնական տարրերություն նսկմանում և, վոչնչանում: Արովյանը խորը վշտով արձանագրաբում և, վոր հավատների տարրերությունը հաճախ մարդկանց դարձնում և նեղմիտ, անհանդուրդող ու փոքրոգի, արգելում և «իրանց նմանին սիրեն, նրա բարին կամենան»: Արովյանը մարդկանց, ժողովուրդների փոխազարձ սեր և քարոզում, ազգությունների խաղաղ համակեցություն և ցանկանում, « . . . ինչպես մեկ հոր վորդի, յերկրում մեկ սիրա, մեկ հոգի, մեկ միտք, մեկ տեղ, մեկ գերեզման ունենալ . . .» յերազում:

Արովյանի ազգասիրությունը համերաշխ և ոտարասիրության հետ և իր հիմքում ունի անհուն ու անպարփակ — տիեզերական մի սեր գեպի մարդն ու մարդկությունը: Արովյանի հայրենասիրությունը նրա ազգասիրության մի այլ արտահայտությունն եւ նույնքան լայն ե ու անսահմանափակ, վորքան առաջինը: Մարդկության հայրենիքը, դա «աստուծո աշխարհն» և, վոր Արովյանը սիրում ե, ինչպես համայն մարդկությանը: Ինչպես համայն կյանքը: Դեպի մարդկությունն ու աշխարհն ունեցած այս անսահման սիրով ենապայմանավորված մարդու կոչման նրա ըմբռնումը: Մարդը մի կարճատեղ կյանքով աշխարհ և գալիս. վորն ե նրա նպատակը, պարտականությունը, անելիքը: Բարի, աշխարհաշեն գործ: Արեվի, հողի, ծառի, ջրի պես անշահ, անվարձ ծառայություն՝ աշխարհին ու մարդկությանը: Անա մարդու գոյության միակ արդարացումը, մարդ կոչվելու միակ իրավունքը: «Յերկնքի արեգակի պես, յերկրի հողի պես՝ դու աստուծո պատկեր՝ բարի կաց, բարություն արա, քեզ պահիր,

լավություն արա, աստծուն նմանիք, ընկերդ պահպանիք, ասուն աշխարքը շինիք, նրա ձեռագործը մի քանզիք, վոր զու ել մաս շին, զու ել չի քանզվես, հողին չի հավասարվիս»։ Մարդու մեջ յեղած վատի և չարի հակումը տեղի կտա, նրա մեջ կարթնանա բարին և սերը, յեթե միայն նա միտ բերի իր մահը՝ «Վոր մատածենք՝ թե ես ականջը՝ վոր չար բանի հենապես քաղցր գեմ ենք անում, մեկ որ պետք և խլանա, ես աչքը՝ վոր ոձի պես որը հազարին կծում ու յաղու յատալիս, մեկ որ պետք և պապանձվի, չորանա, քըրքըրվի ու որթունքի կերակուր դառնա, բաս ել չարություն միր մաքովն անց կըկենա: Բաս չենք ուզենալ՝ վոր ամենին պաշտենք, պատվինք, սրբի տեղ զլինուերովը պախտ գանք»։ Սիրած աշխարհից ու մարդկությունից ընդմիշտ հետանալու անխռուափելիությունը հեղինակի սիրով լցնում և վշտով, տասնապատեկում ու հարյուրապատկում և նրա սերը մարդկության հանդիպ: Զե վոր աչքը հավատենապես պիտի դադարի տեսնելուց, սիրո աղբյուրը պիտի ցամաքի և լիզուն սրտի բաղձանքը հայտնի չպիտի կարողանա: «Զեր ազնիվ յերեսը մեկ որ պետք և չտեսնիմ, հոգիույս սիրելիք, բարեկամք, սիրեկանք, գոսթ, ընկերք, իմ բոլոր պատկերակից մարդիք»։ Արովյանի սիրո առաջ հալչում են խտրության բոլոր պատճենեցները:

Սուտ են և անցողի հարստությունն ու իշխանությունը, նրանք մարդուն ուղեկցում են մինչև գերեզմանի զուռը և լըքում, վորպես անհավատարիմ ընկերներ: Միայն լավ զործը մարդու անունը կանմանցնի: «Թո գնրծքը, քո գնրծքը միայն քո անունը կապհի»: Անմահ զործը հայրենիքի անզավաճան սերն է: Հայրենի հողը ասես լեզու առած ձայն և տալիս բոլորին. «թե ուզում ես, քեզ ել եսպես սիրեմ, զգվեմ, զու ել ինձ սիրի, ինձ պայծառացըռնե, իմ սիրելի վորոյակ»:

Մարդկության սերը իր գործնական իրականցումն և գըտնում սեփական յերկրին և ժողովրդին մատուցած ազնիվ, անշահամբնպիր ծառայության մեջ: Ով նվիրված և իր յերկրին, նա ծառայում և ամբողջ մարդկությանը: Այս և Արովյանի ազգասիրության և հայրենասիրության խորը հումանիստական բովանդակությունը:

Հարցերի այս շարքով չի սպասվում, և անհնարին և սպասել, «Վերք Հայաստանի» վեպի բազմահարուստ բովանդակությունը: «Վերք Հայաստանի»-ն վեճ ձգտութների, աղնիվ զգացումների, անկեղծության, սիրո մի կախարդական, հմայիչ աշխարհ եւ Հեղինակի կախարդանքի միջոցները բազմազան են:

Նա հմայում ե իր ստեղծած բնության անզուգական պատկերներով ու նկարագրություններով, ժողովրդական կյանքի պատկերման շոշափելի կենդանությամբ, իր հերոսների վոգեվորիչ խիզախությամբ, վերացական աշխարհները տանող գեղեցիկ խորհրդածություններով, խորին լիրիզմով, մարդկային առարումների դրսեարման բազմազանությամբ, իր բոցաշունչ հրապարակախոսությամբ, մարդկայնության իր աղնվացնող քարողներով և վերջապես իր եյության եյությունը կազմող բյուրեղյամիրով:

Իր այս հատկություններով «Վերք Հայաստանի»-ն գարնահային արեկի կենդանարար զորովթյամբ, մեր անցյալ կյանքի խավարից ու մշուշից բարձրացրեց մի ամբողջ գրականություն:

## Ե

Արովյանը հայ ընթերցողներին ծանոթ ե վերազանցապես իր արձակ գրվածքներով, թեև չափածոն նրա ստեղծագործության զգալի կշիռ ունեցող մասն ե կազմում: Պոեզիան Արովյանի համար հարազատ ընազավառ ե: Նրա արձակի մեջ ևս գերակշռում ե հուզականությունը: Արովյանն ունեցել ե լիրիքական քնքույշ խառնվածք և նրա պոեզիան չափազանց հարուստ ե այդ ժանրի ստեղծագործություններով:

Արովյանն սկսել ե ստեղծագործել իրրե պոետ և միայն հասուն շրջանում ե անցել արձակի, առանց սահմայն պոեզիայից հրաժարվելու: Մինչև «Վերք Հայաստանի»-ն, գրաբար պոեզիան կազմել ե նրա ստեղծագործության հիմնական տարրը: Մինչ այդ Արովյանն ինքն իր համար դեռևս չեր լուծել աշխարհաբարի խնդիրը: Նրա առաջին շրջանի բանաստեղծությունները գերազանցապես գրաբար են գրված վոչ միայն այն պատճառով, վոր սա դեռևս վերջնականապես չեր ազատագրվել անցյալի ճնշող արագիցիայից, այլ և այն պատճառով, վոր աշխար-

հաբարի անկատար վիճակը հնարավորություն չի ընձեռնել հեղինակին հեշտ ու թեթև, գեղեցիկ ու պատկերավոր կերպով արատահայտելու իր հույզիքը, ինչպես այդ նրան հաջողվել ե գրաբարի միջոցով։ Իր գրական գործունեյության վաղ շրջանում Արովյանին անընտել ե յեղել գրավոր աշխարհաբարը։

Արովյանի գրաբար բանաստեղծությունները գերազանցապես սուբյեկտիվ լինույթ ունեն և արտահայտում են հեղինակի անհատական աշխարհը։

Բանաստեղծի կյանքի վառ մոմենտները, նշանակալից փառաերն ու ապավորությունները խոր անդրադարձում են գտել նրա սպոնդիայում։

Առանձին ջերմությամբ Արովյանը յերգել է իր վոսկեղին մանկությունը, հայրական հարկը, այնտեղ թագավորող սովորությունները և այլն։

«Ի կույսո արհավրաց նանի ձայնելով  
Զիս որորեցիր, հայր գորովագութ  
Ցեփ ի գիրկա անկյալ ծնողական գթով  
Համբույր քո կնքեր զիմ քուն քաղցրանյութ։

Հաղիվ շոշովյալ ի լուսո ավուք,  
Զքեղ տեսանեյի հիս ընթերակա  
Լի պաղատանոք կամ արտասվաթոք  
Հայցել զերկնավորան լինել ինձ գթած»։

Մի արձակ բանաստեղծության մեջ նա խոր վշտով և ափսառնքով և հիշում իր յերջանիկ մանկության անդարձ կոռուստը։

«Ո՞վ նախանձելի, վոսկեղին ժամանակ մանկության իմո...  
Դու անցեր և անցանիս քաղցրությամբ, խաղաղությամբ և  
անհոգությամբ։

Ավուրք իմ յերջանիկ, ուր դեռ անծանոթ եյին տրտմությունք և հոգք ծերության և աշխարհի։

Զիանը քաղցր եր ինձ ամենայն ինչ։ Սիրտ իմ միայն զգայր զուրախություն։ Յես վոչ ունեյի և վոչ զիտեյի զբեռն տրտմության և հոգոց։

Միմիայն խաղք և զվարձությունք եյին ընկերք իմ։

Յերկին և յերկիր, ընտանիք և բարեկամք սիրելի ելին ինձ  
միշտ: Ծնողք սիրելին և ուսուցանելին ինձ զբարի մտածմուն:

Տուն ծնողաց իմոց եր բոլոր աշխարհ իմ, իմ զբախտ և  
յերջանկություն: Յեղբայրք ու քուրք միխթարելին զիս, մի-  
միայն զբարիս կամելին և ցանկանային ինձ:

Ո՞ւր ես զու, բախտավոր ժամանակ, ոճ այլ վոչ յերբեք  
զարձցիս: Դա ծերություն և ամենայն ինչ փոխե, ամենայն ինչ  
լինի դժվարին: Առանց աշխատանաց վոչ կարեմք ապրել:

Այնժամ միայն ճանաչեմք զգին բախտի մերո, յերբ նա  
կորնչի:

Մանկունք բախտավորք, լոււարուք բարի խրատոց ծնողաց  
և ուսուցչաց: Գտ ժամանակ և զուք ինքնին խնդրեք զգեղեցիկ  
նախանձելի, խաղաղական ժամանակ մանկության ձերո, այլ վոչ  
դտանեք այնժամ:

Նոքա իբրև ջուր անցին, և տիլ վոչ ես դառնան:

Կորուսյալ ժամանակն, կորուսյալ բախտն, կորուսյալ ուրա-  
խությունք և զվարձությունք, միմիայն ցավք և հոգք մնացին...»

Աբովյանի մոտ մենք հանդիպում ենք կատարնլիության  
հասցրած բանաստեղծական բազմազան ձեւերի: Իբրև պոետ Ա-  
բովյանը խորն և և նուրբ: Նրա թողած բանաստեղծական ինք-  
նուրույն ընտիր գործերի կողքին մենք տեսնում ենք նաև  
հաջողված թարգմանություններ Հոմերոսից, Գյոթելից, Շիլ-  
րից, Կարամզինից և ուրիշներից:

Նույնիսկ այն տարիներին, յերբ Աբովյանը գտնվել է զբարա-  
րի տիրական ազգեցության ներքո, աշխարհաբար մի շարք ըն-  
տիր բանաստեղծություններ ե զբել նա, մեծ վարպետությամք  
ոգտագործելով աշխաղական ժողովրդական յերգերի ձեւերը: Աբով-  
յանն առանձին սեր ու հետաքրքրություն ե ցուցաբերել ա-  
շուղների և նրանց արվեստի նկատմամբ: Նա լավ գիտեր, թե  
ժողովրդի կյանքի ու ապրումների այդ ամենահարազատ արտա-  
հայտիչները փորձան սիրված են և ընդունված ժողովրդի կողմից:  
Աբովյանը շատ անգամ ականատես յեղել, թե ինչպես մեջլիսում,  
կամ հարսանքատանը ժողովուրդը «հայիլ-մայիլ» լսում ե աշու-  
ղին, ինքըն ել անշուշտ հաճախ և զմայլվել նրանց տղավորիչ  
պատմություններով, յերգերով ու նվագով: Այդ ունկնդրություն-  
ները նրա համար անհետեղանք չեն անցել: Սայաթ-Նովայի յեր-

գերի խոր ազդեցությունն եւ կրում թբիլիսիի բարբառով գրած  
Աքովլյանի սիրային աշուղական մի բանաստեղծությունը: Թեև  
բանաստեղծության լրիվ որինակը չի պահպանվել, սակայն մեզ  
հասած բնելորներն ել ամբողջական պատկերացում են տալիս  
գործի մասին:

Զանումս ջան չի մնաց, վոր իմ անվալն քեզ ասեմ.

Բերանսս խոսք չի գալիս, վոր իմ խիալն քեզ ասեմ:  
Թոփ ու թոփխանս յես սարքել, քանզեցիր բուրջ ու բադանը,  
Յարի պես բհամ եկար, կերար, մաշեցիր իմ ջանս,  
Դարդիման ես ֆիքք արա ինչպիս ըլլի ես իմ բանս,  
Վոչ սվեմին ումուգ չունիմ, դուն ես իմ ձարն ու դարմանս,  
Թե ուզում ես զիփունիմին գուն ըլնիս իմ սերն ու սանըս,  
Յարուքյար անըր ես բանին, վոր սկսեմ լավիցն ասեմ:

Զանումս ջան չի մնաց, վոր իմ անվալն քեզ ասեմ.

Բերանսս խոսք չի գալիս, վոր իմ խիալն քեզ ասեմ.  
Առավոտուն ծեզն տալիս, ֆոփուալով դյուլ չհանդ,  
Բաց ես անում ալ տերեվով, գյուլի սարահի մամանդ,  
Յախութն ասեմ, զմբուխտն ասեմ, թե վզիդ շար մարջանըդ,  
Վոր տեսնողն մաթ ե մնում, զովում ե քո յարագանդ  
Վոսկեթել մազերիդ շարքն հյուսելով քո սիրուն նանդ,

Յարար խղճիս բույրուղ կըլի մոտիդ նստած եղ բերանդ,  
Բացվի ու ինձ հետ խոսա վոր իմ խիալն քեզ ասեմ:

Զանումս ջան չի մնաց, վոր իմ անվալն քեզ ասեմ:  
Բերանսս խոսք չի գալիս, վոր իմ խիալն քեզ ասեմ:  
Վարդի պես գուս ես եկեր հովս հրալիս բաց ես ըլում.  
Յերկնքի ցողն երեսիդ, շաղակուլով թաց ես ըլում.  
Զորս կուզդ գիշեր, ցերեկ, միշտ վշով պատած ես ըլում.  
Քյուլքյուլիս սիրտը մեռած տեսնելիս հեշ չես լաց ըլում:

Այս փաստը հիմք ե տալիս ասելու, վոր ներսիսյան դպրուցի  
աշակերտ յեղած տարիներին Աքովլյանն ուշագրությամբ հետեւ  
տեկել ե Սայաթ-Նովայի ստեղծագործություններին:

Աքովլյանի արխիվում պահպանվող մի փաստաթղթից պար-  
զվում ե, վոր նա ձեռնամուխ ե յեղել հայունի աշուղ Ազբար Ա-  
գամի կարիքավոր ընտանիքի ոգտին հանգանակություն կազ-

մակերպելու գործին: Հանդանակության թերթիկի ճակատը զարդարում են ըստ կոչ բանաստեղծությունը՝ ուղղված Յերեվանի հասարակությանը: Ահա այն:

### ԲԱՐԵՊԱՇՏ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՔ ԻՄ

Ազրար Աղամի ասած խռոքելը,  
Նրա քաղցր լեզուն, սիրուն մտքերը  
Վոր յերեվանցու ականջումն, սրտում  
Հաղար ցավ, կոկիծ ևոր չեն շարժում:

Նա հողի տակիցն, մերն գետնի վրեն,  
Զիվան վորդու մահն իր աղքատ տանեն  
Լալով, սղալով մեղ են տալիս ձեն.  
Ով յերեվանցիք, գուշ եք մեր չարեն:

Զիգյարի տերը, սիրելու սերը  
Են ջիվանի մահն, են անըստա մերը,  
Զիգյար ունեցող ու բարի հային,  
Կանչում են՝ ողնել իրենց սե որին:

Արովյանի նմանորինակ վերաբերմունքը դեպի աշուղներն ու նրանց ստեղծագործությունը պատահական չե, այլ պայմանագործած են նրա գեմոկրատական աշխարհանայացքով: Իրեն սղտեհագործող Արովյանն ընդհանուր շատ գծեր ունի ժողովրդական վորու այդ հարազատ արտահայտիչների հետ:

30-ական թվականների վերջին և 40-ականին սկզբին Արովյանի ստեղծագործության մեջ վճռական շրջադարձ է կատարվում. գրաբարն ընդմիշտ տեղի յետալիս և լայն ճանապարհ անում աշխարհաբարի առաջ:

Այս շրջանում և ստեղծվում Արովյանի լիրիկայի նոր ժանրը – բայաթին, վորը նրա պոեզիայի խոշորագույն նվաճումն եւ: Բանաստեղծի ծով զգացմունքները ժողովրդական լեզվում արտահայտչական նոխ ձեր ու գեղեցիկ պատկերներ են գտնում:

Զգացմունքներով հարուստ մեր ժողովրդի սրտի ծարավին հագուրդ տալու մտքով և Արովյանը հորինել բայաթիքը: Նա՝

ջուր և խմել ժողովրդի սրտից։ Արովյանի բայաթիքը խոցված  
սրտից գուրս թռած անարձագանք սիրո դառն հառաչանքներ են։

Եստեղ շատ մարդիկ կան, յես  
Քեզ եմ կարոտ, քեզ մի՞ յիս։  
Վոր զաս, տեսնիս՝ ինձ հողումն,  
Յարար վրես սուք կանես։

Աչքս ճամբիդ ե, արի  
Արի, հոգիս առ, արի,  
Գյունան յերեսով չտաս,  
Փոշմանել եմ, ինչ արի։

Ինձանից՝ դու ձեռք քաշիր.  
Կուզես, հոգիս առ, քաշիր.  
Մահիս գիրու գրվել ա,  
Դու ել արի, ձեռք քաշիր։

Անսիրտ յարի կողմից անպատճան թռած սերը չե  
միայն հեղինակին այրող կրակը։ Նրա սրտից հառաչանքներ են  
դուրս կորզում և ուրիշ ցավեր, բանության և չարի աշխարհում  
միշտ առժողովների ցավը։

Տար եղ հավին՝ այ ուրուր,  
Աշխարքս գանակ ա ու սուր։  
Զոռ ճարդի թուրն ա կարում.  
Խեղձն մւր կորչի, մի՞ մւր, մւր։

Արովյանի բայաթիները հոյզի և խոհի գեղեցիկ համադ-  
րություն են հանդիսանում։ Ընթերցողի առաջ բացվում ե բա-  
նաստեղծի զբացմունքների փոթորկահույզ ծովը, վորի վրա ծան-  
րացած և նրա մասյլ խոհերի մշուշը։

Արովյանի պոեզիայի մի խոշոր հատվածն են կազմում նրա  
առակները, վորոնք հեղինակի հանրածանոթ և տարածված գործե-  
րից են։ Քսանույշ ու խոր պոետի կողքին մենք տեսնում ենք դա-  
տող ու խրատող, յերբեմն ել ուժգին խարազանող յերգիծաբա-  
նին և առակախոսին։

«Վերք Հայաստանի»-ից անմիջապես հետո, 1841 թվին ստեղծվեց «Պարագ վախտի խաղալիքը», վոր Արովյանի հարուստ և բազմաժանր ստեղծագործության մեջ ունի իր առանձնահատուկ տեղը: Հեղինակի առաջադրած խնդիրն այստեղ ևս նույնն է, ինչ վոր «Վերք Հայաստանի» վեպում՝ ծառայել «հարիր հաղարին»: «Վերք Հայաստանի»-ի առաջարանում շոշափած հիմնական հարցերը, արվեստը ժողովրդի շահերին ի սպաս բերելու կապակցությամբ, արծարծված են նաև «Պարագ վախտի խաղալիքի» առաջարանում: Առակների գրքում կիրառված սկզբունքը պարզաբանելու, պաշտպանելու և արդարացնելու մաքով հեղինակը գիմում է ընթերցողին. «Թնդ գիտուն մարդիք ինձանից չնեղանան, նրանք շատ դիրքեն կարդում, իրանց սիրաը միխթարում, ամա հասարակ մարդը մեկն ել ա չունի, վոր նա յել նրանով իր պարագ վախտը՝ ժամանակը անցկացնի»: Եթել ահա հեղինակն ընդառաջ ե գնում ժողովրդին, տալով նրան իբրև զվարճալի և խելացի ժամանցի միջոց՝ իր առակների գիրքը: Քանի վոր հեղինակը միայն հասարակ մարդկանց ճաշակն ու շահերը նկատի ունի, այդ պատճառով ել գրքի թե ոյուժեները, թե լեզուն և թե գաղափարախոսությունը հարազատ ժողովրդական ե:

Մոտիկից ծանոթանալով Արովյանի առակներին, մենք համոզվում ենք, վոր նա ճանաչում ե ժողովրդին, հաճախ և ունկնդրել նրան, գիտի ինչով և նա ապրում, հետաքրքրվում, գիտի նրա ճաշակը, զարգացման աստիճանը և այլն:

Արովյանի՝ Թրիլիսիի պանսիոնի յերրեմի աշակերտ Գեորգ Արիմյանը բանահավաք Սարգիս Բամալյանին հաղորդած իր հիշողություններում հետեւյալն ե ասել. «Մեր վարժապետը առանձնապես սիրում եր ներկա լինել ժողովրդական տոներին—դիմակները, ուսումնասիրել որաները, բան քաղել այնտեղից: Խալխի բերանից լսած բաները ժողովելով, վուանավոր դարձնելով սաղացնում եր աշակերտներիս համար... Վերջը այդ բաները առանձին գիրք գալձրեց, անունը դրեց «Պարագ վախտի խաղալիքը», վոր ժողովրդին ել աշխարհաբար գիրք կարդա»: Արովյանը պեղել հանել և ժողովրդի ընդերքից ստեղծագործական գուհարներ:

Ժողովրդայնության սկզբունքները կիրառելու խնդրում  
հեղինակը գարմանալիորեն հետևողական է:

Այսպիսի հետեւողականությունը թեև բացասաբար և ան-  
դրադարձել բանաստեղծական չափի ու ձեր, արվեստի վրա,  
սակայն շեշտակի ու կուռ և գարձրել հեղինակի իդեան, ամբողջ  
գրքին տվել և մի ակտիվ նպատակասլացություն: Հեղինակն  
այդպիս և վարվել գիտակցորեն/և պետք խոստվաճնվել հասել և  
իր նպատակին: Ամբողջ զրքում չենք կարող ցույց տալ ժողովը-  
դին անհարազատ մի արտահայտություն, անծանոթ մի բառ,  
նրա ականջին խորթ մի հնչյուն, նրա մաքին անմտաչելի և աշ-  
խարհահայցքին դեմ մի գաղափար: Գրքի սկզբնաղբյուրն ել  
հենց ժողովուրդն: և հանուչիուցել: «Բոլորը մեր խալիի խոսա-  
ցած բաներն եմ համաքեր. թարգմանածներս ել՝ ենպիս եմ դուքս  
բերել վոր մեր խալիի՝ սրտովն ըլի»:

Աբովյանը սեփական դասն փորձով գիտեր, վոր իր նոր  
գրքով վասարակիլու յև նոր թշնամիներ, վոր իր զեմ բարձրա-  
նալու յե մի նոր ընդդիմադիր ուժ: Բայց նա գիտեր նաև այն  
ճշմարտությունը, վոր:

«Ամենի սրտին դուք գալ չի ըլի:

Ամենի խաթրը մի կարա առնիլ»:

Բայց տեղ չդնելով «գիտունների» կարծիքը, արհամարհե-  
լով ծաղը և հալածանք, բանաստեղծն ասպարեզ և հանում իր  
նոր գիրքը, վոր մի նոր պայքար եր դարերի քարացած տրա-  
դիցիաների դեմ:

«Գնա, իմ խեղճ գիրք՝ զնան մարդամեջ.

Գլուխդ, քաշ քցիր, մի նեղանար հեչ:

Ականջդ փակիք, սիրտդ լին բռնիր,

Ինչ ասեն, խոսեն, տար ու համբերիլ»:

Բանաստեղծի հայացքը, սակայն, կտրում անցնում և մշու-  
շու հորիզոնը, հասնելով մինչև պայծառ հետուները, լուսավոր  
ու արևոտ գալիքը:

«Հալբաթ մեկ որ ել արե գուս կգա,

Են վախտն կիմանան, թե ուղածդ ի՞նչ ա»:

Հասարակական ի՞նչ արատներ և Արովյանը խարազանում  
և ի՞նչ առաքինություններ դրվատում: Ի՞նթեցողի դատաստա-  
նի առաջ հեղինակը կանգնեցնում և բուրժուական ախտավոր  
աշխարհը իր բոլոր կողմերով: Արովյանը բաց և անում փողի  
վրա հիմնված մարդկային հարաբերությունների վողջ կեղծիքը,  
թունավոր կերպով ծաղրում հարստի ու իշխանավորի անբար-  
տավանությունը և հասարակ ժողովրդի հանդեպ բռնած արհա-  
մարհական զիբքը, փողատիրոջ և իշխանավորի առջև սորկաբար  
խոնարհվելը, փողի ուժով զիբքի և պատվի հասնելը: դատապար-  
տում և շվայտությունը, վորկրամոլությունը, խաղամոլությունը,  
չկամությունը, նենգությունը, անընկերասիրությունը, տգիտու-  
թյունը, խարդախությունը և այլն:

Արովյանի առակներում արտահայտություն են գտել սո-  
ցիալական անհավասարության և դասակարգային ճնշման մո-  
մենտները:

«Ով զոռ ունի, հենց անձարի գլխին  
Ե քացի տալիս, հանում աչք, հոգի:  
Իր արած մեղքն ել նրա վղին դնում»:

Իր առաքինություններով հակադրվելով շրջապատող արա-  
տավոր հասարակությանը, Արովյանը բազմիցս տուժել և ու չա-  
րաչար հալածվել: Սյժմ նա վիրավորված հոգու ամրողջ զայ-  
րուցթով, խայթված ինքնասիրության ամրողջ թույնով, անարգ-  
ված պատվի ամրողջ վրեժով հաշվի յի նստում այդ հասարա-  
կության հետ, հատուցելով նրան իր արժանի վարձը: «Եշն ու  
բլրուլը» Արովյանի ապրած տրագեդիայի ամենացայտուն ար-  
տահայտություններից մեկն է: Առաջարանում հեղինակը պար-  
զաբանում է, վոր առակը հիմնված և անձնական փորձի վրա:  
Եշերի շրջանում տանջվող բլրուլի տրագեդիան Արովյանի սե-  
փական տրագեդիան և ցարական յերկարական ջների միջավայ-  
րում: «Խոզն ու յեզը» առակը խիստ հատկանշական և Արովյա-  
նի համար իր քարոզած իդեայով: Յեզն այստեղ վերցված և  
վորպես սիմվոլ հասարակական ոպտակար աշխատանքի, մարդ-  
կային ստեղծագործ ուժի, իսկ խոզը՝ հակահասարակական քայ-  
լայիչ և վնասարար ուժի մարմացումն է:

Ի՞նչ ոգուտ ունի են քաղցր արեգակն,  
Կամ են՝ յերկնքի պայծառ լուսնիակը,  
Վոր լիս են տալիս, իրանք մեր մտնում:  
Մեղանից մեկ քաղցր խոսք ել չեն լում:  
Կամ անբան յերկիրն ումնից խեր ունի,  
Վոր հազար բարի տա ամեն պարի:  
Անձեւը գալիս, արեւը բացվում,  
Սար ու ձոր ենպես ցնծում, ու ծաղկում,  
Են խեղճ մեղրաճանճն ել վոր չի քնում,  
Աղքատ, հարսափ բերանը քաղցրացնում:  
Վարդն՝ վոր իր հոտը չի պակասացնում.  
Ծառն՝ վոր իր պառողը ինքը չի ուտում:  
Հողը ծառին ենյութ տալիս, պահում,  
Ծառը հողին միշտ շվաք անում, սիրում,  
Յերկինքն անձեւի ա փայ տալիս յերկիրին,  
Յերկիրն ծովերիցն բարձրացնում ամպին:  
Արանք վոր չեն ուզում, իրանց մենք պաշտենք,  
Բնչին՝ չի պեաք և մեկ խեր ել առանք մենք:  
Ի՞նչ վնաս ունիմ, վոր յես աշխատում,  
Հաղար վորբ, խղճի կարիքն լցնում:  
Ես առողջ ջանը ել մեր ա տիկել  
Աստված՝ վոր չուզեմ բանի պետք ածել:  
Են յերկրի խոտը ինչ սրտով ուտեմ,  
Են աղբը ջուրը ինչպես յես խմեմ,  
Վոր աշխարքում բանի պետք չդամ,  
Իմ գլխիս նայիմ, իմ ցավս հոգամ:  
Յես հո իմ փորի համար չեմ աշխատում,  
Վոր կերն պակսւլին՝ լամ ու արտնջամ,  
Վորբերին ել ինձ են մատաղ անում,  
Ով մեկ մեծ մուրագ ունի իր սրտումն:  
Յես իմ աշխատանքն ձեռից չեմ թողալ,  
Քանի շունչ ունիմ ու խեր կարեմ տալ  
Իմացողի համար յես չեմ աշխատում,  
Խեր տալն եմ ուզում, տեսնում, մխիթարվում:

Աբովյանը քարոզում ե անսահման կերպով մարդկությանը  
նվիրվելու, նրան առանց շահախնդրության, անձնվիրաբար ծա-

ուայելու գաղափարը, մի գաղափար, վոր կարմիր թելի պես անցանում և նրա վողջ ստեղծագործության միջով:

Բոհության ու շահագործման, կեղծիքի և խարեյության աշխարհին Արովյանը հակադրում է բարձր մարդկայնություն և խոր հումանիզմ:

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Խաչատուր Արովյանի գործունեյության այնպիսի մի կարեւ վորագույն բնագավառ, ինչպիսին մանկավարժությունն է, մինչև այժմ աչքաթող և արված: Այնինչ, նրա լրիվ պատկերը տալու, դիմքն ամբողջացնելու համար չափազանց կարեվոր է Արովյան-մանկավարժի ուսումնասիրությունը:

Արովյանի գրական գործունեյության կողքին նրա մանկավարժական աշխատանքները կանգնում են իրեն անրաժանելի մաս մի ամբողջության: Արովյանը զարգացրել է մանկավարժական հայացքների մի ամբողջական և հետեւղական սխուեմ, վոր մեծ հաջողությամբ գործադրել է իր բազմամյա պրակտիկայում: Նրա մանկավարժական հայացքները պարզաբանելու տեսակետից բացառիկ կարեւություն են ներկայացնում այդ բնույթի բազմաթիվ աշխատությունների շարքում հատկապես «Նախաշավիդի կրթության» գասագիրքը և «Պատմությունն Տիգրանի» վեպը:

«Նախաշավիդ»-ը միակ աշխատությունն է, վոր տպագրվելու բախտի յի արժանացել Արովյանի կենդանության որով: Այդ դորձն իր վրա կրել ե ցարական բյուրոկրատիայի բոլոր քաշըը շուկաները և ցենզուրայի ամբողջ խստությունը: Դասագիրքն առաջին անգամ քննության և յենթարկվել 1841 թվին, Թբիլիսիի գիտման պահագայի ավագ ուսուցիչ Արդանովի կողմից և, ինչպիս պարզը վում և քննության արդյունքից, չե ընդունվել: Արդանովի նշուծ հիմնական թերությունը «ատառերի ընթերցանության տարրության անականակն եր», այլ խոսքով՝ հնչական մեթոդ, այն, ինչ հանդիսանում էր այդ գասագիրքի ամենախոշոր նորությունը, ինչ վոր մի ամբողջ հեղաշրջում եր կատարելու հայ մանկավարժության մեջ: Գրքի յերկրորդ քննությունը կատարվեց 1843 թվին, նույն Արդանովի և Արարատյանի միջոցով: Այս անգամ ևս աշխատանքը միանգամայն անխոցելի չհամարվից: Ժողովրդական

լեզվի ձևերի և վոճերի գործածությունը դիտվեցին իրեն թերություն և աշխատանքը կրկին հանձնվեց հեղինակին:

Ժամանակի անհանդուրժող պաշտոնական վոդուն համակերպված Արդանովն ու Արարատյանն ընդունակ չեղան ըմբըսանելու այն ժամանակիվ համար անչափ կարևոր և առաջադիմական այդ գործի խոշոր նշանակությունը: Գիրքը թեհ տալագըսավեց (1844թ.), սակայն գործածության մեջ չմտավ, գուցե և վոչընչացվեց կղերի ձեռքով, ինչպես վկայում և Արովյանի առաջին կենսագիր Տեր-Աղարյանը:

Զնայած «Նախաշավիղ»-ից հանվեցին զրաքննչական կանոնների գեմ մեղանչող մի շարք նյութեր, բայց և այնպես Արովյանը չզիջեց իր սկզբունքներից և վոչ մեկը: Նորություն հանդիսացող այդ սկզբունքները պերճախոս արտահայտություն են գտել «Նախաշավիղ»-ի հայտնի առաջարանում\*):

Զայնակցելով Ռուսացին և Պետակոցցուն, Արովյանը զըպրոցը համարում և համաժողովրդական լուսավորության հիմնական գործոն և այս յելակետի վրա կառուցում իր մանկավարժական սկզբունքները. զրանք հետապնդում ելին մի գլխավոր նպատակ—բազմակողմանի կրթություն՝ հիմնված յերեխաների հոգեկան կարողությունների և մտավոր ունակությունների գիտական լուրջ ուսումնասիրության վրա:

Ավելի քան 90 տարի անհայտության մեջ և մնացել Արովյանի մի նշանակալից յերկը—«Տիգրան» մանկավարժական մեծածավալ վեպը: Վեպի լրիվ վերնագիրն և «Պատմություն Տիգրանի, կամ բարոյական խրաների հայ մանուկների համար»: Ծըր-

\* ) «Նախաշավիղ» կրթության միակ վոչ լրիվ որբնակը Դ. Աղայանի արխիվի հետ անցել և Պետական Գրական թանգարանին և պահպանվում և այնակ:

«Նախաշավիղը» հետագայում հիմնական վերամշակման և յենթարկվել Յերկու վարիանաների մեջ առըքերությունն այնքան մեծ է, վոր նույնիսկ առաջին հայացքից թվում և, թէ ընդհանուր վոչինչ չկա զրանց մեջ: Մշակված վարիանաը առաջինի համեմատությամբ խոշոր առավելություն ունի: Մանավանդ արքերավարը և նրա ընթերցարանը, այնաեղ տեղ են գտել բարդաթիվ հետաքրքրական ինքնուրույն պատմվածքներ և բանաստեղծություններ, վորոնք անշուշտ հանդիսանում են հայ մանկական զրականության առաջին հաջողած փորձերը:

«Նախաշավիղի» վերամշակված վարիանտը լույս և տհանել 1864 թ.:

չահայաց և խորամուխ ընթերցողն իսկույն կռահում է, վոր «Տիգրանը» հայ դրականության «Եմիլ»-ն է, բայց միանգաւմայն տարրեր ճակատազրով: Հանգամանքների գժրախտ բերումով «Տիգրանը» մնաց իրբե մեռած տառ և չխպաց պատմական այն խոշոր գերբ, վոր անշուշտ վիճակված եր նրան: Յեթե Ռուսասոյի «Եմիլ»-ը մի ամբողջ հեղաշրջում կատարեց մանկավարժական մտքի բնագավառում, ունենալով ջերմ կողմնակիցներ ու կրքոտ հակառակորդներ, ապա որտի կակիծով պետք է նկատենք, վոր մեր իրականության մեջ Արովյանի «Տիգրան»-ին չվիճակվեց նման գեր կատարել:

«Պատմություն Տիգրանի» գործում զեղարվեստական ձեվով շարադրված են Արովյանի մանկավարժական հայացքները: Հեղինակի բաղմաթիվ գործերի մեջ տեղ գտած մանկավարժական մտքերն ու կարծիքները, նրա մի շարք տարբիների մանկավարժական փորձն այստեղ ի մի յեն գումարվել և ամբողջացվել:

«Տիգրան»-ը մի գորեզ առացուց և այն մասին, թե վորքան խոշոր և յեղել Արովյանի գերն իրբե մանկավարժի, ինչքիս և այն մասին, թե ինչքան ավելի նշանակալից կլիներ այդ պես յեղել վեովը ժամանակին հրատարակելով սերունդների գերը, յեթե վեովը ժամանակին աշակերտից, պիտի տնել, վոր անդաստիարակության միջոց և ուսումնասիրության առարկա հանդիսանար:

«Տիգրան»-ը միանգամայն որիգինալ գործ է, բացառիկ մեր ամբողջ գրականության մեջ թե իր ձեռվ և թե արձարձած ինդիբներով: Մի կազմ թողնելով այն տարբերությունը, վոր ինուրամաս և ուսուցչին աշակերտից, պիտի տնել, վոր անկասկած և Ռուսասոյի «Եմիլ»-ի և Արովյանի «Տիգրանի» սերտ առնչությունը:

Ռուսասոյի սիստեմը մանկավարժական մտքի պատմության մեջ մեծ հեղաշրջում կատարեց և պրոգրեսիվ խոշոր նշանակություն ունեցավ: Վոչնչացնող քննադատության յենթարկելով միջնադարյան սխոլաստիկ գլորոցը, ուր իշխում եր կրոնական կույր վոգին և ինկվիզիցիան, Ռուսասոն ուսման հիմքում գրեց ուալ գիտությունները և կրթության նպատակը գարձրեց բնության ձանաշողությունը: Նա առաջադրեց ուսման մեթոդները ակտիվացման, աշխատանքային դաստիարակության, տեսության ու պրակտիկայի կապի խնդիրները: Ռուսասոյի մանկավարժյան ու պրակտիկայի կապի խնդիրները:

ժական սիստեմը հայցված և խորը զեմոկրատիզմով և իր սուր ծայրով ուղղված և ֆեոդալական կարգերի ու սխոլաստիկ մանակավարժության դեմ:

Ռիւսոյի հայացքներն ունեցան իրենց հետեւողները թե Յեփրապայում (Պետականցի) և թե Ռուսաստանում (Տոլստոյ): Մեզ մոտ Ռուսոյի այդ հայացքների հետեւղ հանգիսացալ Խաչառուք Արովյանը: Վորդեգրելով Ռուսոյի մանկավարժությունն իբրև ժամանակի ամենաառաջավոր հայացքների արտահայտություն, Արովյանը մի շարք կհաներում շեղվել և նրանից, խուսափելով նրա սխաներից և հակասություններից:

«Տիգրան» վեպի համառոտ բովանդակությունը հետեյալն է, Տիգրանը և Աննան ամուսիններ են ու յերջանիկ իրենց բարեկիրթ զավակներով: Ծնողների ձեռքի տակ են զաստիարակիւմ նրանց սիրառուն զավակները, վորոնք նրանց ջերմ սիրո, հոգատարության և փայփայանքի առարկաներն են: Տիգրանը և Աննան համաստր պատուախանակությամբ և պարտավորությամբ հետեւում են յերեխաների ամեն մի քայլափոխին, ոգնում նրանց հասկանալու շրջապատը և կողմնորոշվելու շրջապատի առարկաների ու յերեխութների նկատմամբ: Տիգրանի հարկի տակ թագավորում են փսխադարձ սեր, հարգանք և հաշտութաղ կյանք: Զերմ սիրո այդ մթնոլորտում աճում են յերջանիկ յերեխաները փիզիքապես, պայծառանում մտքով ու հոգով:

Հոգատար հայրը 8-9 ամյա յերեխաների համար վարձում է զաստիարակը Այսպիսով տասկարեղ և զալիս մանկավարժ կարապետ Վահանյանը, վորը կրթում և իր սաներին՝ Յեղիսաբեթին և Վարդանին: Վեպի հետեւղազարդը գնում է հենց այս ուղինով: մանրամասն նկարագրվում է կրթական-դաստիարակչական վողջ պրոցեսը: Մանկավարժը շարունակում է ծնողների կողմից սկսած և վորոշ տատիճանի հասցրած աշխատանքը: Քայլ առ քայլ հետեւելով այս պլուղեին, Արովյանը զրսելում է իր մանկավարժական ըմբռնումներն ու հայացքները, վորոնք զարգանալով վորոշ հետեւղականությամբ՝ կազմում են մի լրիվ, ամբողջական սիստեմ:

Յերեխաների գոստիարակությունը հանձննելով մանկավարժին, Արովյանը ծնողներին չի աղատում այդ գործի պատասխանակառությունից:

Սակայն վեպը չի սահմանափակվում միայն դաստիարակչական պրոցեսի նկարագրությամբ. զուգահեռաբար պատկերացվում և նաև Տիգրանի ընտանիքը, շրջապատի կյանքն ու կապը այդ շրջապատի հետ:

Պիտի նկատել վոր Տիգրանն ու Աննան պատկերացվում են իրեւ որինակելի ծնողներ թե զավակների նկատմամբ ու նեցած պարտավորությունների և թե ընտանիկան նիստ ու կացի, սովորությունների տեսակետից: Նրանք ամեն բանից վեր են համարում պարզությունը, համեստությունն ու մաքրությունը: «Կարգն ու իստակությունը ավելի կղարդարեն, քանց նախշը, ներկը, խալիչեն, պատկերն ու սեղան, աթոռը», — խրատում ե Տիգրանն իր վորդուն:

Տիգրանը նվիրված է հասարակական բարուն, իր բախտավորությունը նա տեսնում է ուրիշներին լավություն անելու, նեղության մեջ գտնվողներին ոգնելու մեջ: Սեփական բախտավորությունը մոռացնել չի տալիս նրան շրջապատի դառն աղքատությունը: «Նրա սերն ու հոգին ենքան իր համար չեր հոքս քաշում, ինչքան ուրիշի համար»: «Հենց իմանում եր՝ թե աշխարհըն իրեն են բաշխել, յերբ մեկ մարդի լավություն եր անում»:

Այսպիսով մանկավարժի հետ մեկտեղ Արովյանը պատկերացնում է նաև ընտանիքն ու այն որինակելի շրջապատը, վորտեղ անցնում և մանուկների կյանքը:

Ոգնել մանուկներին կողմորոշվելու համարուկական կյանքի բարդ որգանիզմում, իմանալու իրենց գերը, պարտականություններն ու իրավունքները հասարակության մեջ—ահա թե ինչ խնդիրներ ե առաջադրում իրեն Արովյանը

Կարապետ Վահանյանը հիշեցնում է այն հեռատես, բազմահմուտ մարդուն, վորը մի հեռավոր ու գժվարին ճանապարհ ե անցնելու և զգուշությամբ նախապատրաստվում և անվախ դիմավորելու զալիք բոլոր պատահարներին. նա զինված է բոլոր հնարավոր միջոցներով այդ գժվարությունները հաղթահարելու համար: Այսպես կարապետը զինում է իր սաներին կյանքի յերկար ու դժվարին ուղին անսայթաք անցնելու բոլոր անհրաժեշտ զինքերով:

—Վար զիտություններն ես ավելի սովորել—հարցնում ե Տիգրանը Կարապետ Վահանյանին:

— Բնաբանությունը, առավել բուսաց պատմությունը, յերկրի ու ինչ վոր աչքդ տեսնում ու նրանց պատմությունը: Աշխարհիս պատմությունը ու հայի, ոսի, թուրքի լեզուն, — պատասխանում և ուսուցիչը: Այս պատասխանի մեջ կտ մի ամբողջ մանկավարժական սիստեմ: Դա ու ետք ստական գասափարակության սիստեմն է: Այս սկզբունքով պիտի պատրաստվեր վոչ թե սխալաստիկ գործոցի կազմակարից դուրս յեկող, շրջապատից ու կյանքից կարված մարդը՝ այլ կյանքը խմացող, նրա պահանջները հասկացող և այդ պահանջներին լիովին բավարարություն ավող քաղաքացին: Արշադրավ են մանավանդ վերը բերված պարբերության վերջին բառերը: Արովյանը հայ մանկավարժի, ուստի և նրա գաստիարակությանը հանձնված սաների համար պարտագիր և հոմարում հայերեն, ուսւսերեն և թուրքերեն լեզուները: Հայ լեզուն իրեն մայրենի լեզու առաջին անհրաժեշտությունն և հանդիսանում: Այդ լեզվով պիտի նոր սերունդը զարգացներ մայրենի կուլտուրան: Ռուսերենը պետական լեզու լինելուց զատ առանձին կարևորություն և ուսանում իրեն մեծ կուլտուրա ունեցող մեծ ժողովրդի լեզու, ժողովուրդ, վորի կուլտուրայի բարերար աղղիցության նշանակությունը Արովյանն առաջինն և հասկացել, մեծապես ոգովելով նրանից: Ազրբեջաններենը անհրաժեշտ և իրեն ամենորյա շիման մեջ ելին հայերը: Այսպիսով, Արովյանի մանկավարժական գաղափարներից մեկն այն ե, վոր կրթությունն ու գաստիարակությունը պիտի համապատասխանի կյանքի կոնկրետ պահանջներին:

Արդեն «Վերք Հայաստանի» վեպում Արովյանը զարգացնում և ուսումնական ու գաստիարակչական մի ամբողջ ծրագիր, յելնելով այն ժամանակվա քաղաքական որբենուացիայից և մեր ժողովրդի աղատազրական պայքարի շահերից:

«Հայոց աղքի ջանին զուրբան՝ մեկ նրա երեխին ուսում տնը, նրա են լուսաթափախ հողին կրթիր, կրթիլ եմ ասում, թուղթ խաղալ, ֆրանցուղերեն խոսիլ, անգիր բերան անիլ գըլ խիցը զուրու տալ՝ չեմ ասում ու շարական, փոխ, յա շիլա վլավ ուտիլ սովորցնիք վոր մեզ ես տեղն ա քերել, տեսնիմ՝ թե ջան կտա քեզ թե չեա: Այստեղ Արովյանը նույն սեալիստական զաստիարակության քարոզիչն ե: Այդ սկզբունքից յելնելով նա մի

կողմից հարվածում և միջնադարյան սխոլաստիկան, իսկ մյուս կողմից քաղաքակիրթ ազգերի կուլտուրայի ձևական ընդորինակությունը, «կրթված վերնախավում» տեղ գտած Փրանցուղերեն կոտրատելու պրակտիկան և սեփական ժողովրդի ու կուլտուրայի վերաբերմամբ ունեցած արհամարհանքը:

Ինչպես Ռուսոյի, այնպես ել Արովյանի մոտ բնությունը հանգիստում և կենդանի գոլրոց, բնության առարկաների, յերևույթների, ուժերի ուսումնասիրությունը, նրանց ձիւտ հասկանալն Արովյանը համարում է կրթության նպատակը: Այդ միտքը նա հանգամանորեն զարգացնում է նաև իր նշանավոր «Նախաշավիղ կրթության» դասագրքի առաջին մասի անտիպ նախարանում: Այդեղ ասված և, «Վորքան վայելուչ և իմաստալից գոլրոց և բնությունը, վոր շրջապատում ե մեզ, մարդու գործառնությունը, վոր մենք ամեն բռնի ահենում ենք մեզ մոտ, սովորական առարկաները՝ վորոնք գորնվում են մեր չորս կողմը. իմանալ անունները, ձեզ, գործողությունը, վորպիսությունը, նպատակը, նյութը, բոլոր իրերի ներգործությունը, ճանաչել և դատել ամեն բանի մասին, վոր լսում և տեսնում ենք՝ բնական մարդու համար, այլև ինչ ծայրագույն ուսում պետք և ցանկալ»:

Այս ձիւտ դրույթով և պայմանավորված եքսկուրսիոն մեթոդի լայն կիրառումը Կարապետի կողմից. պարապմունքները գերազանցապես անցնում են բնության ծոցում, ուր յերեխաները դաստիարակի ղեկավարությամբ հավաքում են և տեսակավորում ծաղկներ և բույսեր, սովորում նրանց անունները, հետեւ նրանց աճեցողությանը և այլն:

Կրթության հիմքում դնելով ուսալ գիտությունները, Արովյանը, ի տարբերություն Ռուսոյի, չի սահմանափակվում բնական գիտություններով. նա դասավանդվող առարկաների ցանկում մտցնում է նաև պատմությունը, բացի այդ, Կարապետի սաները լայնորեն ծանոթանում են հասարակական կյանքին:

Արովյանի կրթական սիստեմում բացակայում է կրօնական դաստիարակությունը: «Պատմություն Տիգրանի» վեպում նրա սաները չեն ազնիւմ: Եշակերտների վողջ ուշագրությունն ուղղված է այն բանին, վորպեսզի կարողանան ճանաչել բնությունն ու հասարակությունը: Բնական յերևոյթների ձիւտ ըմբռումը վերացնում է ամեն տեսակի սնոտիապաշտությունը, վոչնչացնում է կույր հավատը:

Հասարակական շահերի ակախվ գիտակցությամբ և սժտում՝ Արովյանն իր սաներին։ Նրանց անձնական յերջանկությունը պետք է բախի հասարակության յերջանկությունից։ Անձնական շահը միշտ ստորագասվում է ընդհանուրի շահից և դոհարեավում նրան։

Այսպիսով Արովյանը պատրաստում է վոչ թե բուրժուական հասարակության գայլի սրբնքը սրբագրծող եգոխառներ, այլ հասարակության շահերին՝ նվիրված ակտիվ քաղաքացիներ։ Նա կրթում է իր սաներին՝ յելնելով հումանիզմի բարոյական սկզբունքներից։ Հարգանք գեղի մարդը՝ առանց ցեղի և հավատի խարության, առավելապես գեղի աշխատավոր մարդը, — անա թե ինչն է կազմում Արովյանի բարոյական ըմբռնումների հիմքը։

«Նոքար ըլի, թե ճորտ, աղքատ ըլի, թե գարիր, պակասություն ունենա, քոռ ըլի, կամ քաշալ կամ չորսի, ինչ ըլի, ըլի, ասեց պարոն Տիգրանը, ով նրանց մեկ պակաս իսուք ասի, իմացիր, վոր նրանում վաշմարդկություն կա, վոչ հոգի, վոչ հավատ»։

Արովյանը հատուկ քննության առարկա յե գարձնում ճորտության խնդիրը։ «Տիգրան» վեպում մենք պատահում ենք ճորտերի, վորոնք արյան վրեժով են լցված տերերի գեմ։ Փախած մի սուս ճորտի Տիգրանը ապաստան և տալիս իր հարկի տակ պահում, պաշտպանում է իշխանության հետապնդումից ու տնօրինում նրա հետագա կյանքը՝ իրքի աղատ աշխատավորի։ Ուշագրավ է Տիգրանի և Կարապետի խոսակցությունն այս առթիվ։

«Ասացեք ինձ՝ աչքի լույս՝ ինչ անեմ ես մարդի հետ։ Չորդա, զարիբ ա, մեր բարեկամը չի, ճանաչ չի, ազգական չի, հայել չի, ոտար աղգ ե»։

— Հո մարդ, իսանորդի ա, խոսք առավ պարոն Կարապետը։

— Ես ել եղ կուզեյի ասել, պատասխանեց պարոն Տիգրանը, են ել նեղության մեջ, վոչ թե մենակ մարդ։ Եսպիսին չի՝ պետք է գուոը հետ անել։ Նա մեր տունն ա ապավինել եկել, ով ըլի, ինչ ազգ ել վոր ըլի, նրա դարդին ողետք և հասնիմ, եղ իմ պարագն ե»։

Սա մի հազվագեալ պայծառ ու անխառն հումանիզմ է»։

Ֆիզիկական աշխատանքը Արովյանի կրթական սխտումում հատուկ նշանակություն և ստանում իրքի դաստիարակչական կարևորագույն գործոն։ Աշխատանքը բարերար ներդործություն

և անում վոչ միայն մանկան ֆիզիկական ուժերի զարգացման վրա, այլ և մտավոր ընդունակությունների զրահորման ու ընավորության կրթության: Սեփական աշխատանքի արդյունքի վայելումը գերազույն յերջանկություն և պատճառում յերիխաներին Վարդանը և Յեղիսաբեթը բանջարանոցում ունեն իրենց մարզերը և մշակում են սեփական աշխատանքով: Աբովյանի մոտ աշխատանքը դառնում է պարագիր բոլորի համար:

Ահա Կարապետի աշակերտաների սովորած բանաստեղծություններից մեկը.

«Վոր նստենք—ասենք, աղա յեմ, աղա,  
Մեր հացն ավ կտանի ջաղացն ու կաղա:  
Տանձը ինքն իրան բերանդ չի ընկնիլ,  
Վոլ տակին նոտիս, տեղիցդ չես շարժիլ:  
Ով գայրաթ չանի, կմաս սովոծ,  
Անը ժամանակին գունե գուս ընկած»:

Ծուլությունն ու անգործությունը մարդուն հասցնում են գժբախտ վախճանի: Աշխատանքով և մարդու համար բացվում յերջանկության և բարեկեցության ազբյուրները: Աբովյանը յերջանկության նախապայմանը համարում է աշխատավորի համեստ և չափավոր կյանքը: Հարստությունը գժբախտացնում է մարդուն, չափավոր կյանքով ապրող ազնիվ ու բարոյական մարզը հարստանալով կորցնում է մարդկային կերպարանքը, վեր և ածվում բարոյական հրեշի:

Աշխատանքը ֆիզիկական դաստիարակության միջոցներից մեկն ե, բայց վոչ միակը: Տիգրանը մեծ աշաղը ություն և գարձընում իր սաների ամբության, տոկունության և առողջության վրա: Նրանք կարող են դիմանալ ցրտին ու շոգին, անցնել յերկար ճանապարհ, գիտեն վարժ լողալ և այլն: Այս ամենը վերաբերվում է յերկու սեփի յերեխաներին: Այս հարցում ևս Աբովյանը զգալիորեն տարբերվում է Ռուսոյից, վորը Սոֆիի դաստիարակությունը տանում էր տարբեր սկզբունքներով, քան ես միլինը, ասելով՝ «Սոֆին պետք է կին լինի, ինչպես Եմիլը պետք է լինի տղամարդ»:

Իրեկ մանկավարժ Աբովյանն իր հայացքներով հիմնականում կանգնած լինելով Ռուսացի տեսակետների վրա, մի շարք կետերում շեղվում ե նրանից և ուղղակի հակառակում նրան:

Այսպես որինակ «ազատ գասահարակության» հարցում, վոր Ռուս-  
սոյի սխառեմում հիմնական մոռենտ և հանգիսանում, Արտվյանը  
միանգամայն ապրերվում և նրանից: Ռուսան «ազատ գասահա-  
րակության» իր սկզբունքով թիրագնահատում և սխառեմատիկ  
կրթությունը, ուսուցչի գելավար գերը, դասազրքի անհրաժեշ-  
տությունը և այլն, գերազնահատելով աշակերտների անձնական  
փորձը, նրանց ինքնուրույնաբար աշխատելու—հետազոտելու  
ունակությունը: Արտվյանի մաս ուսուցիչն այն հմուտ գելա-  
վարն է, վորի փորձված ձեռքերումն և գանվում աշակերտներին  
դեպի կյանք առաջնորդելու զեկը: Ուսուցիչը մի կողմից զար-  
գացնում և յերեխաների մեջ յեղած ընդունակություններն ու  
դրական հակումները, մյուս կողմից արգելակում և բացասական  
ազգեցությունները:

Կարապետը յերեխաների անթույլատրելի արարքների հա-  
մար պատիմներ չի գործազրում և վոչ ել ձանձրացնում և նը-  
րանց խրատական յերկար ու բարակ քարոզներով: Յերեխանե-  
րի ուշագրությունը դարձնելով նրանց վատ արարքների բացա-  
սական հետևանքների վրա, նա հասնում և այն բանին, վոր այլ-  
ևս այդ գեղգերը չեն կրկնվում: Մյուս կողմից լայնորեն գոր-  
ծազրվում են պրոֆելակտիվ սիջոցները: Ուսուցիչը բազմաթիվ  
որինակներով և կյանքից առած կողմնակի պատմություններով  
կանխում և յերեխայի ամեն մի հնարավոր սխալը: Ընդհանրա-  
պես վեպում յուրաքանչյուր միտք, յուրաքանչյուր գաղափար  
յերեխային համոզիկու համար ուսուցիչը գիմում և կյանքից ա-  
ռած կինդանի որինակների և վոչ իր խոսքի հեղինակությանը:  
Յերեխաներին արվող պատմությունները սովորաբար հաղորդ-  
վում և չափազանց հետաքրքիր և կենդանի ձևով: Այդ պատմու-  
թյունները նրանց ուշագրությունը կազմակերպելով վորոշ ուղ-  
ղությամբ, բերում են համապատասխան յեղակացության:

«Յերեխեքը խկույն խմացան, թե ինչ մտքով ա իրենց  
պարոն Կարապետը ես ասում ու մտքերը զբին, վոր եսուց գե-  
նը, չափավոր ուսեն, չափավոր նստեն ու վեր կինան»: Այսպի-  
սով լավի և վատի, թույլատրելիի և անթույլատրելիի հասկացո-  
ղությունը գասահարակլողներին արվում և վոչ թե վերացական  
բատողությունների ու անհամ, ձանձրակի քարոզների միջոցով,  
այլ կյանքից առած կոնկրետ որինակներով:

Վերը պիտի լիներ Աբովյանի տված գաստիարակության վերջնական արդյունքը. Գիղիքական, մտավոր, հոգեկան և բարոյական ինչ հատկություններով և ոժառում Աբովյանն իր սխտեմով գաստիարակված մարդուն:

Ինչպես Ռուսոսն իր Եմիլից և նրա ապագա կնոջից՝ Սովետից նոր հասարակության թիջի և ստեղծում, այնպէս ել Աբովյանը Վարդանից և Յեղիսաբեթից պատրաստում և որինակելի քաղաքացիների տիպը, վորոնցից պիտի ստեղծվեր նոր հասարակություն: Աբովյանը պատրաստում և առողջ և տոկուն մարդ, մարդ, վոր կանգնած և ժամանակակից կուլտուրայի բարձրության վրա, լուսամիտ մարդ, ազատ բոլոր տեսակի նախապաշտումներից և կույր հավատից, վստահ իր ուժերին և կարողություններին, մարդ, վոր կյանքի իմաստը տեսնի գործունեության մեջ, վորի համար աշխատանքը հանդիսանայի բարջանկության աղբյուր, վորը գերազանի պարզ, համեստ, տղնիվ և բնական կյանքը և յերես գարձնի շահագործող վերնախավի աղականված միջավայրից ու կենցաղից: Աբովյանի գաստիարակած մարդը քաղաքացի յի, ոժաված քաղաքացիական արիությամբ: Նա սիրում է կյանքը և մարդկանց, սիրում է մարկղային հասարակությունը և նվիրված է նրա շահերին անդավաճան կերպով:

«Պատմություն Տիգրանի» վեպը մի նոր և խոշոր ապացուց և Աբովյանի գետովատիզմի:

Այս վեպը Աբովյանի մանկավարժական-հասարակական գաղափարների արտահայտությունն ե զեղարվեստական գրականության միջ: Սա վեպ չե սովորական մաքով և ունի խոշոր թերություն վիպական արվեստի ձեւական պահանջների տեսակատից: Զեռնարկելով այս գործը, վիպասանն այլ խնդիր և ունեցել այլ առաջադրանք: Վիպական ձեր սասկ միջոց և հանդիսացել հեղինակի ձեռքին իր մտքերն ընթերցողներին մատչելի և գրավիչ գարձնելու համար: Յեկ իրոք, «Տիգրանը» մինչեւ վերջին եջը կարդացվում և մեծ հետաքրքրությամբ: Այս գրվածքում լիովուն մաքրվել ե, դափնել տաճկերենի և պարսկերենի խառնուրդից, այսուղ չկան «Վերք Հայաստանի»-ի բազմահարկ, շունչ կարող նախադասությունները շարադրանքը պարզ ե, նախապա-

սությունները սեղմ: Անկասկած «Տիգրանը» գրված և «Վերք Հաւ յաստանի»-ից բավականի ուշ, հավանորեն Յերեվանում պաշտոնավարելու շրջանում, կյանքի վերջին տարիներին և թերևս այդ և պատճառը, զոր գործն անավարտ և միացել:

Տանամյակների վրայով այդ մեծարժեք վեպը համը լուսությամբ և անցել, ասես խոռված անցած սերունդների զայրացութիչ անտարբերությունից: Տանամյակների կյանքը չի գրկել այդ գրվածքն իր արժեքից: «Պատմություն Տիգրանի» յերկն այդ յերկար ժամանակամիջոցն անցել և հսկայի քայլերով և մեզ և հասել միանդամայն թարմ ու կենսունակ: Այսոր վերջապես Արովյան-մանկավարժը կարապետի և Տիգրանի բերանով պիտի խոսի մեղ հետ՝ խորհրդացին մանկավարժի, ծնողի, յերիտասարդի և պատանու հետ: Այդ խոսքը սիրով կլսվի բոլորի կողմից և չի հնչի խորթ ու ստար, միամիտ ու հնացած, պաղ ու անտարբեր: Նու մեզ կհմայի իր խելացի ու խորիմաստ մտքերով, բազմափորձ մարդու ոգտակար խորհուրդներով, կրացավառի իր անորինակ սիրով գեղի նոր սերունդը:

\* \* \*

Մի հարյուրամյակ և բաժանում մեղ Խաչատուր Արովյանից, սակայն այդ հեռավորությունից նա նայում և մեղ պայծառ հայացքով, ինչպես արելի անամուլ յերկնքից: հեռավոր ժամանակների մշտուշը չի մթագնում նրա դեմքը, այլ ցնդում և նրա անաղարտ պայծառությունից: Ի՞ արելի պես ջերմ ու լուսավոր սրտով, գարնան պես բուռն ու տարերալի կյանքով, նա խորտակեց հայ ժողովրդի մաքի կապանքները, ջարդեց նրա կյանքի անշարժության սառույցը: Արովյանը մեր նոր գրականության, մեր նոր կուլտուրայի գարունը հանգիստացավ և ունեցավ գարնան պես կարճատեղի, բայց բուռն ու գեղեցիկ կյանք:


Այսոր Արովյանը խոսում է մեղ հետ իր հարյուրամյա հեռավորությունից: «Թաք ըլի դռւ, դռւ՝ իմ պատվական ազգի քո վորդու արածը, քո վորդու խակ լեզուն սիրես, ընդունես, ինչպես հերը իր մանուկի կմկմալը, վոր աշխարհի հետ չի փոխիլ»:

Խորհրդացին ժողովարդը սիրով հայր և ամեն մի արժանավոր զավակի:

Արովյանը մեռավ ժողովրդի սիրուն, ժողովրդի սիրն եւ նրան անմահ կպահի:

ՀԱՎԵԼՎԱԺ

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ  
ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ



## Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Աշխարհաբարի և գրաբարի պայքարը նույնքան հին և վորքան ժողովրդի պայքարը հայ աշխարհիկ և հոգեվոր տերերի դեմ: Դա դասակարգային կուլտուրաների բաղխումն եր, դեմու կրատական և կեղերա-ֆեոդալական կուլտուրաների մշտական ու անհաշտ կոիվը:

Աշխարհաբարի պայքարը գրաբարի դեմ անցյալ դարի 40-ական թվականներից թիվականից նոր շրջան, իրեց առավել բուռն ու կատաղի բնույթ՝ խրախույս ու վողի ստանալով գարերի քնից սթափված ժողովրդից, վորի ձայնն սկսում եր հնչել առնական, բարձր ու լսելի:

Այդ պայքարը թողեց իր տարեհրային ընույթը՝ դառնալով խորը գիտակցական, մտածված, պատճառաբանված ու կանքի փաստերով հիմնավորված:

Արովյանը աշխարհաբարի պայքարը գրաբարի դեմ հենց այդ մակարդակի վրա դրեց՝ մարտական լիցք ստանալով ժողովրդից:

Արովյանը ժողովրդի կուլտուրական վերածնության գործում լեզուն համարում է ամենակարելիոր գործոնը: Ազելին, լեզուն ազդի գոյության, նրա ինքնուրույնության առաջին նախապայմանն է ըստ Արովյանի: «Այ՞ի լեզուն, լեզուն, լեզուն վոր չըլի, մարդ ընչի նման կըլի», բացականչում է նաև «Վերք Հայուսանի» վեպում: Իր «Նախաշավիլի կրթության» դասագրքի անտիպ առաջարանում Արովյանը զրում է: «Բայց այդ բոլորի առաջնորդը, կամ զեկավարը լեզուն է, առանց վորի մեռնում է ամեն բան մեզ համար ու չի կարող վորին ներգործություն ունենալ»:

Անցողաբար նկատենք, վոր Նալբանդյանը նույն մերձեցումն է ունեցել այս խնդրին, ինչ վոր Արովյանը. նա յեկա լեզուն համարել է աղդի գոյության պայմանը, հիմքը: «Աղդ կոչվածը, — բանական դիմումը, — վոչ այլ ինչ է, յեթե վոչ լեզու, առանց վրում է Նալբանդյանը, — վոչ այլ ինչ է, յեթե վոչ լեզու, առանց վորի չի կարող լինել աղդ: Լեզուն աղդի վողին են: Մի այլ աղդ

Նալբանդյանը գրում է, «Ազգը ինքն ըստ ինքյան աղք չե, յեթէ չունի լեզու»:

Մի ուրիշ աշխատության մեջ Նալբանդյանը ի հաստատություն իր մաքերի, մեջ և բերում «Վերք Հայաստանի» վեպից լեզվի մասին ասված Արովյանի հայտնի խոսքերը. «Ա՛խ՝ լեզուն, լեզուն վոր չըլի, մարդ ընչի նման կըլի, —ասում ենահատակ Արովյանը»:

Ի՞նչ ընթացք և ուղղություն պիտի ունենար մեր լեզվի զարդացումը, ի՞նչ լեզվով պիտի զարդանար մեր գրականությունն ու կուլտուրան: Համենայն գեպս վոչ գրաբար լեզվով, վորը հենց են վլխից խորթ եր և ոտար ժողովրդին. «Անկարելի ա, թե մեր յերանելի թարգմանչաց ժամանակին՝ հայք են լեզուն ելի՞ ըլում խոսելիս, վոր նրանք գրեցին», —ասում և Արովյանը մի ակնարկ նետելով մեր լեզվի պատմության վրա. Նրա կարծիքով գրաբարը զուրկ և իրական արժեքից, նրա արժեքը սույն պատմական է: «Մեր գրաբառ լեզուն անդին ե, —գրում և Արովյանը, նմանը չունի, ի՞նչքան լեզու յել վոր գիտեմ, մեկն ել են համը են քացրությունը, են ճոխությունը չունի. բայց մեր վաստից հազարից մեկը չի հասկանում, ի՞նչ պետք ե արած»:

Արովյանը զրաբարը համարում է մի պատվար, մի խոչընդունում, վոր արգելակում և մեր կուլտուրայի առաջընթացն ու փակում ժողովրդի ճանապարհը զեպի կուլտուրան: «Թեկուզ սեերեն նեմեցերեն, յա քրանցուզերեն զրած, թեկուզ զրաբառ՝ տասէ լըլի վոր հասկանային, բայց հարիր հազարի համար՝ թեկուզ ի գրածը, թեկուզ մեկ քամու ջազաց: Ախը վոր աղզը են լեզվովի չի խոսում, են լեզուն չի հասկանում, սաքի հենց բերնիցդ ել վոսկի վեր տծիր, մւմ պետք ե տսես: Ամեն մարդ իր որտի խարջ բան կուզի»:

Նալբանդյանը, կարծեք շարունակելով և առավել ևս սրելով Արովյանի միտքը, գրում է. «Ի՞նչ վոր են հայոց իմաստունները համար չինացիների հեղինակները, ճիշտ նույնն են մեր ժըրդի համար իրենք՝ հայկական չինացիները»:

Յեզրակացությունն ավելի քան պարզ ե. զրաբարը աղջ լեզուն չեր, նա մի քանի տասնյակ խմաստակների մենաշնորհ իրավունքն եր, այս սեակցիոն մտավորականության, վորը զրաբարը զրոծազրում էր ժողովրդի դեմ իրրեվ ինքնապաշտպանությունը:

թյան զենք՝ փակելով նրա առաջ լուսավորության դռները։ Խըրա թին, անմատչելի և նույնիսկ բոլորովին անհասկանալի շարա դրելը այդ իմաստակների կողմից գիտվում եր իբրիվ բրական հատկանիշ, մեծ տաղանդի նշան, և ծաղրվում եր պարզ, ժողովրդին մատչելի շաբադրանքը, իսկ հեղինակը հայտարարվում անշնորք։ Այդ եր, վոր մի պահ Արովյանին խոր տարակուսանքի ու ծանր յերկմատանքի մեջ ձգեց, այն պահին, յերբ նա պիտի ստեղծեր իր անմահ «Վերք Հայտառանի»։ «Հրամայել չեյի կարող, ինողը բեյի, աղաչեյի ել՝ լեզուս մարդ չեր իմանալ, չունքի յես ել եյի ուղում՝ վոր ինձ վրա չծիծաղին, չասեն կոպիսա ա, հիմար ա, վոր քերականություն, ճարտասանություն, արամարանություն չգիտի, յես ել եյի ուղում, վոր ասեն։ «Ո՞ն ենպիս խորը, խրթին շարագրել գիտի, վոր սատանեն ել միջիցը մեկ բառ չի կարող իմանալ, հատկանալ»։ Այս տողերի տոկ թագնված և կծու հեգնանք, ուղղված այն ժամանակ թագավորող միջնադարյան սխոլաստիկայի և այդ գաղափարախոսության կուղների դեմ։

Այս գրությունը հետագայում ավելի լիբրուտ քննադատության և յենթարկվել Նալբանդյանի կողմից։ Մեծ հրապարակախոսն իր մի հոգվածում գրում է. «Այսքան պարզ և լուսապայման ճշմարտությունը չեն կարողանում այդ պարունակը դեռ խստակ աշքով ակտանել ուստի և ասում են, վոր պիտո յե մարդ այնպիսի լեզվով խոսի, վոր գիմացի մարզը նրան չհասկանա, և վորչափ խրթին և մութը կը խոսեր, այնչափ արժանավոր և քանքարավոր եր հեղինակը, ոոքա բնության կանոնին չհավանելով, վոր գրել և մարդուս մեջ լեզու և ըանականություն՝ սրբի լուսական գործականություն պահանջմանքը ընկերին հայտնելու մասին, յուրանցից կանոն են հաստատել թի պիտո յեր խոսել այնպիս, վոր ղժվար լիներ համականալը, ուրեմն յիթի ղժվար համականալի խոսելը գովելի մի բան եր, բնափ չխոսելը վորչափ և . . .»։

Առավել վորքալի վիճակում եր գտնվում գպրացը։ Իր «Եաւխաշավիզ կրթության» զործի առաջարանում Արովյանը մի առք պողեմիկա յե մոււմ այն հնամուլ քննադատաների դեմ, վորոնք հետագայում ծանոթանալով աշխարհաբար այդ գասագրքին, պիտի հեղինակի հացեցին ասեցին հեղնանքով. «Յանը կորվեց ա, նստել ա դարակակ-դարակ գլխիցը գուրս տվել Ես մասալիքը մեր պառախներն ել դիտեն»։ Այդ քննադատներին Արովյանը

հեգնանքով անվանում և վերացական փիլիսոփաներ, վորոնց միոքը չի հանգում բնականի և իրականի վրա, այլ ոգապարում և յերկնքում: Նրանք փորձով չճանաչելով յերեխաների հոգեկան կարողությունները, ծանրաբեռնում են նրանց միտքը հոկտորական քերթվածներով, վորոնց թե լեզուն և թե իմաստը միանգամայն անհասկանալի յի ու խորթ նրանց, և կյանքի գործնական պահանջների տեսակետից միանգամայն անպետք: Ել ինչպէս են հնարավոր բացել յերեխայի միտքը, հասկացնել առարկայի իմաստը, սիրել տալ գողոցն ու գիտությունը, հարց և տալիս Աբովյանը: Յերեխաների աչքին տառերը փուշ են գառնում, նրանք գողոցից խուսափում են ինչպես տանջարանից: «Ում չե հայտնի՝ թե վարքան և ոտարացել մեր գրաբառ լեզուն հասարակ գործածականից և քանի տարի յի հարկավոր նրա կանոնները լիակատար ճանաչելու համար: Մինչև յերբ պետք և տանջը վողորմելի մանուկները: Դաղրոցը նրանց թվում և տանջարան, ուսումն առաջանք և սոսկալի պատիժ և այս ամենի պատճառը լիզի խրթնությունն ե»:

Աբովյանին քաջ ծանոթ եր այն ժամանակվա խոլիֆայական գողոցների վողորմելի վիճակը. յերեխաները տարիներ շարունակ աչքի լույս եյին փչացնում ժամագրքի, կտակարանի, աստվածաշնչի մեռած տառերի վրա, գրի սեվն ու սպիտակը ջոկելու, հասարակ գրանահչություն ձեռք բերելու համար միայն: Աբովյանն իր կաշվի վրա յի զգացել այդպիսի ուսման ամբողջ սարսափը: Ճիշտ նույն կերպ և տրամաբանում նաև Նալբանդյանը: Նա յեվս Աբովյանի պես յելնելով կյանքի ոեալ պահանջներից, ավելի գործնական և համարում աշխարհաբարով հարկավոր գիտություններ սովորելը, քան ժամանակ վատնել մեռած գրաբարի վրա, վորը հայ մանուկին հաց ու ջուր չեր տալու: «Թող հայոց մանուկը սովորի յուր մայրենի լեզվով ազատական գիտությունները, թող նա այն աշխատությունը ինչ վոր գործ և գնում հին և մեռած լեզուն սովորելու համար, գործ ածե հարկավոր գաղափարներ ստանալու մասին, չե պիտո նորա հինգ դարու հայախոսությունը, այդ նորան հաց ու ջուր չի տա, նորան հարկավոր և գիտություն, վորը կարող և ստանալ նոր լիզի միջնորդությունով»:

Աբովյանն իրենի մասկավարժ խոր վողբերգություն ե

տաղըեւ, նկատելով յերեխաների գժկամությունը դեպի հայ գիրն ու բրականությունը և բուսն հետաքրքրությունը դեպի այլ ազգի հեղինակների ստեղծագործությունները։ Սիրոս ուզում եր պատոփ, վոր ես երեխեքանց ձեռքն ել՝ ինչ Հայի գիրք տալիս եյի, չեցին հասկանում: Ռուսի, Նեմեցի, Թրանցուզի լեզվումը ինչ բան վոր կարգում եյին, նրանց՝ անմեղ հոգուն ել եյին ենպես բաները գիր գալիս: Ուզում եյի շատ անդամ մաղերս պոկեմ՝ վոր ես ոտար լեզուքը ավելի եյին սիրում, քանց մերը»:

Յեվ այսպես, խնդիրը լուրջ եր, դրությունը կը իտիկական: Պետք եր յելք գտնել, յելքը գտնվեց: Արովյանի ձեռքով գերեզման զբվեց վազուց մեռած, բայց իր գոյությունը մի կերպ քարշ ավող զրաբարը: Հին, մեռած լեզվի գերեզմանափորը միաժամանակ դառավ նոր լեզվի տատմայրը: Վոտնատակ տալով դարերի տրագիցիան, Արովյանը ժողովրդի կենդանի լեզուն, վոր արհամարհված եր ու մերժված, զերադասեց վսիմ զրաբարից: Այսպես ծնունդ առաջ Արովյանի «Վերք Հայաստանի»-ն: Առաջին անգամ դարերի լուրթյան կնիքը վերցվեց ժողովրդի շուրթերից:

Հիշենք Արովյանի հայունի խոսավանությունն այն մասին, թե ինչպես զրաբարը կապել կաշկանդել եր նրա միտքը, և թե ինչպես աշխարհաբարը փշրեց այդ կապանքները, թեվ ու թուիչք տվեց նրա մտքին, յերեվակայությանը և ստեղծագործությանը, «Վերքի» առաջարանում՝ կարդում ենք. «Ինչ խուը կորած, մոլորած մտքեր ունեյի, բոլորը քացվել յեղ եյին յեկել: Նոր եյի իմանում, վոր գրաբառ ու ուրիշ լեզվներ մինչ չեվ են սհաթը միաբառ փակել բխովել եյին».

Արովյանն ինչպես բոլոր հարցերում, նմանապես և այս խնդրում մի յելակետ ե ունեցել, մի շահ և հետապնդել՝ դա բուս ժողովուրդն եր ու նրա շահը: Արովյանը գրում եր ժողովրդին հասկանալի լինելու համար և այդ անում եր նույնիսկ այն ժամանակվա «գիտունների» աշքին տղետ յերեվալու ոխկով:

«Թո՞ղ ինձ այսուհետեվ տղետ կանչեն. լեզուս բաց ա ելել՝ իմ ընտիր, աղիզ, իմ սրտի սիրեկան ազգ: Թո՞ղ՝ տրամաբանությունի պիտեցողը իրան համբյարի համար զըի, յես քո կորած, թյուն զիտեցողը իրան համբյարի համար զըի, Արովյանը մտահոգված եր, վոր շվաբած վորդին՝ քեզ համբար»: Արովյանը մտահոգված եր, վոր եր գործը «մեր խալիսի սրտով ըլի»: Գիտուն մարդիկ շատ եր գործը «մեր խալիսի սրտով ըլի»:

զրքեր են կարգում, ժողովաւրդներ, վոր զուբկ և ընթերցանությունից, հասարակ մարդն ե, վոր կարգալու գիրք չունի: «Ֆեռուրա կամ վորդիական սեր» զրամատիկական յերկի առաջարանում գրում ե, «Հույս ունիմ, վոր ամեն մարդ ենդուր համար ավելի հավետվ կարգա, չունքի մեկ դժար բառ չկա միջումը՝ բոլորն աշխարհարատ ա: Մահսուս ես լեզվովը գրեցի, վոր գիրքը իքն ել հասկանան, քաղաքացիք ել: Միթե գեղըցին մարդ չի, չի ուզի՞ վոր մեկ նոր բան ել նա լի կամ կարգա: Ելի խոսողը թողիոսից, Վճռականապես սահմանագծվելով իշխող գասակարգից և նրա մտավորականությունից, արհամարհելով նրանց կարծիքը, Արովյանն իր կյանքը, իր բախար, իր սեղծագործությունը կապում ե ժողովրդի հետ, զառնում նրա արտահայտիչը: «Թե պիտուն, խելք մարդիք, ինձ պախարակեն, զու ել ա ինձ պահի՞ սիրելի ազգ, չունքի իմ ուզածու են ա, վոր քեզ ծառայիմ, քեզ իմ կյանքս տամ, քանի շունչս բերնումս ա»:

\*  
\*\*

Վորքան և տարրինակ ե այս, բայց փաստ ե, վոր մեր լեզվարանները գեուս Արովյանի լեզվական հայացքները հատուկ քննության առարկա չեն դարձել բատ յերեվույթին առանձին կարեփորություն չտալով այս ինուրին: Ավելին, յերբ նրանք փորձ են արել ցույց տալ զրական հայերենի մշակման պատմությունը, Արովյանի անունը մի կողմն են թողել սկզբանիվ, թե՝ նա չի բարձրացել բուն ժողովրդի լեզվից—բարբառից, զբական լեզու ստեղծելու փորձ չի արել, զրական հայերենի մշակման գործում գեր չի խողացել:

Մեր լեզվաբաններն այս զեւը վերագրում են միմիայն «Հյուսիսափայլ»-ին, անտեսելով Արովյանի կատարած հսկայական աշխատանքը, և այդ վոչ թե ձեռքի տակ անհրաժեշտ փաստեր չունենալու պատճառով, այլ շնորհիվ այն բանի, վոր նրանք հարցին մոտեցել են կանխակալ կարծիքներով և հրապարակում յեղած նյութերը անհրաժեշտ լրջությամբ և ուշագրությամբ չեն ուսումնասիրել: Յեթե մեր լեզվաբանները բարեխիզան կերպով ուսումնասիրեյին միմիայն «Վերք Հայաստանի»-ն, այդ ել բավական կլիներ համոզվելու համար՝ թե վորքան մտածված ու ծրագրված

և յեղել Արովյանի մղած պայքարը պրաբարի դեմ և թե նու  
վորքան լուրջ և վերաբերվել հայ լեզվի ապագայի հարցին:

Խնդիրը նրանում չե, վոր Արովյանով աշխարհաբարի և  
Գրաբարի պայքարը չավարտվեց ու վերջնականապես չապահով-  
վեց աշխարհաբարի հաղթանակը, այլ նրանում, վոր Արովյանը  
դրեց մեր լեզվաշխնության հիմնական հարցերը և իր ժամանա-  
կին լուծեց միանգամայն ճիշտ կերպով, յելնելով մեր ժողովրդի  
պահանջներից ու շահերից: Արովյանի յերախտիքը այս հարցում  
համարվել է այն, վոր նա առաջինը զբեց ժողովրդի լեզվով:  
Այն ինչ, հեղինակի թե արգեն հայտնի և թե նոր ձեռք բեր-  
ված նյութերը մեղ հիմք են տալիս միանգամայն նոր յեղբա-  
կացություն անելու: Սկսելով ժողովրդական լեզվի գործածությու-  
նից, Արովյանն իր ստեղծագործություններում համառոքն մշա-  
կել ու փոփոխել է այն և վերջին շրջանի իր յերկերում ստեղծել  
է այնպիսի գրական լեզու, վորին կարողացավ հասնել միայն  
70-ական թվականների գրական հայերենը:

Հիրավի, Արովյանի «Վերք Հայաստանի»-ն գրված և բուն  
ժողովրդի լեզվով՝ Քանաքեռի բարբսոսով: Արովյանն անգամ չի  
խուսափել տաճկերենի և պարսկերենի ահազին ազդեցությու-  
նից, սակայն նույն այդ զբանագում արտահայտելով իր անբա-  
վականությունը «Վերք»-ի լեզվից, նա տվել է մեր լեզվի հե-  
տապահ զարգացման մի ամբողջական ծրագիր, վորի առաջին  
Դորձնական կիրառողը հենց ինքն և հանդիսացել:

«Վերք Հայաստանի»-ի առաջարանում Արովյանն իր վեպի  
լեզուն համարում է խակ լեզու, մանկական թոթովանք և կոչ  
և անում ազգին սիրել այն «ինչպես հերը իր մանուկի կմկմա-  
լը, վոր աշխարքի հետ չի փոխիլ»: Սակայն, ինչպես թոթովախռո  
մանուկն ապագայում դառնում ե պերճախռոս յերիտասարդ, ճիշտ  
այլպես ել ժողովրդի նոր ստեղծվող կուլտուրան, որա հետ մեկտեղ  
և լեզուն, իր ոկզրնական աստիճանից, պարզ ու պրիմիտիվ վիճա-  
կից պիտի աներ, բարձրանալ՝ դառնալով խորը և բովանդա-  
կալից: «Յերբ վոր կմեծանամ, խրթին լեզվով ել կխոսանք», —  
ասում ե Արովյանը: Այսպիսով, ժողովրդի կուլտուրական մա-  
կարդակը աստիճանաբար պիտի բարձրանար, հեղինակը նրա-  
նից չպիտի կտրվեր, այլ իր հետ նրան ևս պիտի վեր բարձր-  
նացներ, հասցնելով կանոնավոր մշակված գրական լեզուն հաս-

կանալու, այդ լեզվով արտահայտվելու մակարդակին։ Լեզվի զարսցացումը պետք է զուգահեռ ընթանաբ ժողովրդի զարդացմանը, նրա կուլտուրական աճին։ Արովյանը պարզ ըմբռնում եր, վոր «մեկ աղջ ընչանք յերկար ժամանակ կրթվի վաչ, ուսմուն չհետեւի, անկարելի ա, թե նրա միտքը ենակն բացվի, ու նրա դյորա բաներ հնարի»։

Իտալական հանձարեղ բանաստեղծներ՝ Գանտեյի և Պետրաքայի՝ մայրենի գրականության համար կատարած պատմական գերն և Արովյանն աչքի առաջ ունեցել հայ գրական լեզվի հարցը քննութիւն, նրա ապագան ուրվագծելիուց «Յերանի են սհաթին, — զրում և Արովյանը, — վոր մեկ ազնիվ հայի ծնունդ՝ իմ անպիտան լեզվի վրա բարկանա, իմ անովիտան գրությունը գեն քցի ու ինքը նորեն ենակն զրի մեր քաջ հայերի պատմությունը, վոր լուղ, կարգացողը վասվի, բորբոքվի, զարմանա, հիանա ու են զրովի զարամն ու գիրքը ինչպես Պետրաքինը՝ մասունքի անդ պաշտի, ծոցումը պահի»։ Վերոհիշյալ տողերից յերեփում ե, վոր Արովյանի համար «Վերք»-ի լեզուն նպատակ չի յեղել այլ ժամանակավոր միջոց իր նպատակների համար, իսկ նպատակը կուլտուրայի և լուսուվորության պրոպագանդն եր ժողովրդին հասկանալի լիզով։ Նա զիտակցում եր, վոր հայ լեզվի կատարելության համար յերկար ճանապարհ պետք եր անցնել։ Լեզվի կուլտուրան պիտի բարձրանար ժողովրդի կուլտուրական աստիճանի հետ մեկտեղ։ «Պարապ վախտի խաղալիք»-ի առաջարանում խոսելով իր առակների և զբանք զբելու շարժառիթի մասին, ավելացնում ե, «Հույս ունիմ, վոր ուրիշ մարդիկ դհա լավը շինհն»։ Սա ևս նույն անբավականությունն ե, ինչ վոր «Վերք»-ի նկատմամբ արտահայտածը։

\* \* \*

Մեր լեզվի այն ժամանակվա-վիճակը լուրջ մտահոգություն և պատճառել Արովյանին։ Ոտարամուտ բառերն զգալի առկոս կազմելով, լուրջ վտանգ եյին սպառնում նրա զոյտաթյանը. կորչում եր լեզվի իսկական պատկերը, լեզուն աղավազվում եր։ Լեզվի այսպիսի վիճակն Արովյանը ճիշտ կերպով բացատրում ե մեր ժողովրդի քաղաքական գրությամբ։ «Ժամանակն ենակն ենակն ծովել եր մինչեւ հիմա, վոր մարդ իր գլուխը չեր

կարում պահիլ, ուր մնա լեզվի գարդը քաշիլ ես ապատճառը՝  
վոր մեր նոր լեզվի կեսը թուրքի ու Պարսից բառ ա»: Քիչ ներքե  
Արովյանը գրում ե. «Ենքան ա նրանց լեզվի համը ընկել մեր  
տպգի բերանը՝ վոր խաղ, հեքյաթ, առակ թուրքերեն են ասում,  
իրանց լեզուն թողում, պատճամա. չունքի սովորություն ա ըն-  
կել»: Յեվ այդ սովորությունը վերացնելու նպատակով Արով-  
յանը մայրենի լեզվով բայաթիք և հորինում ժողովրդի համար:

«Պարագ վախտի խաղալիք» առակների գրքի վերջում ա-  
վելացնելով «Բայաթիք» բաժինը, առաջաբանում Արովյանը հե-  
տեղյալ կերպ և մեկնում իր գիտակորությունը: «Բայաթիքը են  
մաքով եմ զրել վոր չունքի մեջլսում, հացի վրա թուրքեվար  
են հնապես բաներ ասում. լավ հայը հայեվար ասի, վոր քիչ  
քիչ լեզուն քաղցրանատ, չունքի վոչինչ բան լեզուն ենքան չի  
քաղցրացնիլ վորքան խաղ ու տաղը»:

Արովյանին լուրջ անհանգստություն և պատճառում ևս մի  
խնդիր, գա տիրող շրջաններում բուն զրած այն մվասակար  
սովորությունն եր, յերբ խոսելիս հայերենին անտեղի կերպով  
խառնում եյին ոռուսերեն բառեր, և այն ել այնպիսի մեծ չափով,  
վորից անձունի կերպով աղավաղվում եր թե՛ հայերենը և թե՛  
ոռուսերենը:

Այս անհանգուրժելի գրությունը Արովյանը սուր կերպով  
ծաղկում է իր «Վերք Հայաստանի» վեպում:

«Ախր վոր ասում ես՝ փրոքուլիվարսա արի, սեռւշնա յեմ,  
ովիժաքսա ելա, փոռշենի տվի, սանյաքին շատ ունիմ, զլուխս  
քրութիւնցա ելավ, փեզչեստնի մարդ ա, ոասիոյնիկ ա, յափերնիկ  
ովմին ես, գնանք բուփարսա ըլինք, սոփրանիյեմեն եմ գալիս,  
փոռիզբատսա արին, ձամփին փսերքի ուրսպին յա, շատ խլա-  
փոք սլուշիւնցա չի ըլում և այն: Աչքի լիս՝ մի մտածիլ թե  
լսողն ի՞նչ կասի: Խսկ զիտուն լուսավորյալ մարդն նա յե, վոր ամեն-  
լեզուն քանի կարա, խստակ խոսաւ Դու քո լեզուն՝ վոր խստակ  
խոսաս, ինչ զիտս ունի, հենց զիտում ես, խելքդ ձեռիցդ կառ-  
նեն, թե սովորած իմաստությունդ ջուրը կթափի, կամ թե չե-  
տերության սիրտն ես ուզում շահիլ Բարեխնամ տերությունը  
յերբ կուզի վոր մարդ իրան լեզուն կտրի, իր աղգիցը հեռանա:  
Բաս ել ուր են հսքան վարժատուն շինում, վարժապետ պա-  
հում, աստիճան, պատիվ տալիս: Ֆրանցուզ, նեմեց, ինգլիզ,

զիր քո լեզուն սիրում, գովում են, քանի պատիվ դու յել պետք ե սիրես ու գովիս»: Քիչ ներքեվ ավելացնում ե. «Եսքան իտառը լեզվի հետ, զու յել վո՞ քո պրոֆիլիվաթսան, մրովուլիվաթսան ես խառնում, ախար գրանից բնչ համ դուրս կդա»:

Անմատություն կլիներ կարծել, թէ Արովյանի վերը բերված տողերը վորեվի չափով վարկարեկում են ոռւսաց լեզուն կամ թէ նա գեմ եր ոռւսերենի տարածմանը հայերի մեջ: Արովյանն եր և մինչեվ վերջը մնաց ոռւսական կուլտուրայի և հատկապես ոռւսաց լեզվի ջերմ կողմնակից: Այդ ե՛ վկայում նրա արխիվում պահպանված «Նոր տեսական և գործնական քերականություն ոռւսաց վասն հայոց» ստվարածավալ աշխատությունը: Այդ գըրքի առաջաբանում պարզաբանելով իր նպատակը, Արովյանն ի միջի այլոց գրում ե. «Այս մտքով՝ վճռ լեզուն, լինի զա արելիկան կամ արևվայտյան, կարող ե այնպես նպաստավոր լինել մեր ազգին, քանի ոռւսացը, վորի միայն հարկավորությունը և չքնարությունը մեր ժամանակներում մինչեւ իսկ լուսավորյալ ազգերին ստիպում ե ձգտել ունենալ այն, ճոխանալ նրա մեջ, այլ և նամանավանդ նրա ընձեռնած բազմատեսակ ողուտը, վոր մեր ազգը ինքն ել տեսնում և ոգուտ ե քաղում, ինչպես արագունի ծառայության պաշտոնների մեջ, նույնպես և քաղաքական կենցաղավարության մեջ» (Թարգմանված գրաբարից): Նույն աշխատության «Հատկություն ոռւսաց լեզվի» բաժնում ասված ե. «Լեզուն ոռւսաց և մինն հընդարձակագույն և ամենահարկավոր լեզվաց ի վերա յերկրի»: Իր «Պատմություն Տիգրանի» վեպում Արովյանը ոռւսաց լեզուն պարտադիր ե դարձնում հայ մանուկների համար: Մայրենի լեզվից հետո ոռւսերենն առաջին անհրաժեշտությունն ե համարում իբրեւ մեծ կուլտուրա ունեցող մեծ ժողովրդի լեզու: «Մուսաց լեզուն մեր տերությանն ա, պետք ե ամենից առավել համարենք», — ասում ե նա «Վերք Հայաստանի»-ում:՝

Արովյանի խոսքը վերաբերվում ե լեզվի աղճատմանը և հայ «գիտառնների» արհամարհանքին զեպի մայրենի կուլտուրան ընդհանրապես և լեզուն մասնավորապես Դա միծապետական շովինիզմի արտահայտության մի ձեմք եր, վորի գեմ անհաշտ պայքարում եր Արովյանը:

Այսոր, ձեվով ազգային և բովանդակությամբ սոցիալիս-

տական կուլտուրահերի ստեղծման այս մեջ զարաշրջանում, այդ խնդիրն առավել քան ակառալ և զառնում, ավելի քան սրվում և կուլտուրական բարձրորակ լիգվի հարցը, հարց, վոր այնքան հուզել և Արովյանին: Նալբանդյանն ել Արավյանի պես խստ մտահոգված եր մեր լիգվի հստակության խնդրով: Թենության յենթարկելով Նորանախիչնվաճնի բարբառը՝ Նալբանդյանը նույն տիտր փաստն և արձանագրում, «Վողբալի և արտասակելվ բան, այն յերիտասարդ մարդիկը, վոր հարակցություն ունեն ուսւների հետ, տմենայն կերպ աշխատում են յուրյանց հայերեն խոսակցության մեջ վորքան կարելի յե շատ գործածել ուսւի բաներ, նոքա մտածում են թե վորքան այլանդակեն յուրյանց Եղուն սասարի բառերով, այնքան խելացի և բան հասկացող են համարվում»: Նալբանդյանը ևս Արովյանի պես խորազնում և այն թյուր և միամիտ կարծիքը, թե սասար բաների անտեղի գործածությունը գիտուն և կուլտուրական լինելու նշան եւ:

Լիզուների աղավազման պատկերն Արովյանը տալիս և հետեւ որպամիտ որինակով. «Խառներ քո սիրական խաշի հետ ձուկը, շաքար, կանֆետ (շաքարեղին), չամիչ, չիր, լիզողիլալա, տես լինչ համ կունենա»:

Մեր լիզվի այդպիսի վիճակը Արովյանն այնուամենայնիվ անհուսալի չի համարում. «Բայց սրա գեղն եւ հեղտ ա—գրում եւ նա «Վերը Հայտասահնի» վելում,—քիչ քիչ կորելի ա իստակել, յերբ վոր աղգը ուսումն առնի ու իր լիզվի բառերը քիչ քիչ հասկանա»:

Յեկ այսպիս, լիզվի մշակման ուղղությամբ առաջին քայլը պիտի հանդիսանար հայերենն աղավազումից փրկելը, քանի վոր լիզվի մաքրությունը լիզվական կուլտուրայի առաջին նախապայմանն եւ: Իրա համար ամենից առաջ պետք և սիրել մայրենի լիզուն, ջանք անել կատարելապիս տիրապահելու այն, չարչաւարհել այն՝ ուրիշ լիզուներ իմանալու գեղաքում: «Ենպես մարդկան, —գրում եւ Արովյանը «Լիզրում», —սասը տասնընինդ լիզու գիտի, ամա նա իր լիզուն միշտ ամենից լուզ աշխի, իրա աղցի հետ խոսելիս ամոթ ա համարում, կամ ուրիշ լիզվով իր միտքը ասի, կամ ուրիշ բառ հետը իտանի»: Այս զրական որինակով Արովյանը կատենում և դաստիարակել հայ յերիտասարդությանը:

Հայ լիզվի, զրականության և կուլտուրայի զարդացման

հույսն Աբովյանը կապում է յերխասարդ սերնողի հետ Հին ինտելիգենցիայից հուսախար յեղած, նա սիրո և խրախուսանքի ջերմ խսոքեր ե ուղղում հայոց նորահաս յերխասարզներին և իր բաղձանքը նրանց հայտնում, վոր մեր ժողովրդի բազմանքն եր «Ձեզ եմ տառւմ» ձեզ՝ հայոց նորահաս յերխասարդք՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արելին զուբրան, տասը լիզու սովորեցեք, ձեր լիզուն զայիմ բանեցեք... Բայ չեք ուղիւ վոր զուք ել զրքեր զբեք, ազգի միջումն անուն թողաք, ձեր զրքերն ել ոտար ազգեր թարգմանեն, ձեր անունը հավիայանս հավիանից մնա անմահ: Ինչ կուզե Ֆրանցուզերեն, Նեմեցերեն զիտենանք, մենք չենք կարող ենալու բան զրիւ, վոր նրանց միջումն անուն ունենա, չունքի նրանց միտքն, նրանց սիրտն ուրիշ, մերն ուրիշ, մեկ ել վոր նրանց միջումն ենքան զրող կան, վոր վնչ թիվ կա, վնչ հետաք... Բայ ձեր սիրտը չի ուղիւ վոր զուք ել վոտանսվոր զբեք, ձեր միտքը, ձեր խորհուրդը հայտնեք, վոր այլազգք իմանան, թե մեր միջումն ել ա յեղել յերեվելի զրող ու մեր լեզուն զհա ավելի սիրեն»:

Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպում մեր ժողովրդի կուլտուրական վերածնության մի ամրող շարժում ե ծրագրում, ազգային լեզվի և գրականության հետազա զարգացման ուղիներն ե նշում:

\* \* \*

Ինչպես վերն ասացինք, «Վերք Հայաստանի»-ից սկսած մինչեւ իր վերջին գործերն Աբովյանը վորոշ ծրագրով, հետեւզականությամբ, անընդհատ փոփոխել և մշակել ե լեզուն՝ զուտ բարբառաւայինից հասցնելով մշակված գրական հայերենի: Այժմ տեսնենք, թե ինչ հետեւզականությամբ ե ընթացել լեզվի մըշակման այդ պրոցեսը, ինչ ետապներ ե անցել լեզվաշինական իր սկզբունքների կոնկրետ կիրառումը սեփական ստեղծագործությունների մեջ: «Վերք Հայաստանի» վեպում, վորն աշխարհիկ գրականության մտնիքները հանդիսացավ, Աբովյանն անփոփոխ գործ ե ածում Քանաքեռի բարբառն այնպես, ինչպես վոր խոսում եր այն ժամանակվա քանաքեռցին: Սա մի գիտակցական պայքար եր զեռիս իշխող գրաբարի զեմ, մի զորել ապացուց ժողովրդի մինչ այդ արհամարհված լեզվի ուժի և կեղեցկության: Աբովյանի «Վերքում» իր արտահայտությունն ե գտել

ժողովրդի լեզվի թե ուժը և թե թուլությունը: «Վերքի» լեզուն  
դեռևս ձուլարան չտեսած, չտված այն հանքանյութն եր, փորից  
հետագայում ստեղծվեց մեր գրական հայերենի ձույլ վասկին:

Այսուհետեւ Աբովյանը ժողովրդի լեզուն ազատագրում է  
նրա մեջ չմերված ոտարամուա բառերից՝ պարսկերենից և տաճա-  
կերենից, վորոնցով այնպիս խճողված եյին մեր բարբառները:  
Այս շրջանի ձնունդ են «Թուրքի աղջիկը», «Ովսաննա»-ն,  
«Ամերկու լիս քցիլ» և բաղմաթիլ այլ, գեռեն չտպագրված գոր-  
ծեր: Այսպիսով իրագործվում է Աբովյանին այնքան մտահոգու-  
թյուն պատճառող լեզվի մաքրության խնդիրը:

Լեզվի մշակման ասպարիզում Աբովյանն առաջին անհրա-  
ժեշտ խնդիրն իրագործելուց հետո, ավելի համարձակ և վճռական  
քայլեր եւ կատարում: Նրա լեզուն այնուհետեւ գրականանալու  
նշաններ եւ ցույց տալիս: Սա մի փոխանցման շրջան ե, բարբա-  
ռայինից գրականին անցնելու միջանկյալ ետապ—յերկրորդ  
ետապը:

Այս շրջանի գործերում հաճախ միենույն պարբերության  
մեջ ժողովրդական ձեի կողքին մենք հանդիպում ենք զուտ գրա-  
կան ձեի գործածությանը. այդպիս են գրված «Նախաշավիլի կըր-  
թության» Ա., և Բ., մասերը, «Պատմություն Տիգրանի» մեծածա-  
վալ վեպը և ուրիշ շատ գործեր:

Բերենք մի որինակ, «Յերբ մարդ կամենում ա, վոր իր  
միտքը այլոց հայտնի, խոսում ե: Ուրեմն խոսել կնշանակե իր  
միտքը այլոց հայտնիլ:

Մարդ յերկու կերպ ե իր միտքը այլոց հայտնում, խոսելով  
յերբ մերձ ե, գրելով՝ յերբ լսողը հեռի յի:

Ինչ միտք ել վոր ունենամ, յեթե չասեմ բառով, այլք ա-  
մենեվին չեն հասկանալ ինձ: Ուրեմն թե խոսելիս և թե գրելիս,  
մարդ բառով ե իր միտքը հայտնում»: («Նախաշավիլի կըրթության»  
Բ. մաս):

Վերը բերված հատվածից պարզ յերեսում ե, վոր Աբովյանի  
լեզուն գգալի փոփոխություն ե կրել, բարբառը մեղմացել ե ու  
հղկվել վերջնականապես վերացել են մեր լեզվի մեջ իրենց տե-  
ղը չգտած ոտար բառերը:

Այստեղից մինչև մշակված գրական հայերենը մի քայլ եր  
մնում ե այդ կարեոր քայլն Աբովյանը կատարում ե:

Աբովյանի հարուստ՝ արխիվում պահպանվում ե Ժան-Ժակ

Թուսսոյի «Նոր Ելոփա» նշանավոր վեպի թարգմանության մի պատառիկը, վոր ինքնը ստիհնքյան չափազանց նշանակալից մի փաստ հանդիսանալով՝ հատուել կարևորություն ունի մանավանդ մեղ հետաքրքրող հարցի կապակցությամբ:

Ամենայն հավանականությամբ այս թարգմանությունը վերջին շրջանի գործ է և չի ավարտված հեղինակի կյանքի ձաւխորդ հանգամանքների և հանկարծահաս վողերգատկան վախճանի պատճառուիք: Թարգմանությունը կատարված է 40-ական թվականների համար միանգամայն անսպասելի գրական լեզվով: Բերենք մի հատված:

«Պետք եւ քեզանից հոռանամ, զշխո պատվական, իմ սիրտս լավ գգում եւ Պետք եւ քեզանից կամ միանգամայն հույսս կարեմ, կամ ավելի լավ եւ վոր յերեք քեզ չտեսնեմ: Բայց ինչ անեմ այժմ, ինչպէս համբերեմ: Դու ինձ քո բարեկամությունը խոստացել ես, քննի՞ր իմ դառը փիճակը և խորհուրդ տներ ինձ:»

Փաստը չափաղանց պերճախոս է: «Նոր Ելոփա» վեպի թարգմանությամբ լիզվի մշակման պրոցեսն Արովյանի մոտ թեվակոփելով նոր շրջան, ավտրովում է: Դժվար եւ յերեակայել, թե «Վերը Հայաստանի»-ն զրելուց ընդամենը ութ տարի անց նույն հեղինակը կարող եր գրել այսպիսի լիզվով: Այդ հոկայական տարբերությունը ցույց եւ տալիս, թե Արովյանը կարճ ժամանակամիջոցում, աւակաս քան մի տասնամյակ տեսլող գրական գործունեյության ընթացքում, համեմատաբար վորքան մեծ ձանապարհ եւ անցել: Վորքան ել փոքր ու աննշան լինի մեր ձեռքը հասած «Նոր Ելոփա» վեպի թարգմանության հատվածը, այնուամենայնիվ նա լրիվ գաղափար եւ տալիս այն մասին, թե ինչի հանգեց Արովյանը լիզվի մշակման գործում:

Սյայիս ուրեմն, հաշատուր Արովյանը 40-ական թվականների վերջերին ստեղծեց այնին մշակված, կուլտուրական մի լեզու, վոր հետագա 50—60-ական թվականներին յեկտ չգերազանցվեց մեր հեղինակների կողմից և միայն 70-ական թվականների գրական հայերենը հասավ այդպիսի մշակվածության:

\*

\*

Թեյել Արովյանի հարուստ և բազմազան ստեղծագործությունների խոշար մասը ժամանակին չհաստաբակվեց և չունեցավ այն նշանակությունը, վոր պատմականորեն վիճակված եր նրան, սակայն նրա լիզվական հայացքները, վոր այնքան պեր-

ճախոս կերպով արտահայտված են «Վերք Հայաստանի»-ի մեջ, խաղացին իրենց պատմական խոշոր դերը: Մեր կարծիքով «Հյուսիսափայլ»-ի գործիչները, այդ թվում հատկապես Միքայել Նալբանդյանը, իրենց լեզվաբանական հայացքները մշակելիս չխուսափեցին Արովյանի վորոշ աղքեցությունից: Նալբանդյանն իր լեզվաբանական հայացքներով նույնանում է Արովյանի հետ: Նրանց յերկուսի մոտ հիմնական խնդրի յելակետը և լուծումը նույնն ե, պայմանավորված միևնույն աշխարհահայացքով և գասակարգային միենույն շահերով: Յերկուսի մոտ ել յելակետը ժողովուրդն ե, նրա արդեն հրամայական դարձած կուլտուրական պահանջների բավարարումը:

Պատահական չե, վոր Նալբանդյանը Արովյանի «Վերքի» լեզուն պաշտպանում է «Արեվմուտք» լրագրի խմբագիր Սահման Վուկանի հարձակումներից, միանգամայն ձիւտ կերպով մեկնաբանելով վիպասանի միտումը. «Արովյանցի խորհուրդը և դրել անտես, վոր անկիրթ ժողովարդը չկարծե թե դիրք և կարդում, այլ կարծե թե մի մարդ խոսում եր յուր հետ»:

Եեվի հարցը անկախ և ինքնուրույն մի խնդիր չեր, այլ մեր ժողովրդի կուլտուրա-լուսավորական շարժման մի կարեվոր մասը:

Թե Արովյանը և թե Նալբանդյանը, շատ լավ ըմբռնելով այդ մոմենտը, իրենց լեզվաշինական զործունեյության ընթացքում առաջնորդվեցին ժողովրդին մատչելի լինելու սկզբունքով: Նրանք չարհամարհեցին ժողովրդի լեզուն, չխուսափեցին այդ լեզվի թիրություններից, այլ համարձակ ոգտագործեցին՝ դարձնելով այն զրական նոր լեզվի ատաղձը:

Արովյանը և Նալբանդյանը լեզվաբանության ասպարիկում վոչ միայն հանդիսացան ամենագեմոլիքատական անսության մշակողները, այլ և այդ տեսության ամենահետեւ վողական պրակտիկ կիրառողները: Յեթե Արովյանը գեղարվեստական խոսքի բնագավառում հայ լեզուն բարձրացրեց այնպիսի մակարդակի, վոր նրա զարգացումը կանխեց մի քանի տասնամյակ, ապա նույնը կատարեց Նալբանդյանը հրապարակախոսական, քաղաքական և գիտական լեզվի բնագավառներում:



**Խմբ. Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

**Տեխ. խմբ. Խ ԽԱՉՄԱՏՅԱՆ**

**Ռըբագրիչ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**Գլավլիոնի լիազոր՝ Կ-2495 Պատվեր 313, տիրաժ 2500**

**Հանձնված և արտադրության 29 հուլիսի 1939 թ.**

**Ստորագրված և տպագրության 10 սեպտեմբերի 1939 թ.**

**Թուղթ 60×43, տպագր. մամուլ 6, մեկ մամուլում 36. 480 նիշ:**

**Թանկավարժական Ինստիտուտի տպարան, Մաքքսի փ. № 17, Ցերեկան 1939 թ.**

ԳԱԱ Հրանտիկ Գրիգորյան



220031517

1  
31517

122 - 581 122